

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՆԼԵՊ, ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1932

ԹԻԻ ՀՀ-ՉՑ-ՉԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Առաջին Հնգամեակին Վերջը

Նոր Դարը

ՏՐ. Ճ. Է. ՄԵՐԻԼ

Տ. Ճ. Խ.

ՀՈԳԵՆՈՐ

Ամանորի Օրհներգ

Արուեստագետը

Կոչ մը

Անունի մը Պարունակութիւնը

Կայծեր

ԲՐՈՑ. Յ. Թ. ԳԱՅԱՆԱՆ

ՎԵՐ. Ե. ՀԱՏԻՏԵԱՆ

ՎԵՐ. Ա. ՔԱՐԼԹԸՆ

ՀԱԻԱՔԵՑ՝ Յ. ՊԱԼԵՕԶԵԱՆ

ԵՕԴՈՒԱԾՆԵՐ

Ինչո՞ւ Կ'ամուսնանան

Յեղի Ազնուացում

Նոր Ճառագայթը

Պաղեստին Նահապետաց Օրով

Կոյր Զափարիա

Բրիտանացի մը Դաւանանքը

Անանիա Շիրակացի

Մանուկները Ի՞նչ կը Սորվին

Մեր Խաղերը

Օր. Ա. Նահանգը

Շահեկան Նօքեր

Տեսեսական Նօքեր

ՊԱՏ. Յ. ՉԱԳՄԱԳՃԵԱՆ

ՏՈՔԹ. Ա. ՃԵՊԷՃԵԱՆ

ՏՈՔԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ՎԵՐ. ՆՂԻԱ ՔԱՍՈՒՆԻ

ԽՕՍՆԱԿ

ՎԵՐ. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ՌՇՏՈՒՆԻ

Բ. Յ. ՄԱՐԲԸՄ

ՏՈՔԹ. Յ. ՅՈՎՆԱՆԵԱՆ

ՊԱՏ. Կ. ՖԱՐԱՃԵԱՆ

ԹՈՎՍԷՓ ՄԻՆԱՍԵԱՆ

ԶԱՆԻՑ ԷՋԸ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏԳԱՐԱՆ ԴՈՒՆ ԶԱՆԻՑ

Արժանատի Վեր. Կ. Յ. Յարուքիւնեան

Պաշտասխանացու Խմբագիր Տիգրան Ճ. Խրոյքեան

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ. տարեկան քաժնեգինը՝
Սուրիոյ համար 150 Ղրշ. Ս. արտասահման 1.50 տոլար

ՄԵՐ ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒՆ ԲԱՐԵՀԱՃ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

1. Այն յօդուածագիրները որ ծածկանուն կը գործածեն, պէտք է իրենց ինքնութիւնը ճանչցնեն խմբագրութեան.
2. Յօդուածներու առաւելագոյն սահմանն է երկուք ու կէս էջ (Նոր Աւետարան) կամ 1000 բառ, բայց ատկադպական պարագաներէն:
3. Հոլերը պէտք է գրուին ամփոփ և կարճ:
4. Այս պայմանները չլրացնող գրութիւնները անխնայ կը կրճատուին:
5. Յօդուածները պէտք է գրել մերձեցող, թուղթին մէկ էջին վրայ և գիրը ընթերցելի, հակառակ պարագային կը մնան անտպա:

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Ներկայ թիւով կը վերջանայ «Նոր Աւետարան»-ի հիմնդրորդ տարին: Բայց կուզենք հոս յայտնել թէ մեր կամէն անկախ պատճառներով ստիպուած եղանակ ոչ թէ կանոնաւոր կերպով ամէն 15 օր անգամ մը հրատարակել թերթը այլ երբեմն զոյգ թիւով ամիսը անգամ մը, եւ այս անգամ երեք թիւերը մէկէն հրատարակել: Այս ակամայ անկանոնութիւններուն համար ներողութիւն կը խնդրենք մեր յարգելի ընթերցողներէն:

(Շարունակութիւն էջ 404 հն)

համար չեն ապրիր: Անոնք մատուցանելիք ծառայութիւն մը եւ պատգամ մ'ունին պաշտօնագէտ իրենց չկապուողներուն: Թերթի մը նպատակն է լուրեր հաղորդել եւ հանրային կարծիքը առաջնորդել: ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ արդեօք չի կրնա՞ր գործածել այս ծառայութիւնը աւելի ընդարձակ շրջանակին մատուցանելու համար: Միտքերու մէջ հինգ տարի

առաջ այսպիսի ընդարձակ նպատակ մը չկար: Բայց այսօր երբ մեր բոլոր միջավայրը զիտենք, գործ չկա՞յ ընդարձակ աշխարհահայեացքով աւետարանական շարժումի ոգիով խմբագրուած, որ հանրային կարծիքը առաջնորդէ Սուրիոյ մէջ մեր հասարակաց կեանքին բոլոր կենսական հարցերուն մէջ:

Ճ. Է. ՄԷՐԻԼ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1932

ԹԻԻ 22-23-24

ԱՌԱՋԻՆ ՀԻՆԳԱՄԵԱԿԷ ՎԵՐՋ

Սուրբոյ Հայ Աւետ. Միութիւնը 1926 ին որոշեց պարսեւթերթ մը հրատարակել, և կարգեց հինգ հոգիներէ բաղկացեալ մասնախումբ մը ասոր ընթացք տալու համար: Մասնախումբին առջև երեք մեծ հարցեր կային. — Խմբագիր մը, կառավարական արտօնութիւն և գրամ: Նախկին Աւետարեան հրատարակչները բարեհաճօրէն մեզ արտօնեցին ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ անունը գործածելու: Եւ սակայն երբ տարի մը վերջացաւ իւր տեղիկագիր կարելի եղաւ միայն ծրագրեր և գծաւորութիւններ ներկայացնել: Տակաւին յաջողութեան յոյս կար, և Միութիւնը մասնախումբս պարձեալ հաստատեց իր պաշտօնին մէջ:

Երկրորդ տարին թերթը սկսաւ հրատարակուիլ: Կ. Թ. Գոլէճի (Այնթապ) մէկ ուսումնաւարտը, Տիար Տիգրան Խրչոբեան, որ ճիշտ նոյն տարին Աթէնքի կրօնական վարժարանը կ'աւարտէր, Միութեան Հալէպի Շրջանի վարչութեան կողմէ հրաւիրուեցաւ իր ուղղութեան տակ գործելու, ժամանակին կէսը յատկացնելով նոր թերթի խմբագրութեան: Վեր. Կ. Յ. Յարութիւնեանի առնուով կառավարական արտօնութիւնը առնուեցաւ: Հալէպի մէջ Պորտի գանձապահը թուղթին ծախքը վճարեց: Գոլէճի տպարանը տպագրութեան գործը ստանձնեց հաշիւը բաց պահելով: Այս պայմաններու տակ ճնոր Աւետարեանի առաջին թիւը լոյս տեսաւ:

Գործը նոր էր թերթին յարարերակից ուէ անձին համար: Ամէն ընթերցողը սր տեսնել թէ թերթը բարեհաւուսի կը կարօտէր: Եւ սակայն սկզբնաւորու-

թիւն մը եղած էր, և ասկէ ետքը խընդիրը թերթը պարզացնել էր: Տարի մը ետքը թերթը փոխանակ մէկի երկու եղաւ, հայերէն և տաճկերէն լեզուներով:

Բաժանորդներու ցանկէն միայն մասամբ կարելի է ըսել թէ ընթերցողները որոնք են եւ քանի՜ հատ են: Անկասկած ենք որ ճնոր Աւետարեան հանրութեան կողմէ, թէ Սուրիա և թէ արաւմական, հետզհետէ աւելի գնահատուցաւ: Կարգ մը լուրերու համար միակ աղբիւրն է ան:

Բաժանորդներու թիւը և անոնցմէ եղած զանձումները աստիճանաբար աւելցած են, բայց ասիկա բաւական եղած չէ թերթը ինքնապահ ընելու համար: Դրամական հարցը միշտ ալ շատ լուրջ և սուր հանգամանք ունեցած է և թերթին գոյութեան սպառնացած է: 1927-28էն ետքը Հալէպի Շրջանի վարչութեան համար կարելի չեղաւ իր օգնութիւնը շարունակել: Յաջորդ երկու տարիներու միջոցին Պաղատի մէջ Պորտի հրատարակչական բաժնին կողմէ օգնութիւն եղաւ: Բաժանորդներու վճարումները՝ թուղթի ծախքը և խմբագրի թուակին մէկ մասը ապահովեցին, և տպարանը ստիպուեցաւ իր հաշիւը բաց պահել առանց ուէ հատուցումի:

Յօդուածագիրներու թիւին մեծնալը ուշագրաւ պարագայ մը եղած է: Այս կը ցուցնէ թէ Միութիւնը թերթին մէջ իր օրկանը կը տեսնէ, և թէ Միութեան շրջանակին մէջ գաղափարներու տէր և զանազան արտայայտելու կարողութիւնը և փափաքը ունեցող այրեր և կիներ կան: Մէկ խօսքով Միութիւնը ընդունակու-

թիւնն ունի այսպիսի թերթ մը վարելու :

Թերթը գնահատելու մէջ ասոր համապատասխան զարգացում մը ցոյց տրուեցաւ Միութեան կողմէ, 1931ի և 1932ի իր տարեկան ժողովներուն մէջ իր կայացուցած սրոշումներովը . մեծ հարցը ինչպէս որ ըսուեցաւ, զրամական էր :

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ խմբագրական պարզ ուղղութեան մը հետեւեցաւ, որ էր Աւետ. եկեղեցիներու ներկայացուցած հազդեոր շարժումին պաշտօնաթերթը ըլլալ, այս շարժումին հոգեւոր նպատակը և կորիզը շնչուել, այս շարժումով բոլոր շահագրգռողներուն ազատ ընձեռքով շնչելու, նոյնիսկ երբ անոնք կը տարբերին իրենց գաղափարներուն մէջ, վիճաբանութենէ խոյս տալ, իրարու մասին լուրերու փոխանակութեան ծառայել, եկեղեցիներու աշխարհահայեացքը ընդլայնել՝ աշխարհի կրօնական լուրերուն առատ տեղ տալով :

Նոր Տարուան մուտքին առջեւ հետեւեալ կէտերը միտք կուգան :

1. Միութեան եկեղեցիները ամէն տարի կը զարգանան իրր միացեալ կենդանի մարմին մը ըլլալու գիտակցութեան մէջ : Նոր Աւետարան այս մարմնի մէկ գործիքն է, որով եկեղեցիները իրարու մասին ծանօթանալով աւելի սերտօրէն կը միանան, և որուն միջոցաւ աւետարանական շարժումը կը յայտնուի աշխարհի : Եթէ կը փափագինք որ թերթը զարգանայ և այս նպատակները իրականացնէ, մեզմէ ամէն մէկը պէտք է օգնէ իր կարողութեան սահմանին մէջ :

Կանոնաւորապէս կարդանք թերթը, ուրիշներու մեզի ըսելիքը գիտնալու համար : Լուրերով և յօդուածներով օժանդակենք թերթին, և այս կերպով խօսինք ուրիշներու : Եթէ կ'ուզես որ թերթը աւետարանական հոգեւոր շարժումին աւելի ճշմարիտ ներկայացուցիչը ըլլայ, այս մասին բաժինդ կատարէ :

2. Եթէ ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ Ամերիկահրատարակուէր իր ներկայ ծախքը պիտի քառապատկուէր, Եւսակայն զրամական խնդիրը տակաւին չէ լուծուած : Թերթին կրօնամտացոյցը ինչպէ՞ս պիտի հաւասարակշռուի : Բաժանորդներու թիւը կրնայ աւելնալ : Ծանուցումներէն հասոյթ մը կրնայ ապահովուիլ : Այս երկու աղբիւրներէ ալ հասոյթի աստիճանական յաւելումը կ'ակնկալուի : Բայց միեւնոյն ատին արդեօք կարելի չէ՞ Միութեան եկեղեցիներուն և անհատներուն կողմէ թերթին բոլոր պիւտճէն կանխիկ ապահովել : Եթէ հասոյթը տարեկան բոլոր ծախքերը գոցէ, չատ լաւ : Բայց եթէ չի գոցիր, անոնք որ թերթին պիւտճէին երաշխաւոր եղած էին պէտք են իրենց խոստումին համեմատութեամբ բացը գոցել : 1926ին այս ծրագիրը առաջարկուած էր, եւ կարգ մը եկեղեցիներ գումարներ խոստացած էին հաւանական բաց մը գոցելու, բայց վերջը այս մտցուած էր :

3. ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ Միութեան կողմէ հաստատուած է եկեղեցիներու ծառայութեան համար, եւ ծառայած է անոնց : Բայց եկեղեցիները իրենք իրենց (Շարունակութիւնը կը 462 ի թակը)

ՆՈՐ ԴԱՐԸ

Յիսուսի Ծնունդովը մարդկային լորովին նոր ուղղութիւն մը տալու : պատմութեան մէջ մտաւ անձնաւորութիւն մը, որ սահմանուած էր անոր բնական կարգ մը մարդիկ քրիստոնէական դարձելու : իր կողմէ պատմութեան այն չըջանալի որ

կը սկսի Պաղեստինի խոնարհ մէկ խորշին մէջ մարդկօրէն շատ անշուք պարագաներու տակ պատահած այս զէպքէն, և կ'երկարի մինչև օրս: Անշուշտ որոշ չափով մը իրաւացի է այս որակումը, որ սակայն մեծ հսկասութիւն մը կը պարունակէ նաև: Յիսուսի Մոնենդը հովիւներուն աւետող հրեշտակին հետ երկնային զօրքերու բազմութիւն մը երկեցին: Վերկինքի բարձրութեան մէջ Սատուծոյ փառք, ու երկրի վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն: Քրիստոնէական դարը, սակայն, մարդկութեան համար խաղաղութեան դար մը չեղաւ: Կրօնքի անունով քրիստոնեաներ բարբարոսաբար զիրար բզքտեցին, և ոչքրիստոնեաներու դէմ յիմարական արշաւանքներ կազմակերպեցին: Ներկայիս քրիստոնէական կոչուած աշխարհը, և քաղաքակրթութիւնը այլանդակ խառնուրդ մըն է հեթանոսական և քրիստոնական ըմբռնումներու, սովորութիւններու, որոնց տիրական գիծն է եսասիրութիւնը իր բազմազոյն ձեւերով: Անձիս, խմբակիս, եկեղեցիիս, ազգիս շահը ամէն բանէ գերադաս համարելու և ուրիշ անձի, խմբակի, եկեղեցիի, ազգի, երկրի շահը առնուազն անտեսելու միտումը, աւելի մեծ բառերով ազգայնամոլութիւնն կամ կայսերապաշտութիւնը ներկայ կեանքին սպառնացող մեծագոյն վտանգը կը կազմէ: Քրիստոսի կատարելապէս հաւատարիմ մնալ ջանացող մը անպատճառ պիտի տառապի այսպիսի աշխարհի մը մէջ:

Ներկայ պաշտօնական եկեղեցին ինքզինքը մեծ չափով յարմարեցած է այս քրիստոնէական կոչեցեալ քաղաքակրթութեան հետ: Բայց մարդկային կեանքի ակնաբախ թշուառութիւնը, թէ՛ նիւթական և թէ՛ հոգեւոր, անհանգիստ կ'ընէ իր խիղճը: Այս կացութիւնը դարմանելու համար պաշտօնական Քրիստոնեայ եկեղեցին դարերէ ի վեր գործածած

միջոցը եղած է ողորմութիւնը: Միայն Պոլտուն, Անգլիոյ մէջ ձմեռուան միջոցին անգործ դասակարգին թշուառութիւնը ամօքելու համար կ'առաջարկէ որ ունեւորները մէկ մէկ ընտանիքի ապրուստը ապահովեն իր Մոնենդի նուէր: Ամերիկայի մէջ հայ քրիստոնեաները իրենց կարօտ եղբայրներուն օգնելու համար տօնավաճառ մը կը սարքեն: Հոս և ուրիշ տեղեր շատ մը եկեղեցիներ իրենց բարի սովորութեան համեմատ տուներէն գործածուած հագուստներ և ուսեստի պաշար կը հաւաքեն աղքատներուն բաշխելու համար: Անշուշտ ասոնք դնահատելի են, բայց ողորմութեան սահմանէն ալ անդին չեն անցնիր: Պաշտօնական քրիստոնէութեան, պաշտօնական եկեղեցիին և եկեղեցականին գերազոյն առաքիւթիւնն ըլլալ կը թուի ողորմութիւնը, որ իբր աժան մուտքի տոմս կը գործածուի Երկնից Թապաւորութիւնը մտնելու համար: Մեր ունեցածէն փչուր մը տալով, մեր ժամանակին, ոյժին, խելքին, հոգիին, ինչքին մէկ ջնջին կոտորակովը արքայութիւնը ծախու առնել կը յաւակնինք: Մեր եկեղեցիները, դպրոցները, հոգեւոր ամէն կերպ հաստատութիւնները կը կառավարենք ողորմութեան սկզբունքով: Աշխարհի ներկայ պէտքը զոհանքելու համար ողորմութիւնը ա'լ անգործ է: Աստուած մարդկային ողորմութիւն չուզեր:

Աստուած Յիսուսի ծնունդովը իր առաւելագոյնը նուիրեց, զոհեց թշուառ մարդկութեան համար: Եւ Ան կը պահանջէ որ մարդն ալ իր առաւելագոյնը ընծայէ իրեն և իր սիրած մարդկութեան: Ահա այս է մտերին պատգամը: Քրիստոնեական դարը ողորմութեան դարն է, Քրիստոսի դարը բոլորամեկտեղ զոհողութեան, կատարեալ սիրոյ դարն է, զոր հոգեակները աւանդին Բեղիկեանի մեջ:

ՕՐՀՆԵՐԳ ԱՄԱՆՈՐԻ

1. Բեզ, Հայր, փառք կուսանք ursանց
 Նոր Տարւոյն համար,
 Որ մեզ տուի իբր անգին գանձ
 Բարեաց անհամար:
 Մենք որդիք ենք անօրէն,
 Դուն՝ զըթած, բարի,
 Կ'ընծայես արդ հայրօրէն
 Մեզ մի Նոր Տարի:
2. Նոր տարւոյն սեմին վերայ
 Մեր ոսկեր շուարին.
 Հոն յոյսի մէջ կ'երեւայ
 Ամպ մը խաւարին:
 Վա՛ս կամ յա՛ւ կամ միջա՛կ
 Մեր բաժնիկն ըլլայ՝
 Կ'ընդունինք, Հայր, այդ վիճակ,
 Թող Քու կամօք ըլլայ:
3. Ով Հայր, Բեզ կը յանձնենք արդ
 Մեր օրերն համբուն.
 Տոյց տուր ջահով մը զուարթ
 Վիհերն մեր ճամբուն:
 Մեր սրտն շնորհէ կորով,
 Եւ իղձեր բարի,
 Որ մեր շուրջ սրբոնենք գորով,
 Լոյս տանք աշխարհի:
4. Միշտ Բեզի մեր այլն յառած՝ Ուր ամէն ինչ է նոր, պերճ,
 Մեր կեանք թող սահին. Ու սուրբ մանաւանդ,
 Ձրի շնորհօք հասնինք փառաց՝ Պիս՝ ըլլայ մեր գործն անվերջ
 Մօտ Քու սուրբ գահին, Փառք տալ սուրբ անուանդ:
 Հեղ. Թ. ԳԱՅԱՆԱՆ

Խ. Ծ. «Նոր Աւետարանի աշխատակիցներէն Բրոֆ. Թ. Թ. Գալսեան այս առթիւ մեզմէ կը խնդրէ հետեւեալ երկու հարցումներն ընել:

Նախ՝ վերեւ տպուած «Ամանորի Օրհներգ»-ը իր հեղինակութիւնն է և ոչ՝ Թարգմանութիւն, ինչպէս սխալմամբ տպուած է նորատիպ Հոգեւոր Երգարանին 414-րդ էջին վրայ:

Յետոյ՝ անբացատրելի սխալով մը՝ նոյն երգարանին Տիրոջ Ճանքան խորագրով երգին Թարգմանիչ նշանակուած է (վեր.) Եղիա Փաստուհի, փոխանակ Թ. Թ. Գալսեանի (էջ՝ 388 և 389):

ՁՈՀԱԲԵՐՈՒՈՂ ԱՐՈՒՆՍՏԱԳԷՏՐ

Ֆրից Քրիսթլըր, որ թերեւս աշխարհի մեծագոյն ջութակահարն է, առիթով մը սապէս ըսած է:

«Ի՞նչ հրաշափութիւնս ստացական չէ, զայն ուրիշներէն չեմ սորված. ես երաժիշտ մը ծնած եմ: Տակաւին այրութիւնը չսորված բնագոյային կիրպով ձայն երբեք չառնաւորութիւններուն հմուտ էի: Ասիկա Նախախնամութեան մէկ շնորհն է ինծի, այնպէս որ ես նոյնիսկ ինքզինքս արժանի չեմ սեպեր երաժշտութեանս պատճառաւ մարդոց ինծի յայտնած շնորհակալութեան:

«Երաժշտութիւնը այնչափ նուիրական է որ ներելի չէ զայն ծախսեալ հանել: Եւ այսօր հռչակաւոր երաժշտագէտներու իբր վարձք ընդհանուրէն

մեծ գումարներ առնելը մարդկութեան դէմ ոճիր է:

«Շահած դրամս երբեք իմ չեմ նկատեր, քանզի ան հասարակաց է: Եթէ ճոխ կերակուր մը ճաշեմ ինքզինքս բարոյապէս յանցաւոր կը զգամ: Քանզի կը խորհիմ թէ այս կերպով կը զրկեմ մէկը շերտ մը հացէն, թերեւս մանուկ մը գաւաթ մը կաթէն: Սիրելի կ'իմս ալ ճիշդ ինծի պէս կը խորհի եւ կը զործէ: Դուք զիտեք թէ ես ինչ եմ եւ ինչ կը հագնիմ: Երաժշտութեան մէջ իբր թէ յաջողութեամբ անցուցած բոլոր այս տարիներուս միջոցին մեկի համար տուն մը շէնքիցինքս: Քանզի էյր այս մասին կը խորհինք աշխարհիս բոլոր անտունները մեր սէքին սովեալ կուգան:»

ԿՈՉ ՄԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ

Ամերիկայի Աւետարանական եկեղեցիները Հոկտեմբերի առաջին շաբաթը աղօթքի եւ ապաշխարութեան յատկացուցին: Շատ մը եկեղեցիներու մէջ խոր բաղձանք մը կայ հոգեւոր արթնութեան համար: Ամէն տեղ ողջամիտ քրիստոնեաներ սա համոզման եկած են, թէ ներկայ նեղութեան, տառապանքի եւ տնտեսական տագնապի իրական պատճառը բարոյական եւ հոգեւոր է, մեր ցանածը կը հնձնէ: Մարդիկ հիմա կը պաշտեն շատ մը կուռքեր, — դրամ, հաճոյք, ազգայնամոլութիւն, տեսանելի եւ շօշափելի բաներ: Սուրբ բաներու հանդէպ յարգանքի պակասութիւն, առանց աշխատանքի տիրանալու մեծ ճիգ մը կը տեսնուի:

Մեր մէջ կ'իշխեն անհաւատարմութիւն, խաբեքայութիւն, անիրաւութիւն,

հաճոյամոլութիւն, ապերախտութիւն, փառասիրութիւն եւ կրօնական անտարբերութիւն: Ազգային մեղքեր ունինք որոնց համար տակաւին չապաշխարեցինք: Անբացատրելի տանջանքներու, տառապանքներու մէջէն անցանք, շատ զոհեր տուինք: Մեր երկիրը աւերակ դարձած է, մեր տունները կրակով այրուած են. օտարները մեր արտերը կուտեն մեր աչքերուն առջեւ... Եթէ զօրաց Տէրը մեզիքիչ մը մնացող թողուցած չըլլար...» բոլորովին բնաջինջ կ'ըլլայինք: Տէրը կ'ըսէ. «Ո՞ր մասերնուդ վրայ կրնաք զարնուիլ, երբ ա'լ աւելի ապստամբիք: Բոլոր գլուխը հիւանդ եւ բոլոր սիրտը ճարած է: Ոտքին թաթէն մինչեւ գլուխը բնաւ անոր վրայ ողջ տեղ չմնաց: Հարուածներ, վէրքերու շարաւալից խոցեր կան:» Զարնուելիք տեղ չէ մնա-

յած, բայց տակաւին անցեալէն դաս չ'առինք, տակաւին անցեալի կրակներէն անցնելով չ'աքուեցանք, տակաւին չ'ապաշխարեցինք:

Եկեղեցիներն ալ ախտով վարակուած են. փտութիւնը անոնց մէջ ալ սկսած է, փոխանակ աշխարհիս վրայ աղ և լոյս ըլլալու իրենք աշխարհիկ դարձած են: Փոխանակ անապատը պարտէզի փոխուելու՝ պարտէզը անապատի փոխուած է: Աշխարհը դիւք գրաւած է եկեղեցիին մէջ, բնմին վրայ, ժողովներու և եկեղեցիի անդամներուն մէջ: Վա՛յ այն կառավարութեան որուն մէջ թշնամին գողտնօրէն դիրքեր գրաւած է:

Եկեղեցիին փոխանակ աշխարհէն բաժնուելու, Բրիտոսը յայտնող միջոց մը ըլլալու, Քրիստոսի ճշմարիտ մէկ վկան ըլլալու իր կոչումը մոռցած է: Եկեղեցին թէպէտ և միայն ապաշխարութեան, փրկութեան և հոգեւոր կեանքի համար հաստատուած ոյժ մըն է, և սակայն իր նպատակէն շեղած է և ընկերային միջոցներով բարեկարգելու կ'աշխատի: Եկեղեցիի մէջ ազօթքի և աւետարանչութեան հոգին տկարացած է. խօսք չատկայ ոյժ երբեք չկայ, վարդապետութիւն չատ է, կեանքը՝ չատ տկար: քարոզ և խրատ չատ է, ազօթքի հոգին մարելու վրայ է:

Արդ իբր եկեղեցիներ և իբր ազգ պէ՛տք է ապաշխարինք և հի՛մա պէտք է ապաշխարինք: «Տէրոջ սաստիկ բարկութեան օրը չհասած ինքզինքնիդ քննեցէք: Ծոմապահութեան օր նշանակեցէք: Մեծ ժողով կանչեցէք: Ծերերը և երկրին բոլոր բնակիչները Աստուծոյ տունը հաւաքեցէք: Աստուծոյ աղաղակեցէք: Ունայն ընծաներ և ազօթքներ մի՛ մատուցանէք, իմ աչքերուս առջեւէն ձեր չար գործերը մէկտիւ ըրէք: Տէրը ուզեցէք, արգարութիւնն ու խոնարհութիւնը փնտռեցէք: Եթէ ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս են, ձեռնի

պէս պիտի ճերմկնան և եթէ որդան կարմիրի նման են ասոր պէս ճերմակ պիտի ըլլան: Արդարութեամբ շարժել և ողորմութիւնը սիրելէ և խոնարհութեամբ Աստուծոյ հետ քալելէ զատ Տէրը քեզմէ ի՞նչ կը պահանջէ»:

Տէրը եկեղեցիներուն կ'ըսէ. «Այսպէս կ'ըսէ Անիկա որ իր աջ ձեռքին մէջ եօթը աստղերը ունի, ու եօթը ոսկեղէն աշտանակներուն մէջ կը պտըտի, որ Առաջինն ու Վերջինն է, որ մեռաւ ու կենդանացաւ, որ սրած երկբերան սուրը ունի, Աստուծոյ Որդին որ կրակի բոցի պէս աչքեր ունի ու իր ոտքերը ոսկեպղինձի նման են, որ ունի Աստուծոյ եօթը Հոգիները ու եօթը աստղերը, այն Սուրբը, այն ճշմարիտը որ Դաւիթի բանալին ունի և կը բանայ ու մէկը չկայ որ գոցէ, և կը գոցէ ու մէկը չկայ որ բանայ, այն Ամէնը, հաւատարիմ և ճշմարիտ Վկան, Աստուծոյ արարածներուն Սկիզբը»:

«Ան որ ականջ ունի թող լսէ թէ Հոգին ի՞նչ կ'ըսէ եկեղեցիներուն»:

Ո՞վ Սարգիսէի նմանոյ եկեղեցիներ, որ անուն ունիք թէ կենդանի էք ու մեռած էք, արթուն կեցէք ու ապաշխարեցէք:

Ո՞վ Լաւոյէկէի նման ո՛չ պաղ և ո՛չ առք եկեղեցիներ, զուք որ կ'ըսէք, «Հարուստ ենք ու մեծցանք, ու բանի մը կարօտ չենք», բայց չէք գիտեր թէ խեղճ ու թշուառ էք, աղքատ ու կոյր ու մերկ, նախանձաւոր եղէք ու ապաշխարեցէք:

Ո՞վ զուք թիւատիրի նման վախկոտ եկեղեցիներ, որ թող կուտաք որ ոմանք եկեղեցին մոլորեցնեն, արթուն կեցէք ու ապաշխարեցէք:

Ո՞վ զուք Պերգամոնի նման ուրիշները գայլակղեցնող և սխալ վարդապետութիւններու ասպարէզ տոբող եկեղեցիներ, ապաշխարեցէք:

Ո՞վ զուք Եփեսոսի նման նախկին սէ-

րը ձգող եկեղեցիներ, ապաշխարեցեք:

Ո՛վ դուք Ձմիւռնիոյ նման նեղութեանց և հալածանքներու մէջ հաւատարիմ մնացող եկեղեցիներ, մինչև մահ հաւատարիմ կեցեք:

Ո՛վ դուք Փիլագելփիայի նման խօսքն պահող և զիս չուրացող եկեղեցիներ, ձեր ունեցածը ամուր թռնեցեք:

Եթէ չապաշխարհս քու աշտանակդ իր տեղէն պիտի չարժեմ, քերնիս սուրովը պիտի պատերազմիմ, պիտի ձեզեմ... մեծ նեղութեան մէջ... գործերուն համեմատ պիտի հատուցանեմ, գողի պէս քու վրագ պիտի դամ ու բռնաւ պիտի չգիտնաս թէ ո՞ր ժամուն պիտի գամ, քեզ բերնէս դուրս պիտի փոխեմ:

Ան որ հաւատարիմ կը մնայ եւ կը յաղթէ, անոր ուտել պիտի տամ կենաց ծառէն որ Աստուծոյ դրախտին մէջ է: Եւ Երկրորդ մահէն պիտի չվնասուի: Անոր կենաց թագը կուտամ: Պահուած մանանայէն ուտել պիտի տամ անոր, եւ այն խնձին վրայ նոր անուն մը գրուած զոր մէկը չի գիտեր բայց միայն այն որ կ'ընդունի: Անոր իշխանութիւն պիտի տամ ազգերուն վրայ, (և պիտի հովուէ զանոնք երկաթէ գաւազանով. անոնք բլուտի ամաններուն պէս պիտի փշուրն) ինչպէս եւ ալ իմ Հօրմէս առի, ու անոր պիտի տամ առաւօտեան աստղը: Եւ Երեմիայի պիտի հագնի, ու եւ անոր անունը կենաց գիրքէն պիտի չաւերմ, և անոր անունը պիտի դաւաճիմ իմ Հօրս առջեւ ու Անոր հրեշտակներուն առջեւ: Քեզ պիտի պահեմ փորձութեան ժամանակ, որ պատրաստ է գալու բոլոր աշխարհի վրայ: Զայն իմ Աստուծոյ տաճարին մէջ սիւն պիտի ընեմ, և ալ դուրս պիտի չելլէ, և անոր վրայ պիտի գրեմ իմ Աստուծոյ անունը, ու իմ Աստուծոյ քաղաքին անունը, այսինքն նոր Երուսաղէմի, որ երկինքէն իմ Աստուծէս կ'իջնէ, և իմ

նոր անունս: Անոր հետ ընթրիք պիտի ընեմ, ան ալ ինծի հետ: Ինծի հետ իմ աթոռս նստիլ պիտի տամ անոր, ինչպէս եւ ալ յաղթեցի ու իմ Հօրս աթոռ նստայ:

Ան որ ահանջ ունի, թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն:

Արդ՝ ապաշխարութեան և ազօթքի կը հրաւիրենք բոլոր եկեղեցիներն ու գործիչները: Նախ միացեալ ազօթքի կը հրաւիրենք բոլոր Աստուծոյ զաւակները որ կարօտաբաղձ են Աստուծոյ հետ հաղորդակցութեան և անմահ հոգիներու փրկութեան: Այսպիսիներ ամէն տեղ վերնաւան հաւաքոյթներ թող կազմակերպեն և մէկ սիրտ մէկ հոգի ըլլալով ազօթքի շարունակեն, ըսելով. Ո՛վ Տէր, տարիներու մէջ քու գործդ նորոգէ, ո՛վ Տէր ո՛չ թէ իմ այլ քո՛ւ գործդ նորոգէ: Իմ և ընտանիքիս մէջ, եկեղեցիիս և եկեղեցիներուն մէջ, ազգիս մէջ և բոլոր աշխարհիս վրայ քու գործդ նորոգէ:

Ապա բոլոր ժողովուրդի համար և զայն ապաշխարութեան և փրկութեան հրաւիրող ու բոլոր շարաթը տեւող ազօթաժողովներ սարքուին: Աստուած՝ իր խոստումին համեմատ՝ պիտի պատասխանէ միաբանութեամբ և հաւատքով կատարուած ազօթքներուն, և իր հոգիէն յորդառատ օրհնութիւններ պիտի տեղացնէ մեր վրայ, և Տէրը իր գործը պիտի նորոգէ: Արդ՝ Անոր որ կարող է առատութեամբ ընել ամէն բաներէն աւելի՝ զոր մենք կը խնդրենք կամ կը խորհինք, իրեն փառք եկեղեցիին մէջ Քրիստոս Յիսուսով բոլոր դարերուն մէջ յաւիտեանս յախտենից. ամէն:

«Ո՛վ Տէր, տարիներու մէջ Քու Գործդ նորոգէ, ո՛վ Տէր, տարիներու մէջ Քու Գործդ նորոգէ, Ո՛վ Տէր տարիներու մէջ Քու Գործդ նորոգէ:»

2 Դեկ. 1932

Տէրոջմով

ձեր եղբայրը

ԵՆՈՎՔ Ա. ՀԱՏԻՏԵԱՆ

Պեյրուք

ԱՆՈՒՆԻ ՄԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Շատ մը լեզուներու մէջ առածներ կան սագադափարը յայտնելու թէ Վարդ թր ոեւ անունով նոյնչափ անուշ կը հոտի ւն Եւ սակայն բաւական երկար ժամանակ պէտք է անցնի մինչեւ որ մարդիկ սովորին սգոռնկ* անուն գէշ հոտ բուրոյ կենդանին վարդ կոչել և վարդը սգոռնկ կոչել:

Անունի մը՝ զօրութեամբ հասկցուած նշանակութիւնները տեղի և ժամանակին համեմատ մեծապէս կը տարբերին: Վերստոնեայո՞ւ բառը հախ Անտիոքի ժողովուրդին կողմանէ՝ գործածուեցաւ արհամարհելու համար Յիսուսի աշակերտները որոնք իրենք գիրենք «այդ ճախէն քաղովներ» կը կոչէին: Այս բառը վերջը Յիսուսի հետեւորդներու կողմէ՝ ընդունուեցաւ և ներկայիս աշխարհի մեծագոյն կրօնական հաւաքականութիւնը նշանակելու համար կը գործածուի իր սկզբնական իմաստէն բոլորովին տարբեր ըլլալով: Առկէ վատ աշխարհագրական տարբերութիւններ ալ կան: Անգլիոյ մէջ իբր «քրիստոնեայ մը» ճանչցուիլ յարգանքի մեծագոյն չափին արժանի ըլլալ ըսել է, մինչդեռ կեդրոնական Արարիոյ մէջ արհամարհանքի արժանանալ կը նշանակէ:

Խնդիրը աւելի կը բարդանայ երբ կը տեսնենք որ նոյն բառը տարբեր մարդոց կողմէ, նոյնիսկ նոյն խմբակցութեան մէջ, տարբեր իմաստներով կը գործածուի: Մէկը ինքզինքը քրիստոնեայ կը կոչէ քրիստոնեայ ընտանիքի մը մէջ ծնած ըլլալուն համար: Ուրիշ մէկը չ'ընդունիր թէ «Վերստոնեայ» կոչուած ընտանիք մը գոյութիւն ունի,

մինչեւ որ անոր ամէն մէկ անդամը իր հասկցած ձեւով քրիստոնեայ ըլլայ: Երրորդ անձ մը ինքզինքը քրիստոնեայ կը նկատէ քրիստոնեայ երկրի մը մէջ բնակած ըլլալուն համար, մինչդեռ չորրորդ մէկը չ'ընդունիր թէ այսօր իրապէս քրիստոնեայ երկիր մը գոյութիւն ունի և կ'ըսէ թէ միայն եկեղեցիի անդամները իրաւունք ունին այս բառը գործածելու: Խնդիրը հոս ալ չի վերջանար: Բանդի կարգ մը եկեղեցիներ իբր իրենց անդամները կ'ընդունին բոլոր տնոնք որ իրենց կապուած ընտանիքներու մէջ ծնած և իրենց կողմէ՝ մկրտուած են, մինչդեռ ուրիշ կարգ մը եկեղեցիներ անդամակցութիւնը բացառիկ արտօնութիւն մը կը նկատեն, զոր ստանալ կարելի է հասուն կեանքով մը և անոր արժանի ըլլալը ցուցնող երկար փորձէ մը ետքը: Այս խնդիրը մասնաւորապէս կ'նճռուէ Մերձաւոր Արեւելքի մէջ, երկարատեւնէ ի վեր տիրող «համայնք» ի գաղափարին պատճառաւ, որուն մէջ կրօնական և քաղաքական յարաբերութիւնները իրարու խառնուած են: Մարդ մը կրնայ քրիստոնեայ «համայնք» ի մը տնդամը ըլլայ, և ինքը միեւնոյն ատեն քրիստոնեայ մը չ'ըլլալ: Ասիկա կարելի կը թուի, քանզի մէկը քրիստոնեայ համայնքի մը պատկանելով հանգերձ կրնայ իր անձնական գաղափարներուն մէջ բոլորովին անաստուած մը ըլլալ: Մէկ խօսքով «քրիստոնեայ» բառին այնքան շատ նշանակութիւններ կրնան տրուիլ որ մէկը կրնայ ըսիլ թէ ա'լ ան գաղափար է ոեւ ընդունչ և չոչափելի իմաստ մ'ունենալէ:

Ներկայ դարուս սկիզբը վաճառականական մէջ շատ մը գրողներ «քրիստոնեայ» բառը մէկ ուրիշով փոխանա-

* Սգոռնկ կամ սէգանկու ամերիկեան հընդիկներու լեզուով բառ մըն է, իր նշանակած կենդանին երբ ուզէ շատ գէշ հոտ ունեցող հեղուկ մը կ'արտահոսէ:

կել փորձած են: Ներկայիս Ամերիկայի և Անգլիոյ մէջ Յիսուսի հետեւող և Յիսուսի կրօնքէն բացատրութիւնները «քրիստոնեայ» և «քրիստոնէութիւն» բառերէն կը դանազանուին:

Հիներու տեղ նոր բացատրութեանց գործածութիւնը երկու շահեր ունի: Առաջինը նոյնինքն այս երկու բառերուն տեղ մէկէն կը ըզխի, քանզի ան ուշադրութիւն կը գրաւէ, և աւելի իմաստը կը շեշտէ: Երկուքին մէջ ալ Յիսուսի կեդրոնական տեղ կը տրուի: Մինչդեռ երբ քրիստոնեայ բառը յիշուի ո՞վ Քրիստոսի մասին կը խորհի:

Այս նոր բացերու երկրորդ և աւելի մեծ շահը առ է որ անոնք մասնաշատուկ իմաստ մը ունին, և հին բառերու տրուած իմաստի քոչոր տարբեր ձեւերն ալ չունին: Յիսուսի հետեւողն մ'ըլլալ Անոր գաղափարականներուն և ուսուցումներուն և Անոր առաջադրած ապրելու կերպին, ճամբային ու ոչ կերպով անձնատուութեան հարց մըն է: Նոյնը չիտակ է նաև «Քրիստոնէութեան» բառին տեղ գործածուելիք «Յիսուսի կրօնքը» բացատրութեան համար: Եստ մը քրիստոնեայ եկեղեցիներ կան որոնց Յիսուս չի կրնար անդամակցիլ: «Քրիստոնէութեան» մէջ այնպիսի տարբեր կան, որոնց դէմ խօսեցաւ Յիսուս Փարիսեցիներուն հետ ունեցած իր պայքարին մէջ: Պէտք է Յիսուսի կրօնքին դառնանք:

Քրիստոնեայ ժողովուրդի մը մէջ շատեր կան որոնք չեն կրնար եկեղեցիին կապուիլ առաքելիւթ թէ շատեր եկեղեցիին մէջ անուշով միայն քրիստոնեայ են և Յիսուսի սկզբունքներուն համեմատ չեն ապրիր: Քրիստոսի թագաւորութեան մեծ նշանն դէմ մեծ աքղիւք մը կը հանդիսանայ անուշով քրիստոնեաներու կեանքը: Հետեւաբար «Տէրը սիրողները» լաւ կ'ընեն եթէ նոր բառ մը ընտրեն Անոր հանդէպ ի-

րենց հաւատարմութիւնը արտայայտելու համար:

Այն տեղեր ուր քրիստոնեաները փոքրամասնութիւն կը կազմեն, օրինակի համար Մերձաւոր Արեւելքի մէջ, նոր անունի մը օգտուը աւելի մեծ է: Ափրիկէի մէջ տեղ մը կայ ուր «քրիստոնեայ» բառը մէկ դար առաջ գերեւաճառութեամբ գրաւող և տնտեսական առարկայ հղած Եւրոպացիները ըսել է: Հոն Յիսուսի հետեւողները իրենք զիրենք «Աստուծոյ ցեղը» կը կոչեն, Յիսուսի մասին իբր փրկեց անդրանկ եղբայրը» կը խօսին: Մերձաւոր Արեւելքի հրեաներուն և իսլամներուն մէջ շատեր կան որ անձնական կեանքով Յիսուսի նուիրեալ հետեւողներն են, բայց «քրիստոնեայ» բառին վրայ արհամարհանքով կը նային: Սյուրի մէկը Թուրքիոյ մէջ ինքզինքը ոչ թէ «քրիստոնեայ» ալ «Իսլամիտ» (Յիսուսաւոր) կը կոչէ: Ներկայ քրիստոնեայ եկեղեցիներու հանդէպ իրենց յարաբերութիւնը երկար և ատիճանական բաժանման կը կարօտի:

Կարգ մը մարդիկ ասոր ճիշդ հակառակ եղող գաղափար մ'ունին: Անոնք կ'ըսեն. «Հին բարի քրիստոնեայ բառը պահենք, մեր կեանքով և մեր ուսուցումով անոր իրական իմաստը հասկըցնենք: Դարձեալ մենք չե՞նք թէ ինչ որ մենք հակցնել կ'ուզենք իրապէս իշխանական եղողն է: Յիսուսի կեանքն ու խօսքերը այնպէս ուսումնասիրենք որ ներկայ սերունդին կենդանի կերպով կարենանք պարզել թէ Անոր հետեւիլ իրապէս ինչ կը նշանակէ և Անոր կրօնքը իրապէս ինչ է: Որ տէսակէտն ալ ունենանք գոնէ մեր բռնները խորհելով գործածենք, և ուշադրութիւն ընենք որ իբր «Յիսուսի հետեւողները» «քրիստոնեայ» բառին պատիւ բերենք:

Մարտին

Ա. ՔԱՐԼԹԸՆ

ԿԱՅԾԵՐ

Վարպետ սուգակ մը, ծովոյն յա-
տակը ժայռի մը վրայ, ոտքէի հրկու
կեղեւն հրուն մէջ, թուղթի կտոր մը կը
դտնէ, ուր ապէս գրուած էր. «Ով որ
կը կարդայ այս, թող ապաշխարէ և իր
սիրտը Տէրոջ նուիրէ»:

Ծարպիկ լուսորդը այս կարճ հա-
տուածին ընթերցումէն վերջ կ'ընէ.
«Ես Աստուծոյ դէմ պիտի չկենամ, քա-
նի որ Անոր շնորհքը զիս ծովուն յա-
տակն ալ գտաւ. ինծի կ'երեւի թէ իմ
մեղքերս ծովուն ջուրերն ալ ապակաւ
նած են: Ահա հոս, ես կ'ապաշխարեմ և
Աստուծոյ կ'աղաչեմ որ ինծի օգնէ»:

Այս վերստին ծնած անձը հինգ
տարի հոգեւոր կեանք ապրելէ հաջ-
որդ է. Ապաշխարած օրէս ի վեր եր-
բեք տխուր չեմ հղած»:

* * * Մարնի Ժակատամարտին մէջ՝ զօ-
րավար Ֆոշ, խիստ ճակատագրական մի
վայրկեանին սա լուրը կը զրկէ՝ ընդ-
հանուր հրամանատար զօրավար Ժոֆ-
րին. «Իմ բանակին ալ թիւը նահան-
ջած է, ձախ թիւը հաղթած է և կեղ-
րունը ջախջախուած. բայց ես նորէն ե-
րեք խումբերուն գէպի յառաջ արշաւե-
լու հրամանը տուի»:

Ահա հաւատարմարդուն մը խօսքը
որուն ներկայ եկեղեցիներ մեծապէս կը
կարօտին: Եկեղեցիներ իրենց տապ-
նապալից և դժուարին բոպէներուն
մէջ, իրենց հողեւոր գործունէութիւն-
ները միմիայն Տէրոջ հաւատալով կը ց-
նան յառաջ տանիլ:

* * * 1897 թուականին մէջ յաջող գործողու-
թիւն մը կատարուած էր կարողութիւն-
ներու ձեռամբ, մարդկային սիրտին
վրայ: Գործողութենէ ետք բոլոր հի-
րէն մին սա խօսքը ըսած է. «Մարդկա-
յին սիրտին ճամբան մէկ մատնաչափ
կրկայն է. բայց բոլորէն 2400 տարի-

ներու արագ ունեցան զայն գտնելու
համար»:

Կէս դար՝ քրիստոնէական Զանից
Ընկերակցութիւններ երիտասարդ սիր-
տեր փնտռած են և յաջողած են ներ-
կայացնելու Յիսուսին սիրտեր, որոնք
գարմանալի կերպով բժշկուած և փոխ-
ուած են. ահա հոս կը կայանայ ամէն
հոգեւոր ընկերակցութեան պարտաւա-
նութիւնը:

* * * Նշանաւոր բժիշկ մը, Լոնտոն,
չքաւոր մարդուն մը վրայ գործողութիւն
կատարելու արհեստն՝ յանկարծ Ծրան-
այէն հեռագիր մը կը ստանայ՝ թէ շու-
տով գայ հարուստ հիւանդի մը վրայ
գործողութիւն կատարելու համար:
Բժիշկը իր հիւանդին վէրջերը քննե-
լով հանգերձ օտաւէ կը պատասխանէ.
«Հիմա զբաղած եմ, չեմ կրնար գայ»:
Հարուստ հիւանդը երբ գայ կ'իմանայ,
և խորհրդէ հիմա կը հասկնամ թէ ինչ
է պարտականութիւնը, կ'արտայայտ-
ուի մեծ հիպոստով:

* * * Յայտնի գաղաւթ մը ըսած է.
«Հինգ ու կէս տարի դատաւորութեան
միջոցին ինծի ներկայացուած 3000 դաւ-
տերու տէրերէն, Նիւ Յորքի Պրաքլին
նահանգին մէջ, ոչ մէկը եկեղեցւոյ ան-
գամ չէր»:

* * * Անգամ մը շոն Ուէսլիի մարդ մը
ներկայանալով ըսած է թէ իր միակ
տաղանդը յանդիմանել և սաստիկ է:

Ճ. Ուէսլին մարդուն կը պատասխա-
նէ. «Բարեկամ, այս տաղանդը պահէ
գոյնոցի մը մէջ եւ Դատաստանի Որդ,
անոր համար քեզմէ հաշիւ պիտի չպա-
հանջուի»:

Համբերութիւնը իւրաքանչիւր քրի-
ստոնեայի անհրաժեշտ յատկութիւնն է,
եթէ զայն կ'անտեսէ, իր մէջ ծնունդ
կ'առնեն բոլոր այն հակաքրիստոնէա-
կան յատկութիւնները որոնք մարդս կը
նուստանային:

Հաւաքեց՝ Յ. ՊԱԼԵՕԶԵԱՆ

ԻՆՉՈՒ Կ'ԱՄՈՒՄՆԱՆԱՆ

Ընկերաբանները չեն կրցած ճշգիւ ընտանիքին ճշգրիտ ծագումը, բայց կընդունին թէ մեր նախահայրեր շատ կանուխէն սընտանիք կոչւած ըլլաւ են :

Ընտանիքը ընկերութեան հիմն է իբր փոքրագոյն և հաստատագոյն ընկերային հաստատութիւն մը : Ընկերութիւնը հոն ծնած է : Հոն հայրը եւ մայրը իշխան ու քահանայ են : Կրօնքը հոն կը ծագի : Հոն՝ անհատ մանուկը առաջին անգամ կը սորվի անձի և ըստացուածքի իրաւունքը, անձնագրագրութիւնը, հնազանդութիւնն ու ծառայութիւնը : Հոն՝ կրօնք, բարոյականութիւն և մշակոյթ առաջին անգամ կ'երեւան ու իրենց անջնջելի տպաւորութիւնը կը թողուն մարդկային մշտքին վրայ : Անկէ կը բղխի այնպիսի ազգեցութիւններ որոնք ընկերային կարգ ու սարքը կը խրաչեն և կը յաւերժացնեն :

Ընտանիքը զանազան ձեւափոխումներ կրած է : Նախապէս՝ ընտանիքները «մայրապետական» (metronymic) էին՝ ուր սերունդը մօր անուամբ կը յորջորջուէր : Ներկայիս զարգացած գրութիւնը «հայրապետական» (patronymic) է : Ընտանիքը իր նախնական ձեւին մէջ կարճատեւ ընկերակցութիւն մըն էր, որուն համեմատ հայրը մօրը հետ կը քննարկէին ու անոր անդրադարձ կաւարկէին կտրուէր, ասկէ վերջ ընտանիքը լուծուած կ'ըլլար : Յետոյ սկսաւ խմբակցական ամուսնութիւն՝ ուր ամէն մարդ կնոջ ամուսինն էր և փոխադարձաբար : Այս սովորութիւնը Հաւայեան կղզիներու մէջ կը գտնուի հիմայ : Յաջորդ աստիճանն է բազմադասիւն ուրուն համեմատ կին մը մէկէ աւելի է :

Ընկեր կ'ունենայ, այս ձեւը թիպէթի և Հնդկաստանի մէջ տակաւին այսօր կը գտնուի : Բազմակնութիւնը յաջորդ ձեւն է : Միակնութիւնը վիջին ու բարձրագոյն ձեւն է, որ քաղաքակրթութեան մեծ չափանիշներէն մէկն է : Զարմանալի է որ ընտանիքի կազմութեան այս տարբեր ձեւերը գոյակից եղած են Յոյն և Արեւելի ցիւիլիզացիաներէն, ուր թէպէտ միակնութիւնը յարգելի սովորութիւն մըն էր :

Այս հզօր հաստատութիւնը՝ հրաշալիօրէն պաշտպանած է ինքզինքը ընդդէմ արմատականներու, անիշխանականներու, ազատ տէրի պաշտպաններու եւ ներկայիս համայնապարհներու դէմ :

Ծառալի իրողութիւն է թէ զանազան ազգակներ, հոգեբանական, տնտեսական, ընկերային, ֆիզիքական, կենսաբանական բարդ պատճառներ, սկսած են խախտել ընտանիքին նուիրականութիւնը : Ամերիկայի հօթը ընտանիքներէն մէկը կը լուծուի : Մեր մէջ «դժբաղդ» ընտանիքներու թիւը պակաս չէ : Այս կեցութեան պատասխանատուն առաւելապէս նիւթապաշտութիւնն է : Ամուսնական կիանքի սոսկ ֆիզիքական, նիւթական և ոչ-հոգեւոր առումը՝ ամուսնութենէ առաջ եւ վերջ՝ ամէնէն զօրաւոր հարուածը տրւած է ընտանիքին յարկին :

Մեզի՝ հայերու՝ համար ընտանիքը նուիրապետութիւն մըն է սուրբ և աստուածային : Նա Հայց. եկեղեցւոյ հօթը խորհուրդներէն մին է և անհատաբարմութիւնէ զատ անէ պատճառով անլուծելի է : Սբ. պապի արարողութեան վկաններն են պատկող քահանան,

Սբ. Աւետարանը և Սբ. Խաչը (կնքահօր ձեռքը)։ Աւետարանականներուն համար ամուսնութիւնը սուրբ է ինչպէս կեանքի ամէն մի մարդը և մասը։ Յաւալի է որ մեր մէջ ալ աւագակաս են այնքիսիներ որոնք ընտանիքը կը նիւթականացնեն կամ հեգնանքով կը քրննադատեն։

Անտարակոյս այսպիսի հաստատութիւն մը բարձր կոչում ունի և զայն պաշտպանել արտաքին արշաւանքներէ և ներքին ապականութիւնէ ամէնուս պարտքն է։ Ժամանակն է որ ծնողներ, դպրոցներ, եկեղեցիներ ու կառավարութիւններ սթափին աւ ընտանիքը վերահաստատեն իր նախկին գիւրքին մէջ։

Ընտանիքին պատշաճ գիւրքը տալու համար հարկ է ճանչնալ անոր բնոյթը, ամուսնական երջանկութեան և ապերջանկութեան պայմաններն ու պատճառները, ու զանոնք ուսուցանել մեր երկու սեռէ երիտասարդներուն՝ որոնք ապագայի հայրերն ու մայրերն են։

Նախ յիշենք կարգ մը ներդրողական պատճառներ՝ որոնք զիր ունին ընտանիքի կազմութեան մէջ։

1. Անձնական հանգիստի եւ խաղաղութեան փափաքը այրը կը մղէ ամուսնութեան։ Հաստատուելն մ'ունենալ ուր իր անուսինը միայն իրեն համար խորհի, իր կերակուրին, հագուստին, հանգըստեան և առողջութեան հոգ տանի։ Ընտանեկան յարկի խաղաղութիւնն ու հանգիստը ամուրին ի գուր կը փնտռէ թատրոնի, սրճարանի և ընկերներու մօտ։

2. Մանուկներուն, զաւկի սէրը (ծնողական բնագոյր) երկրորդ ազդակն է։ Հայրութիւն և մայրութիւն, ուրիշ

որեւէ բանէ աւելի կը հարստացնեն մարդկային կեանքը։ Մանուկ մը երկու ծնողաց խնամքին կը կարօտի։ Ընտանիքը մանկան շահերով շաղկապուած միութիւն մ'է։

3. Անձնաւորութեան լրումը երկորդ մի պատճառ է ամուսնութեան։ Ըսուած է թէ ամուրի մարդը մէկ երրորդ, ամուսնացեալը երկու երրորդ, մէկ զաւակի տէրը լման անձնաւորութիւն մըն է։ Ծնողքներ իրենց զաւակներուն և թոռներուն մէջ կեանքը կը վերապրին։ Երկու ամուսիններ իրարու պակասը լիցընելով ամբողջութիւն մը կը կազմէին։ Ամուսնացեալ ընտանիքին և զաւակներուն միջոցով կը վարժուին գործակցութեան, ճշգրտ եւ առնչող, համբերելու և տոկալու, ներհուս և սիրելու, ուրիշներուն համար գործելու և զոհաբերելու։

4. Կանանց համար՝ անտեսական կախում կամ կարօտութիւն զօրաւոր շարժառիթ մը եղած է ամուսնութեան։ Մինչև տասն և իննեւորորդ տարւոյ կիները անկարող էին իրենց ապրուստը ճարելու, և հակառակ իրենց կամքին՝ ընտրիպուած էին ամուսնանալու որպէս զի ապրուստի ազրիւր մը՝ միջոց մ'ունենային։ Այս դրութիւնը փոխուելու դատապարտուած է։ Քանի իգական սեռի զբաղումներ կը բազմանան և զանազան ասպարէզներ կը բացուին անոնց առջեւ՝ աչեւս կիներն ազգիկ մարդոց չափ անկախ կ'ըզգան իրենց կենակցին ընտրութեանը մէջ։

Վերոյիշեալ կէտերը որքան ալ կարեւոր ըլլան՝ ոչ մէկը բաւարար պատճառ մըն է ընտանեկան բոյն մը շինելու։ Անուրանալի ճշմարտութիւն է թէ ամուսնութեան գերագոյն զրգապատճառն է ՍԵՌԱՅԻՆ ԲՆԱԶԴԸ։ Ընտանիքին հիմիրը կենսաբանականն է, և մարդիկ որքան հոգեւորաբանան նոյնքան հոգեւոր-ընկերային նպատակակէտ մը

կ'ըլլայ ընտանիքը:

Ինքնապահպանում է ցեղապահպանում մարդկային երկու բնագոյեր են որոնցմէ վերջինը հիմն է ամուսնական կեանքի: Սեռային բնագոյը կեանքի մղիչ աշխարհէն հզօրագոյնը կրնայ կոչուել, սակայն եթէ ուղիղ ընթացքին մէջ չ'առաջնորդուի մարդկային կեանքը անասնական մակարդակին կ'իջեցընէ:

Եթէ պատանին ու հրիտաւարը սեռային առողջ պահպան կրթութիւն ստանան՝ ամուսնութիւնը անպակաս է ի փորձառութիւն յը կ'ըլլայ: Հասակաւ պարագային հրիտաւարը՝ կա՛մ անբարոյականութեան՝ կա՛մ ջղային անկարգութեան կրնայ առաջնորդուել:

Սեռային բնագոյին հանդէպ առնուած երկու դիրքերը—անզուսպ անառակութիւն և խստակիւ ճգնաւորութիւն—նոյնքան վնասարեւ եղած են մարդկութեան: Ժէկը ապականած ու ստորեացած է անգին անձնաւորութիւններ, միւսը ամուսնական դատապարտած է ամէն դարձ լաւագոյն միտքերէն ու մանք:

Երիտաւարը—երիտաւարագին առաջնական կեանքի պատրաստել մեծագոյն պարտականութիւն մըն է: Անոնց տղիտութիւնը կամ աղոտ աղբիւզներէ քաղուած տեղեկութիւններ, աւերներ ցործած են: Այս մասին մեր

բժիշկներուն, ծնողքներուն, ուսուցիչներուն, բեմերուն, կառավարութեանց լուսթիւնը անքաւելի մեղք մըն է ընկերութեան դէմ:

Սեռային բնագոյը որքան ալ հիմնական ըլլայ ամուսնութեան մէջ՝ մինչև որ ան չ'ընկերանայ սիրոյ՝ ընտանիք չ'կրնար կազմել: Շատ մը ամուսնութիւններ ձախողած են որովհետեւ տղութեան չ'ընտանք իսկ սիրը մոռցուած է: Սեռային բնագոյն ու սիրը անհրաժեշտ լրացութիւններ են երջանիկ ամուսնութեան համար:

Սեռային հարցը լուծելու համար ատրիբութիւն, սոս—սոստիտիս, ազատ—սիր մրցակցած են ընտանիքին հետ:

Բայց ո՛չ ճշմարտական ամուսնութիւնը, ո՛չ սոս—սոստիտիս (իմաստաբոյկ կեանքը) և ոչ ալ ազատ—սիր կրնան լուծել այս հարցը:

Անտարակոյ՝ ոմանք կանոններ հրաժարած են բնութեան այս պահանջը գոհացունել՝ ալ աւելի մեծ նպատակի մը՝ զեղարուեստի, գիտութեան կամ կրօնքի միջոցով մարդկութեան ծառայելու համար: Ասոնք գովելի են, որ կրնան ճշմարիտ սրբութեամբ վստահանել իրենց բնագոյական պահանջը՝ աւորոյթը գործածելով ալ աւելի բարձր ընկալողներու:

Հաղպ

Յ. Ա. ՉԱԿՄԱԴՅԵԱՆ

ՅԵՂԻ ԱԶՆՈՒՄՆՈՒՄ (EUGENICS)

Յեղի ազնուացումը այսօր աշխարհիս ամենահրատապ հարցերէն մէկը եղած է, անիկա թէև շատ կարևոր՝ բայց այնչափ պիտի դժուար պարզութիւն մ'է, անխոնջ հաշիւատանք և պայքարի կը պահանջէ:

Գիտականօրէն խորհելով բոլոր արարածները երկու ուղղութիւն միայն ունին, կամ դէպի ազնուացում կամ դէպի վատասեցում: Այն որ կ'ազնուանայ անոր աշխարհը կ'ընդլայնի, անոր նոր

գործունէութիւններ, նոր գործարաններ կը ստեղծուին: Այն որ ազնուանալէ կը դադրի՝ արդէն իսկ վատասերումը սկսած է: Վատասերումը անզգայի մահացում մըն է: Դիտէ՛ սա ոչիլը, լուն և նման մարդկային մակաբոյծները, որոնք վատասերելով իրենց բոլոր գործարանները կորսնցուցած են: Ասոնց շատ մօտ ազգականները քնութեան մէջ ազատ թեւերով արծակ համարձակ կը թռչըտին:

Այսօր Ամերիկա և ուրիշ երկիրներ զօթաներ կը դնեն. ինչու՞. խնդիրը ցեղի ազնուացման խնդիրն է. անոնք կը վախճան որ մի գուցէ ստորին ժառանգական յատկանիշներ ունեցող գաղթականներ իրենց երկրին մէջ մտնելով իրենց քաղաքացիներուն գրօմօսմները* պղծեն և ազգին ժառանգականութեան մակարդակը իջնայ: Այսօր բոլոր քաղաքակիրթ ազգերուն պատերազմի արհաւիրքէն աւելի սպառնացող եղելութիւնը սա է. — աշխարհիս մէջ անբաղձալի ժառանգականութիւններ կրող ստորին դասակարգը, որ բազմատարր շատ ըստուար մեծամասնութիւն մը կը կազմէ, շատ բազմածին ըլլալէ վատ՝ արդի պարզացած լաւ առողջապահական պայմաններու տակ տարաբնուի ախտերէն ալ զերծ մնալով անհամեմատ կերպով կը բազմանան, բայց ազնիւ ժառանգական յատկութիւններով օժտուած բարձր դասակարգէ շատեր չեն ամուսնանար, ի՞նչ ամուսնանան ու չ'ամուսնանան և ամուսնանալէ յետոյ քիչ զաւակներ կը բերեն: Շատեր այնպէս կը կարծեն որ արդի քաղաքակիրթութիւնն ալ իր աշնան թեւակոխած է և հին Յունական կամ Հը-

նովմէական քաղաքակիրթութիւններու նման արագ արագ քաղմացող ստորին դասակարգի մէջ խեղդուելու սպառնալիքին տակ կը գտնուի:

Մարդս բոյսերու և կենդանիներու ցեղերը աղնուացնելու համար շատ բաներ կրցած է ընել. բայց շատ ցաւալի է որ իր ցեղը ազնուացնելու համար շատ բան մը չէ կրցած ընել: Յեղերու ազնուացման համար երկու միջոցներ կան: Ասոնցմէ առաջինը միջավայրն է. կենդանի մը կամ բոյս մը ա՛ռ, վայն յարմարագոյն միջավայրի մը մէջ գետեղէ, անոր առատ և լաւ տեսակէն սնունդ, ջուր, արեւալոյս մատակարարէ, լաւ խնամք տար, ահա անիկա կ'ազնուանայ: Ի՞նչ է կենդանի մըն է՝ անոր հասակը, մօլշտակը, միսը, կաթը, ուժը վերջապէս ամէն բանը կը կրկնապատկուի, կը գեղեցկանայ ու կ'ազնուանայ: Նոյնպէս ի՞նչ է բոյս մ'է՝ անոր տերեւները, ճիւղերը, ծաղիկներն ու պտուղները, գոյնով, անուշահոտութեամբ, քաղցրութեամբ ու հասակով կը պարգանան ու կ'ազնուանան: Դիտելի է որ միջավայրի ազդեցութեամբ յառաջ եկած այս ազնուացումը առժամանակեայ է և ժառանգական բնոյթ մը չ'իներկայացնիր, վերջո՛ւր լաւ միջավայրն ու խնամքը ամէն ինչ իր հին վիճակին կը վերադառնայ:

Ազնուացման երկրորդ և ազդու միջոցը՝ ցեղի լաւ ժառանգականութիւններով օժտուած երկու անհատները միացնելով անոնցմէ ծնած անհատներուն վրայ ծնողաց լաւ յատկանիշները կեդրոնացնելէ և ի՞նչ է կարելի է անբաղձալի ժառանգականութիւնները արտաքսելէ կը բաղկանայ: Այս կերպով արտադրուած ազնուացումը ժառանգական բնոյթ մը ունի, հետեւաբար աւելի կայուն և աւելի տեւական է:

Մարդկային հակակշռի տակ վերոյիշեալ ազնուացման երկու մեթոտներուն

*Գրօմօսմներ նախաքիչներու կորիզներուն մէջ զետեղուած յոյժ փոքր մարմիններ են, որոնք հարիւրաւոր ժառանգական յատկանիշներ կը պարունակեն եւ զանոնք սերունդէ սերունդ կը փոխանցեն:

կիրարկումը հրաշքներ գործած է, այս կերպով վայրի անբոյր վարդը, որ հինգ վտիտ թերթիկներէ կը բաղկանայ, վերջապէս մեր այսօրուան վայրիւծ բազմաթիւ թերթերէ բաղկացող անուշահոտ եւ մեծ վարդի կոկոններուն վերածուած է։ Մի քանի կրամէ աւելի չկռող վայրի անհամ խնձորներէն տակաւ առ տակաւ հատը հարիւր կրամէ աւելի կշռող անուշահոտ ու քաղցրահամ խնձորներ վարդացած են։ Ազնուացման գործողութիւնը բոյսերու մէջ այնքան առաջ կը տարուի որ կարծես անոնք իրենց ապագայ սերունդներու գոյութիւնը ապահովին անգամ աւելորդ նկատելով կուտեր չեն արտադրեր, իրենց բոլոր ուժը պտղային հիւթեր արտադրելու կը նուիրեն։ Այսօր անկուտ խաղող, սալոր, նարինջ եւ ուրիշ պտուղներ հասարակ դարձած են։ Կովերու ցեղերը այնչափ ազնուացած են որ օրական 20-30 լիթր կաթ արտադրող կովեր հասարակ դարձած բաներ են։ Իսկ մսի արտադրութեան համար պատրաստուած կովեր կան որոնց ամէն մէկը 400-450 քիլօ միս կուտան։ Նոյնպէս ընտանի թռչուններու ազնուացած շատ ցեղերը կան։ Մէն մի հաւկիթ 100 կրամ կշռելու պայմանով թռչով հասարակ հաւու մը ածած հաւկիթներուն եռապատիկը ածող հաւերու ցեղեր արտադրած են։

Ցեղի ազնուացման գործողութեան մէջ ի նկատ առնելիք կէտ մը կայ։ Ազնուացումը իր մասնաւոր սահմանը ունի, անիկա յաւէտ չի կրնար շարունակել, ձեռք բերուած արդիւնքը նոյն մակարդակի վրայ կարենալ պահելու համար ազնուացման գործողութիւնը պէտք է միշտ շարունակուի, ձեռք բերուած ազնուացումը բաւական նկատուելով կատարուած ջանքերը եթէ դադրին անմիջապէս վատասերումը կը սկսի։ Ընտանի աղանձներու ազնուացած հարիւրաւոր տեսակները ամէնուն ծանօթ են, ասոնց ամէնն ալ ծանօթ վայրի կապտա-

գոյն աղանձներէ տերած են։ փորձով տեսնուած է որ եթէ ասոնք մարդու խնամքէն զրկուին եւ ազնուացման գործողութիւնը դադարելով իրենց վիճակին թողուն տասնեակ տարիներ յետոյ այս հարիւրաւոր տեսակներու ամէնն ալ իրենց նախնական վայրենի վիճակին կը վերադառնան, այսինքն ամէնն ալ կապտաւուն վայրի աղանձներ կ'ըլլան։

Բուսական եւ կենդանական ցեղերու ազնուացումը համեմատաբար շատ աւելի դիւրին եղած է, քանզի անոնք մարդկային հակակշռի տակ կրնան առնուել եւ լաւ ժառանգական յատկանիշներով օժտուած տարբեր ցեղեր ուղղուած ժամանակ եւ ուղղուած ձեռով իրարու կրնան միացուել։ Մարդը այս տեսակէտէ հակակշռի տակ չի կրնար առնուել, ուստի մարդկային ցեղի ազնուացումը, որ մեծ հաւանականութիւններով լեցուն է, շատ դժուար եղած է։ Մարդկային ցեղը իր պատմութեան մէջ ուէ ժամանակ Բեռլիէսի Դարուն մէջ եղածին չափ բարձրաստիճան ազնուացում մը չէ կրցած ունենալ, այն ժամանակ ափ մը Յոյն ժողովուրդին մէջէն մէկ դարու մէջ տասնեակներով պատմական մեծ մարդիկ եւ հանճարներ ծնած են։ Անոնք ցեղի ազնուացումը կէտ նպատակի ունենալով, ամբողջ ժողովուրդը ինքզինքը կառավարական հակակշռի ինթարկեց։ անկենսունակ, խեղանդամ, ապուշ, լուսնոտ, խուլ ու համր ծնած բոլոր երախաներ անգթաբար կը փճացուէին, ժառանգական ստորին հետքեր ունեցող անհատներ ազնիւ դասակարգին հետ ամուսնանալու չէին թոյլատրուել։ Այս անգութ մեթոտը թէեւ այն ժամանակ բարձր դասակարգի մը ծնունդ տուաւ, բայց այժմու ընկերային կարգ ու սարքեր եւ զգացումներ այդ տեսակ միջոցներու գործածումը երբեք չեն թոյլատրել։ Ընդհակառակը քրիստոնէութիւնն ու մարդկային զգացումները՝ յիմարն ու տկարը բուժարան-

ներու մէջ կը խնամէ, հիւանդն ու լուսնոտը հիւանդանոցներու մէջ կը դարմանէ, մուրացկանը, մակարոյծը, ծայրը, ոճրագործն ու անբարոյականը բարեկարգման հաստատութիւններու մէջ խնամելով ուղղելու կ'աշխատի:

Արդի ազնուացումը ասոնցմէ տարբեր ձև մը առած է: Մարդիկ երկայն դարեր մարդկային ցեղը միջավայրի և կրթութեան միջոցաւ ազնուացնելու աշխատեցան բայց չյաջողեցան, հասկցան որ միջավայրն ու կրթութիւնը առժամանակեայ և ստացական ազդեցութիւններ միայն յառաջ կը բերեն և իրական ազնուացումը ժառանգականութեան ազնուացումն է: Տկարամիտն (feeble minded) իր բոլոր կեանքին մէջ եթէ կրթես կրկին տկարամիտ է և իրմէ տըկարամիտներ միայն պիտի ծնին: Այսօր ճշմարիտ բարեսէրներ իրենց դրամը՝ թոյլը, խեղանդամն ու մուրացկանը կեքակրելով անոնց ստորին ժառանգականութիւնները յաւերժացնելու համար չեն ծախսեր, այլ զանոնք ընկերային շրջանակէն անջատելով աշխատցնելու և սոնոց ստորին ժառանգականութիւններէն մարդկութիւնը ազատելու համար միջոցներ գտնելու կը ծախսեն: Ամերիկան դրսէն իր երկրին մէջ այս տեսակ անբաղձալի անհատներու մուտքը արգելելէն յետոյ, իր մէջը գտնուող ստորին ժառանգականութիւններ ունեցող ան-

հատները ընկերային շրջանակներէ անջատելով մասնաւոր երկագործական հաստատութիւններու մէջ ֆիզիքական գործերով կը զբաղեցնեն: Բաց ի աստի անոնց վրայ պզտիկ վերաբուժական գործողութիւն մը կատարելով կ'ամլացնեն, այսպիսիներ թէև կրնան ամուսնանալ բայց երբեք զաւակներ չեն կրնար ունենալ: Այս տարուան վիճակացոյցներուն համեմատ լոկ Գալիֆորնիոյ Նահանգին մէջ 6000է աւելի անբաղձալի ժառանգականութիւններ ունեցող անհատներ կառավարութեան կողմէ ամլացման գործողութեան ենթարկուած են: Ահաասիկ ասոնք կամաց կամաց բնական մահով առանց սերունդի կը մեռնին և իրենց անբաղձալի ժառանգականութիւններն ալ իրենց հետ միասին կը մեռնին:

Յեղի ազնուացումը տիկզերական օրէնք մ'է, անիկա բնութեան ու արարչագործութեան կէտ նպատակն է, ազնուացումը բնականոն, իսկ վատասնորումը ոչ-բնականոն ուղղութիւն մ'է: Ուստի ամէն մարդ, ամէն տեսակէտէ պէտք է ազնուանայ՝ եթէ կ'ուզէ ապրիլ: Մեզի կ'իյնայ որ իբրեւ անհատ և իբրեւ ազգ մեր ուղղութիւնը նկատի առնենք, արգեօք կը վատասնորինք թէ կ'ազնուանանք: այս երկու ուղղութեանց միջև կայուն կամ չէզոք գօտի մը գոյութիւն չունի:

ՏՈՐԹ. Ա. ՃԷՊԷՃԵԱՆ

ԱՄՏԱՐՈՒԺԱԿԱՆ ՆՈՐ ԴՆՈՒՄԳԱՅԹԸ

Տարօրինակ ճառագայթի արտադրութիւնն որ յայտնութիւնը կը ցնցի բոլոր բժշկական աշխատիչը:

Մի քանի ամիսներ առաջ, միջին տարիքով մարդ մը՝ վերաբուժին պաշտօնատեղին մտաւ վերք մը ցոյց տալու համար: Տարի մը անցած էր գործողու-

թեան տեղը չէր հանգստանար. բժշկական գիտութեան ծանօթ ամէն փորձ իդիրեւ ելած էր: Այս անգամ՝ քննութենէ վերջ բժիշկին սրտին մէջ լաւատեսութեան նշոյլն անգամ մնացած չէր: Կրկին հիւանդանոց զրկել և անգամ մը ևս գործողութեան ենթարկել տալէն

զատ ուրիշ բան չէր կրնար ընել յուսահատ բժիշկը: Անգամ մըն ալ փորձէ բախտող, ըստէ յարգելի բժիշկը ու մեղամաղձոտ աչքերը դադարեց ապակեայ փորձափողի մը վրայ որ վարագոյժը մը վար կախուած էր:

Վար իջեցուց փորձափողը և իւզանման պարունակութիւնը վարժարանական գրեխի (Syringe) մը մէջ քաշեց, տաքցած իւզը վէրքին մէջ ներմուծելով փաթթեց վէրքը: Հիւանդը տուն գնաց, գրեթէ անմխիթար:

Հինգ օր վերջը, հիւանդը դարձանատունի դռնէն ելուցած պահին, գրեթէ բժիշկին սիրտը թռնդ ելած էր, այն վախով թէ մի գուցէ կրկին զոգոհ հիւանդի մը դիմաց պիտի գտնէր ինքզինքը: Ակնթաթի մը մէջ հիւանդին ժպտուն դիմագիծը փարատած էր բժիշկին ահ ու դողը:

«Տօթքոր, կրնամ ներս դալ և ցոյց տալ բուժուած վէրքս: Բուժուած վէրքդ: Ծաղրանք կամ կատակ էր թէ հրաշք: Զգուշութեամբ վէրքը աչքէ անցուց բժիշկը: Ծիւղ էր, վէրքը կատարեւապէս բուժուած էր:

Ճառագայթներու գոյութիւնը ճշդելու համար լուսարձակ լամպարներու առջեւ զրուած փորձափողի պարունակութիւնը տեսակ մը ճառագայթաբան ոյժ տալու էր իր մէջ և դիպուածով բուժած էր այնպիսի անբուժելի վէրք մը զոր դարմանելու մէջ ցարդ ծանօթ բոլոր գիտական միջոցներ բացարձակապէս անյաջող անցած էին:

Ահա բժիշկ մը՝ բուժելու բութրոզին նոր ոյժ մըն ալ աւելցուց բժշկական գիտութեան վրայ: Այս իւզը չէ թէ միայն վնասակար մանրէները առժամեայ մեղմեցնելու, այլ մշտնջենապէս բուժելու հրաշալի յատկութիւններ պարունակող անտեսանելի ճառագայթ արձակելու մեծ զօրութիւն ունեցած ըլլալու էր:

Այս դիւթիչ ճառագայթին բոլոր յատկութիւնները դեռ լիովին ուսումնասիրուած չեն, բայց յայտնի է թէ մարդկութեան հսկայ ծառայութիւններ պիտի մատուցանէ: Փորձերը ցոյց տուին թէ առ հասարակ պատահած վէրքեր, ինչպէս ախրուցք, պալարներ, արեւակիցութիւն և կարգ մը վիրաբուժական, անբուժելի նկատուած քրոնիկ վէրքերու նման մասնագութիւն պատճառող անհանգստութիւններ հրաշալի կերպով օգտուել սկսած են:

Այս ճառագայթը լուսանկաբշակաւ ապակիի վրայ խիստ զօրաւոր ազդեցութիւն ունի:

Հասարակութեան մտքին վրայ Բ. Ճառագայթի և բատրիմի նման ազդեցիկ ոյժերուն վրայ աւելցաւ ուրիշ խորհրդաւոր ոյժ մըն ալ, որ անմիջապէս պիտի կիրարկուէ նաեւ ճշմոքէր ի վրայ:

Մարմնաբուժութիւնը աշխարհներու առաջնորդող նոր դուռ մըն ալ բացուեցաւ գիտութեան առջև:

Բախտի ինչ անբացատրելի ոյժ էր այն որ դրդեց եւ մղում տուաւ այս բախտաւոր բժիշկին պատահական այս փորձը կատարելու համար:

Ժամանակ մը բժիշկը կարծեց թէ՝ ճառագայթներու առջև դրուած փորձափողի իւզին մէջ կենսամիներ (vitamin) ոյժին պէտք էր վէրագրուէր բուժութեմի այս տաքօրինակ յատկութիւնը: Բայց զանապառ կենսամիներ պաշտօնակող իւզեր փորձի հնթարկուելով, ուէ բուժութեմի կարողութեան զերծ ըլլալին որոշ հասկցուեցաւ:

Սուսաքարտէ օրինակաբերի մը վրայ ձեւ մը կտրեց բժիշկը և զետեղեց զայն լուսանկաբշակաւ զգայուն ապակիի և խորհրդաւոր ճառագայթ պարունակող սրուակին մէջտեղ, և դրաւ զանոնք խիստ անլուսաթափանց անոռակի մը մէջ: Մէկ գիշեր վերջ ապակին

պարզելով հիասքանչ պատկեր մը մէջ տեղ եկած էր—կարծես խիստ զօրաւոր լոյսի մը ազդեցութեան տակ լուսանըկարուած էր:

Այս խորհրդաւոր ճառագայթներու լաւագոյն ծառայութիւնը պիտի ըլլայ «քանսէր» ի թշննեւորուն վրայ իր ունեցած ազդեցութիւնը:

Այս նոր ճառագայթարձակ ոյժը նոր քիմիական բաղադրութիւններու ձեւով պիտի ակտուի ներմուծուել մարմնոյն ներսի խորունկ անթափանց մասերուն մէջ: Ք. ճառագայթը զուարթն պիտի կիրարկուի դարմանումի վայրին մօտերը: Ք. ճառագայթները պիտի թա-

փանցեն մարմնոյն խորունկ մասերուն մէջ, պիտի հասնին ախտացեալ մասերուն վայրը, խորհրդաւոր ճառագայթը պարունակող ոտմը պայթեցնելով դուրս արձակել պիտի տայ բուժելու յատկութիւն ունեցող խիստ զօրաւոր արտաբղխութիւն մը մարդու մարմնոյն ներսերը:

Այս նոր ճառագայթի գեռ ամէնուանձանութ ընտրելով ներքեւ ընդ ուշի ուշով ուսումնասիրութիւն, բժշկութիւնը պիտի ունենայ իր արամադրութեան տակ ախտերու դէմ մաքառելու և կը ունեցու զօրաւոր գէնք մը ևս:

ՏՈՔԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ՊԱՂԵՍՏԻՆ ՆԱՀԱՊԵՏԱՅ ՕՐՈՎ

Արրահամի Քանան մտնելէն գրեթէ եօթը դար առաջ Բաբելոնական գերիշխանութիւնն արդէն տարածուած էր Սրբաւոր վրայ: Ակկադի սեմական թագաւորներէն Սարգոն Ա., որու մանկութեան վրայով պատմուածը շատ կը նմանի Մովսէսի մանկութեան պատմութեան, ոչ միայն ամբողջ Բաբելոնականի ու միջագետքի, այլ նաև Սիւրիոյ վրայ ու մինչև Պաղեստին կը տիրապետէր: Իր յաջորդներէն Նարամ-Սին Ն. Ք. 2650 թ. առեկները տակաւին կ'իշխէր նոյնչափ ընդարձակածուալ պետութեան մը վրայ, որու սահմանները Պարսից ծոցէն մինչև Միջերկրական ծով և Տաւրոս լեռներէն մինչև Սիւնայի թերակղզին կը հասնէին:

Բաբելոնացի արքայի տակ կողմն, իրանեան լեռնադաշտին մէկ մեծ խորշին մէջ, ուրկէ կ'ուզան Տիգրիսի քանի մը կարեւոր օժանդակները, կ'ապրէր Եղամացոց վաղեմի ժողովուրդը, որ Բաբելոնացոց պէս չափ կանուխէն

քաղաքակրթութեան ազդ մըն էր: Եղամի թագաւորները, Բաբելոնացի արքայի ժամանակեայ մէկ խառնակ վիճակէն օգուտ քաղելով, իրենց տիրապետութիւնը տարածած էին Եփրատի ու Տիգրիսի մեծ գետահովիտին վրայ և հետզհետէ մինչև Պաղեստին ալ նուաճեցին: Դատ Պերոսոսի՝ Բաբելոնիոյ վրայ 11 յաջորդական Եղամացի թագաւորներ գերիշխան եղած են 224 տարիներու միջոցին (Ն. Ք. 2097—1873):

Ասոնց մէջ ամենէն հզօրներէն մէկը՝ Քուդուր-Մարուգ, կը թագաւորէր Ուր քաղաքէն Արրահամի մեկնած առեկները, և իր մէկ որդին, Էրիակու (կամ Ռիւսիւն), իր ձեռքին տակ թագաւոր կարգեց Բաբելոնիոյ ամենահին և սքանչելի քաղաքներէն Լարսայի վրայ: Իսկ Եղամի թագաւորութեան մէջ իր յաջորդներէն մէկն էր Քուդուր-Լագանու: Այս վերջինէն՝ ժամանակակից յիշատակաւորներ չեն հասած. բայց զանուած

է Բաղդէական վերջին պետութեան օրով եղած բաւական սխալագիր ընդօրինակութիւն մը շատ աւելի հին բեւեռագիր մէկ տախտակի, որ բանաստեղծական գրութիւն մըն է, ուր կը նկարագրուի Բաբելոն քաղաքի թաղաւոր Աննուրափայտի պատերազմն ու յաղթութիւնները վերոյիշեալ Եղամի թաղաւոր Քուդուր Լաքամարի և անոր զինակից Էրիակու, Թաղիսու և այլ թաղաւորներու վրայ:

Այս տախտակին գտնուած առաջին օրէն բեւեռագէտներ զիտեցին անոր խիստ նմանութիւնը Մենդոց գրքին ժգ. գլխուն հետ: Թէ և առկային կարգ մը քննադատներ այս տախտակին վրայ նկարագրուած հղելութեանց մասին տարակոյսներ կը յայտնեն, սակայն հեռզհեռէ երեւան եկող ուրիշ արձանագրութեանց յայտնութիւններն անոր հետ համեմատելով, վերջապէս առ համոզումը զոյացած է որ հոն իբրեւ Բաբելոնի թագաւոր յիշուած Ամուրափալթուն ուրիշ մէկը չէ, հապանոյն է մէկ կողմէն Բաբելոնեան հին պատմութեան մէջ այնչափ հոշակաւոր եղած Հաննուրափի հետ և միւս կողմէն ալ Մենդոց ժգ. գլխուն մէջ «Սենաբի Անարիադ թագաւորը» կոչուած անձին հետ:

Հետեւաբար, միեւնոյն արձանագրութեան մէջ յիշուած Եղամի թագաւոր Քուդուր-Լագամար, Լարսայի թագաւոր Էրիակու և Դուախուր անուն միւս թագաւորն ալ նոյն պիտի ըլլան Մենդոց ժգ. գլխուն մէջ յիշուած Եղամի Քոդուրագուր, Ելլասարի Արիով և Գայիմի Թաղալ թագաւորներուն հետ: Այսպէս, ամէն հաւանականութիւն կայ ընդունելու թէ Աքրահամ նահապետն իրապէս ժամանակակից էր Բաբելոնի Համուրաբի մեծ թագաւորին: Գոնէր Փինչէզ, Հոմմէլ և նման հոգատ բեւեռագէտներ չեն տարակուսիր ասոր ըս-

տագութեանը: Ինչպէս Սէյս կը գրէ, «Դոյնի թագաւոր Թաղալ», այսինքն Դուախուր կամ Դուախալ, իր անունէն դատելով՝ Խետացի (Հատեան) իշխան մըլլալու է, և թերեւս թագաւորն էր միջին Սփրատի վրայ Խանիի, Բարբամիւս մայրաքաղաքով:

Քոդուրագուրի առաջին արշաւանքը Պաղեստինի վրայ Աքրահամի հոն հասնելէն առաջ կըլլած էր՝ հաւանօրէն Ն. Ք. 1988 թուականին: Իսկ Աքրահամ Բանան մտած է Ն. Ք. 1877ին: Քուդուրագուրի երկրորդ արշաւանքն առաջուանէն 14 տարի ետքը եղաւ, այսինքն Ն. Ք. 1874ին: Կ'երեւի թէ Քոդուրագուրի և զինակիցներուն վրայ Աքրահամի տարած յանկարծակիի և յանակնկալս յաղթութեան անուղղակի հետեւանքները Բաբելոնստանի համար շատ մեծ կըլլած են:

Եղամացոց գիրիշխանութեան միջոցին Աքրահական կամ Ամովրհացի ծագումէ հզօր գերդաստան մը ձեռք աւելցեցած էր Բաբելոն քաղաքին իշխանութիւնը՝ Ն. Ք. 2003 թուականին: Այս հարստութեան առաջին վից թագաւորները Եղամացոց թագաւորին հարկատու էին: Նոյն գիրքն ունէր իւրեկքան նաև եօթներորդը, Համուրաբի: Կ'երեւի թէ Եղամի թագաւորին Քոդուրագուրի (Քուդուր-Լագամարի) Պաղեստինի մէջ պատահած անյաջողութենէն քիչ յետոյ (Ն. Ք. 1873ին) Համուրաբի ապստամբեցաւ և ապստալ գրութեան բռնող պատերազմով մը յաղթեց ու սպաննեց Եղամի թագաւորն ու անոր զինակից Էրիակուն (Արիով), Լարսայի թագաւորը, որ Եղամի նախորդ մէկ թագաւորին՝ Քուդուր-Մաթուգի որդին էր, և այդպէս անկախ ըրաւ Բաբելոնստանը: Լարսա քաղաքին մէջ իրեն փոխարքայ կարգեց Սինիդին: Ան անուն Բաբելացի մը: Բայց այսչափով չգոհացաւ, այլ Եղամի երկրին

ալ նուաճեց և անոր Շուշան մայրաքաղաքին մէջ կանգնեց իր յիշատակաբանները: Ապա մինչև Կորդուսի լեռներն ու Միջերկրական ծովը մայր երկիրները դարձեալ հնազանդեցուց Բաբելոնի տիրապետութեան: Մեծամեծ բարեկարգութիւններ ըրաւ իր պետութեան մէջ, և իրմէ ունինք բաւական ընդարձակ օլինագիրք մը, իր տեսակին մէջ ծանօթ ամենահինը:

Համաւերաբիրի և իր Օրինագիրքին վրայով արդէն Տիրար Կարապետ Դուռտաքեան բաւական ընդարձակ գրեցանցեալ տարուան Նոր-Աւետարեիրին մէջ (1931, թ. 20, էջ 472-3), Մեր տուած թուականները յարգելի յօդուածագրին նշանակածներէն երկերկու դարով աւելի ուշ են: Ասոր պատճառը սա է որ տակաւին հին Բաբելական, ինչպէս նաև Եգիպտական, պատմութեան ժամանակագրութիւններն անորոշ և անհաստատ են. և զրեթէ ամէն կարեւոր պատմագէտ իրեն յատուկ հաշիւով մը կը վարուի: Մեր գործածած թուականները Փրոֆ. Ծ. Հոմմէլի նշանակածներն են, որուն հետ զրեթէ կը համաձայնէին Սէյս և Քէյ ալ, իսկ մօտերս ուրիշներ ևս, զոր օրինակ Լէյման-Հաուփթ, այս կողմը միտի սկսած են. և Ս. Գիրքի ժամանակագրութեան հետ ալ լաւագոյնս կը համաձայնի այս հաշիւը:

Սիւրբիոյ և Պաղեստինի վրայ Բաբելոնի դարաւոր գերիշխանութեան ձեւագած խոր ազդեցութիւններէն մէկն էր Բաբելական քաղաքակրթութեան պատուաստութիւն այս երկիրներու ժողովրդոց կեանքին վրայ: Պաղեստինի մէջ նաքաւ լեռան, հարաւը Սինա լեռան և այլ տեղական անուաներու վրայ կը տեսնենք Բաբելոնի կրօնքին անջնջելի տպաւորութիւնը, իսկ Բաղադ չաստուածը ուրիշ չէ, այլ Բաբելոնի Բէլ չաստուածը: Ուրիշ աչքառու տարբեր է կաւէ տախտակներու վրայ բռն-

ազդերներով գրելու արուեստը, զոր Սիւրբիոյ և Պաղեստինի ժողովուրդները որդեգրեցին Բաբելոնէ, և գրութեան լեզուն ալ բաբելականն էր:

Քանի որ Քաղաքագործորի բանակին վրայ Դամասկոսի մօտ Աբրահամի և զինակիցներուն տարած յաղթութիւնն անուղղակի նպաստած էր Ամարփադի անկախութիւն յայտարարելուն և յաջողութեանց, կրնանք հիմա հակնալ թէ Բաբելոնի թագաւորն ինչո՞ւ Աբրահամը հանգիստ թողուց, և ինչո՞ւ նահապետ աշուհետեւ մինչև անգամ աւելի ալ փառաւորուեցաւ և զրեթէ թագաւորավայել պատիւ ունեցաւ Քանանու երկրին իշխաններուն աչքին, ինչպէս քացորոշ կ'երևի Սարայի թագուածին պատմութենէն: Այսպէս, հնախօսական նոր յայտնութիւնները լիովին կը լուսաբանեն ու կը հաստատեն Ս. Գիրքի պատմութիւնը: Մենք մինչև անգամ տպաւորութիւնը կը ըստանանք թէ ծագումով Բաբելոնացի Սարահամը Քանանու մէջ անպաշտօն կերպով Բաբելական կառավարութեան ներկայացուցչի հանգամանքը կը կրէր: Ինչևիցէ, Խաւակ ծնաւ Ն. Ք. 1852ին երբ Համաւերաբիրի թագաւորակէտին վրայ կը գտնուէր: Վերջապէս 55 տարւոյ երկար և ամէն կերպով յաջող իշխանութիւնէ յետոյ մեռաւ նա Ն. Ք. 1836ին: Իր յաջորդին, Շաւնուիլուայի, իշխանութեան կը հանդիպի Սարայի մահը, որ տեղի ունեցաւ Ն. Ք. 1615ին: Իսկ երեք տարի յետոյ Խաւակ ամուսնացաւ Ռեբեկայի հետ: Պէտք է լաւ միտք պահել որ այս շրջանին՝ ինչպէս Քանան նոյնպէս և Խաւան միևնոյն Բաբելական պետութեան մաս կը կազմէին, որով Եգիպտոսի մեծ կարաւանով Միջագետք երթն ու դարձն ըստ ամենայնի գիւրդին և անպահով էր:

Եսաւի և Յակոբի ծնունդը եղաւ Ն. Ք. 1792 ին, որ առեւ Բաբելոնի գտնին

վրայ էրիտում բազմած էր։ Ասով վերջացաւ սալոյն բարեկտկան առաջին հարստութեան փառքն ու բարգաւաճումը։ Երբ իբր յաջորդէն, Ամնիդիսանա (Ն. Ք. 1769-1751), իշխել սկսաւ, արդէն ներքին խլրտումներ տնայական էին։ Ասոր աւելցան արտաքին յարձակումներն ալ։ Համաժողովի առաջակցան յաջորդին, Շամսուլթանայի, օրով իսկ Բաքիդնի կեդրոնական ոյժն այնչափ ինկած էր որ Պարսից ծոցին մօտակայ գաւառներն ապստամբեցան իշումայիտ անուն մէկուն առաջնորդութեամբ, որ վերջապէս յաջողեցաւ անկախութիւն յայտարարել և հիմնել «Ծովեզիրայի հաւատութիւն» կոչուած թագաւորներուն շարքը։ Ետքը Ամսիդիսանայի օրով, Խետայից կամ Հատեանք հիւսիսային Արարիայէն Եփրատն ի վար արշաւելով, գրաւեցին Բաքիդն մայրաքաղաքը, և այնպէս մահացաւ հարուած մը իջեցուն

ցին Համաժողովի հարստութեան, որ ան շատ չանցած ստիպուեցաւ տեղի տալ կասեան կամ Քուշեան գիղղաստանին։

Կասեանի կամ Բուշեանի Եղամացոց հետ գրեթէ միեւնոյն ցեղէ և քիչ մըն ալ արիականացած ժողովուրդ մ'էին և կը բնակէին այժմու Պաղտատի գէպի արեւելքը եզոզ լեռնագաւառներուն մէջ։ Այս ցեղէն Գանդիշ անուն թագաւոր մը Ն. Ք. 1714ին տիրացաւ Բաքիդնի պահին, որուն վրայ իր սերունդը տակի քան ետքը դար շարունակեց իշխանութիւնը։ Բայց այս քաղաքական յեղափոխութեանց միջոցին շատ թուրացաւ Բաքիդնի տիրապետող ձեռքը և իբր հետեւանք՝ Արեւմուտքի—Սիւրիոյ և Քանանու—վրայ ան շատեց կորուրցեցաւ և իր գերիշխանութիւնը։ Սյս տահն Եսաւ և Յակոբ երկաստարգ լին։ (Շար.) Ե. ՔԱՍՈՒՆԻ

ԾՆՈՒՆԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿՈՅՐ ԶԱՔԱՐԻԱ

... և ան տեսնեմք որ խաւարի ու մահուան ստուերի մէջ նստած էին՝ ճեսան սեծ չոյսր։» ԵՍԱՅԻ

Քաղէքի որդի Զաքարիա, արդարեւ, էն թշուառն էր Բեթլէհէմի աղքատներուն մէջ։ Ի ծնէ կոյր և որբի հօրէ, իր անդամաւոր ժայրն ունէր միայն իբր մխիթարութիւն այս «Տառապանաց Աշխարհ» ին մէջ։ Հողէ խրճիթի մը խոնաւ պատերէն ներս, իրարու շունչով կը տաքնային, ու կ'ապրէին ողորմութեան թափթփութեամբ՝ զոր երբեմն կը բերէին գրացիներ իրենց աւելցութեանը։ Բայց

ստէպ Զաքարիա կը ստիպուէր դուրս ելլել, խարխափելով, երթալ մուրաւու հումար։ Քաղաքին ծանօթ կոյր մօշրայական էր։

Երեսուն երկար տարիներ տեւեց այս շրջանը։ Սակայն այս շրջանին մէջ Զաքարիա լիովին չճանչցաւ զարհուրանքը անասող զիշերներուն, քանզի հոգին տաքցնող մօր մը սէրն ունէր իր սրտին մօտիկը։ Մեծ եղաւ ստիպումը, յետոյ, երբ գարնան գեղեցիկ առաւօտ մը, մինչ վարդեր կը վարթնուն ու ծիծառը կը դառնայ իրգիւղով, հիւանդ այլին իր վերջին հառաչը արձակեց։ Գիշերն

յա՛նյնժամ սկսաւ Զաքարիայի համար: Յոսափատութեան հետ, վայրագութիւն մը ծնունդ առաւ իրոյին էութեան մէջ: Մատուած յաւերժական խաւարի, իր ականջներուն մօտ այլևս չէին չնչէր բարեպաշտ շրթունքներն, որ սովոր էին խօսիլ ցեղին հայրերէն, տառապողներէն մանաւանդ, ինչպէս «թափառական» Յակոբը, «բանտարկեալ» Յովսէփը, տառապակոծ Յորը, և այլն, որոնք սակայն օրհնուեցան Աստուծոյ մէջ...

Խրճիթէն դուրս ելլելու ոչ սիրտ մնացած էր իր մէջ, ոչ ուժ: Խստացած ինք-իրմէջ, թշուառ Զաքարիա համարութեան և խլութեան բռնադատեց ինքզինքը: Բարի դրացիներ ի դուր կը յաճախեն իր մօտ, ողորմութիւններով ու մխիթարական խօսքերով: Կ'անիծէ ու կը հայհոյէ մտովի: Աչքերը ոչինչ կ'արտայայտեն, բայց գէմքին վրայ կը պատկերանայ լուռ զայրոյթը, մինչև որ պտղկաց օր մը,—

«Ողորմած է Աստուած... Զեզի ըլլան անոր ողորմութիւնները, «յաւիտենական» շնորհքները...»

Եւ ա՛յ չբացաւ բերանը: Դրացիներ զգուհեցան ու լքեցին զինքը իր խշտակին մէջ, ուր մնաց անշարժ, օրերով, խրած իր դառնութեան մէջ: Մարդիկ ա՛յ չգրադեցան անով: Գտած էին բանաձեւը իրենց բարոյական եզրօղացութեան,—

«Պարտ էր ողորմիլ թշուառին... Ի՞նչ կարելի էր ընել թշուառականին...»

Մարդկային ողորմութեան սահմանը սակէ անդին չերկարիր:

Ընդհանրապէս կարելի էր մնալ այդ վիճակին մէջ: Աղքատին տրուած չէ ուժ-զին վայելքը, մինչ հարուստին վիշաք կրնայ պերճանք մը հանդիսանալ: Մարմինը վերջապէս կը պահանջէ իր իրաւունքները, որոնց առջեւ խստութիւնը տեղի կուտայ: Ի՞նչ ընել երբ փչրանք

մը չկայ կուշին մէջ, ու դարակը չնչին չոր թուզ մը:

Ու Զաքարիա, որդի Քաղէթի, կը հարկադրուի բռնել հին ճամբան, խառն խափելով պատերու երկայնքին, հասնելու համար մեծ հրապարակը, Բեթլէհէմ քաղաքի ծանօթ պանդոկին առջեւ, ուրկէ անցնող ճամբորդներէ կարելի էր կըրկին ողորմութիւն մը յուսալ:

Եւ կուգար ամէն օր, այդ օթեանի անդառնական կամարակապ սիւներէն մէկուն շուքին տակ, կը մնար օրն ի բուն, համր, անշարժ, ընկճուած, ձախ թեւը յենած իր ցուպին, աջ ձեռքովը բռնած իր սեպիչը— փայտէ պնակ մը՝ զոր երբեմն գետին կը դնէր իր առջեւը— և ճիտէն անցուած հին բակիղէթը— տարիներու արեւէն դեղնած— ու անկենդան աչքերը յառած անցորդներուն, որ հաճէին պնակին մէջ նետել քանի մը կապար, որուն ժամերով ընդհատուած խուլ աղմուկը միայն պիտի հասնէր իր ականջին, առանց ունէ շարժում յառաջ բերելու իր խիստ դիմագծին վրայ ու հոտէն միայն պիտի իմանար թէ թաղին բնակիչներէն ոմանք ալ հաճեր էին զնել կոշեայ տոգոյն բակիղէթին մէջ քանի մը կտորուանք մզլուած հացի և կրծուած ոսկորներու— փոցուն աւելցուքներ զլծուաբանած որկորներէ...

Եւ այսպէս, կրկին օրերը կը բոլորէին իրենց չըջանը, մշտապիշներ, թշուառ Զաքարիայի համար, մասամբ ամոքելով վշտին սաստիկութիւնը, առանց սակայն լեցնելու անհուն պարապը որ ստեղծուած էր անդարձ մեկնումովը իր անդամալոյծ մօրկան:

Քանի՜ քանի անգամներ, չուառական որդին, իր հիւղակը զարձին, յուսահատութեան նոպայէ բռնուած, նետեց ինքզինքը փախաթին վրայ, ուր երկար տարիներ երկնցած էր հաշմանդամ այրին, որ իր աչքերուն լոյսը եղած էր,—

«Ինչո՞ւ գացիր, մա՛յր, ըսէ, ա՛յ ին-

չո՞ւ... :

Հողէ պատերը արծազանգ չունին։ Ու կ'անիծէր երկինքը որ աստղ մը չունէր իրեն համար։ Ինչո՞ւ ուրեմն իրմէ խլուհեցաւ իր միակ մխիթարութիւնը։ Ի՞նչ անողոք ճակատագիր մը փչում էր իր կեանքին աղօտ կանթիկը որ կը պրկւար խաւարին մէջ, ուր մնալ դատապարտուած էր ի ծնէ... :

Ինչպէս սեւ ամպերէ իջնող տեղատարափին կը յաջորդէ պայծառ ծիածանը երկնքին—գառական ռո՞ւզ—կեանքի առապարին վրայ բարեբաղդաբար կայաններ կան, որ պահ առ պահ կ'ամոքեն տաժանքը։ Այդ պահերը, թէեւ ծիածանին պէս կարճատեւ, գէթ պատրանքը կուտան մեզի ետեւնիս թողած տանջանքը փոխարինելու։ Ու կ'ոգեւորուինք նոր կեանքով մը։

Զաքարիա ալ ունեցաւ այդ ամօքիչ պահը։ Թէ ի՞նչ կերպով, կը ծիծաղիք, կ'աղաչեմ, չմեղադրէք մանաւանդ։ Թշուառը կը կառչի յարգի շիւղին անգամ։

Իրիկուն մը, պարտասած, իր հիւղակը դառնալ կը պատրաստուէր։ Կոյրին սկանջը—որ փոխանորդն է աչքին—կը նշմարէ քայլի մը իրեն մօտենալը, ետեւի կողմէն, թեթեւ, անչուկ, անդաստակին քարայտակին վրայէն։ Վայրկեան մը վերջ կը զգան իր ձեռքերը, փոխ առ փոխ, գաղջ խոնաւութիւն մը։ Ուրիշի մը սոսկում պիտի պատճառէր այդ լզուըռտութիւնը։ Զաքարիա հա չքաշեց իր ձեռքերը։

Այցելուն մէկն էր այն շուներէն որ տէր չունին ու կը սլքտան փողոցները, ի խնդրի իրենց սրկորի իրաւունքին։ Անտարակոյս—պիտի մտածենք՝ մենք՝ բանաւոր արարածներս—չորքոտանին հոտը առած էր ճինճոտ քանի մը ոսկորներու, ու եկած էր իր բաժինը պահանջելու մուրացկանին տոպրակէն։ Մտքէ բան պի-

տի չանցունէինք թէ այդ խոշոր գամբազգին—ով գիտէ—իր ազնուական ծագումովը՝ բնագոյրար գուշակելով կոյրին անմխիթար վիճակը՝ մղուած էր մօտենալ անոր, համակրութիւն մը յայտնելու, իր կերպովը, հեշտօրէն լզելով անոր կարծրացած ձեռքերը։

Գէթ այդպէս թուեցաւ իրեն։ Զաքարիայի սիրտը տաքցաւ այդ փայփայանքէն։ Եւ այդ ազնիւ վարմունքին փոխարէն, բաժնեց անոր հետ իր բակեղէթին պարունակութիւնը՝ զոր մութացած էր ամբողջ օրուայ ընթացքին, արձանի պէս կանգնած անդաստանի կամարակին տակ։ Անդրի՜ Թշուառութեան, որ սակայն կ'ապրէր։

Այդ իրիկուն նուազ դժբաղդ վերադարձաւ իր ամայի հիւղակը։ Ու հետեւեալ առտու ուրախութեամբ գտաւ հոն իր նոր ընկերը, որ չհեռացաւ քովէն մինչեւ իրիկուն։ Այնուհետեւ, գանգրատե կամբուր կեանքի ընկերը եղաւ կոյրին։ Անբաժան մտերիմներ դարձան։ Մարդը կը պատմէր իր վիշտերը, անասունը հառաչելով կը հեւարէ ամէն անգամ որ կոյրին ձայնը զողզողար թախածէն։ Ու երբ մարդը լռէր, անասունին լեզուն կը սկսէր խօսիլ... Խանդաղատանք չոսյլելով անոր ձեռքերուն։ Եւ իբր վերջարան այս առօրեայ արարուածին, անասունը՝ իր ետեւի ոտքիտուն վրայ՝ կը բարձրանար մինչեւ մարդուն երեսները։

Օրուայ այս սիրեղութենէն յետոյ, գիշերը այլեւս նուազ մութ էր կոյրին համար։ Անասունի մը համակրանքը տանելի կը դարձնէր իր մօրկան բացակայութիւնը գիշերուայ մէջ, ապաստելով վաղորդայնի անվրիպելի ժամադրութեան։

Ժամադրովայրը միշտ միեւնոյն կամարակապ երկու սիւններուն մէջտեղն էր։ Եւ մտամիջօրեայ տիւանդորրի պահուն, որ ատեն անցորդներ կը ցանցափն, Զա-

քարիա կը նստէր կամարակի շուքին տակ, իր ծունկերուն վրայ կը հանգ- չեցնէր գամբուն գանգուր զլուխը, կը շոյէր ու կը խոկար, մինչ անասունը հեշտացած կը մրափէր: Նոյն ատեն իր այդ հեշտալի խոկումներուն կը խառ- նուէր կանխագուշակ երկիւղ մը ու կը հառաչէր:

«Ա՛հ, միայն թէ երկար տեւէր այս ընկերակցութիւնը...»

Ի տես այս պատկերին, որ ուշագրաւ դարձած էր թաղին մէջ, անցորդներ կանգ կ'առնէին պահ մը. —

«Քաղէքի որդին աղէկ գտաւ այս կենդանին մօրը մահէն վերջ: Խնչ պի- տի ընէր խեղճը առանց ասոր: Օրերը շատ երկար պիտի թուէին...»

Ու թաղին բարի մարդիկը, անասու- նին պատճառաւ, աւելի ուտելիք կը բե- րէին, մինչ ոմանք չարամտօրէն կը հեզ- նէին, առնջութեան գիծ մը գտնելով Ջա- քարիայի հօր անուան և այս չորքոտա- նիին միջև (Քաղէք = քալէպ = քէլպ = շուն):

Եւ տարիներու եղանակներ սահեցան այդպէս: Ջաքարիա հաշտուած կը թուէր իր կուրութեան հետ: Օրապա- հիկը տպահովուած էր: Եւ ա՛յլ վիշտ չէր զգար չլրնալ դիտելուն համար, երկ- նակամարին վրայ, աստղերուն և սպի- տակ ամպերուն տօնախմբութիւնը, ու ծաղիկներու ցուցահանդէսը դաշտերուն մէջ: Մոռցած էր Աստուծոյ փառքը պատմող համարները, զորս մըմնջած էր ծերունի մարդը Սաղմոսներէն՝ մարգա- րէ ու թագաւոր Իսաիթի, որուն մէկ շառաւիղն էր իր որդին: Կը գոհանար հիմակ անուշահոտութիւններով զոր գա- րունը կը ցանէր, ու կը հեշտանար թըռ- չուններու երգովը, որ կը ներշնչէր իրին ապրելու փափագը: Քանզի ունէր իր հաւատարիմ ընկերը, որու հետ իր ապ- րումները կը լեցնէին իր կեանքի նեղ հո- րիզոնը:

Ջաքարիա տմէն առաւօտ վստահու- թեամբ կը փութար ժամագրավայրը: Սրտաշարժ էր իրենց հանդիպումը: Ա- նասունը ընդ առաջ կը վազէր, կը ցատ- կոտէր կոյրին բոլորտիքը, երկու ոտքե- րուն վրայ բարձրանալով, թաթերովը հազարումէկ խելիւսը խաղեր կ'ընէր, մինչև հասնէին իրենց սեփական վայ- րը, ուր կ'սկսէր սիրուըտուքի նախեր- գանքը...:

Առաւօտեան անցորդներ չէին կրնար անտարբեր անցնիլ, մինչև նախանձե- լու աստիճան. —

«Կոյր ըլլալ պիտի արժէր, այսքան խանդաղատան ք ներշնչելու համար անա- սունի մը, իրեն հանդէպ...»

Ջաքարիա, որդի՛ Քաղէքի, Դաւիդի՛ սերունդ, մոռցած էր ամէն բան, տոհ- մային ժառանգութիւն, հոգեկան, կրօ- նական, ցեղային, և ինչ որ կը կապէր զինքը իր նախահայրերուն: Ձեռ խոր- հեր: Այս խորհուրդը, զոր մայրը իրեն ներշնչած էր 30 տարիներու ընթացքին, անհետացած էր իր մէջէն: Անասունը կ'ամօքէր իր առանձնութիւնը, լեցու- ցած էր իր կեանքը: Իր կուրութեան մէջ, դադրած էր արձագանգելէ հաւատաւոր կնոջ ձայնը, որ իր մահիճէն խօսած էր Ընտրեալ Ցեղին նահապետներէն, Տէր Եհովայի խոստումներէն, հրաշքներէն, ոմարգարէներէն, Մովսէսէն, Եղիայէն, Եսայիէն, մինչև Ջաքարիա՝ որուն ա- նունովը թլփատած էր իր միակ որդին: Ցեղին նախանձաւոր հրէունին, իր ա- մուսնոյն աղգարանութիւնը զոց ընել տուած էր, տանելով Ջաքարիայի հօր ծագումը մինչև Քանանու պատուիրակ քաջ Քաղէքը, պատգամաբերը կաթ ու մեղր բղխեցնող Աւետիաց երկրին, որու վիթխարի ողկոյզը բերած էր անապատի ժողովուրդին...: Ու Քաղէքի որդին ա՛յլ չէր յիշէր իր ժառանգութիւնը:

Զափարիա մոռցած էր իր հոգին:

Եւ առաւօտ մը երբ կը հասնէր ժամադրաւայրը, իր սիրականին կողկանձիւնները չողջունեցին կոյր Զաքարիայի անհամբեր ականջները:

«Ո՛ր կրնար դանդաղիլ... Դժբախտութիւն մը պատահեցաւ...»

Խռովեցաւ Զաքարիա: Սկսաւ սուլել: Այդ սոյլին եղանակը ինքն էր հընարած, զոր սովոր էր կրկնել երեք անգամ, իր մօտ կանչելու համար, երբ հեռուն գտնուէր: Եւ շունը կը հասնէր, դեռ երրորդ յանկերգը չլրացած:

Ո՛չ մէկ քայլ, ո՛չ մէկ շշուկ, ո՛չ մէկ նշան գոյութեան:

Յուսախար, մտահոգ, գնաց իր սովորական տեղը, և սպասեց... Ու սպասեց...

Այս անհետացումն կը գիպէր այն օրունան, որ Օգոստոս կայսեր Հրովարտակին համեմատ, ինչպէս Հրէաստանի ուրիշ քաղաքներու մէջ, աշխարհագիր մտնելու համար, բազմաթիւ ճամբորդներ՝ շրջակայքի աւաններէն և գիւղերէն կուգային Յուդայի քաղաքը, որ Բեթլէհէմ կը կոչուէր: Ու եկուորներ իրենց ընտանիքներով կ'անցնէին Զաքարիայի առջեւէն, իջեանելու համար մեծ հրապարակին պանդոկը, և չէին անցնիր առանց դրամ ձգելու մուրացկանին սեպիլը, մրմնջելով «խեղճ կոյր»: Պնակին մէջ իրարու յաջորդող եղանակաւոր աղմուկը շատ բեղուն օր մը կը խոստանար կոյրին: Բայց իր շունը չէր գար:

Զաքարիայի խռովքը կ'աւելնար: Ու մոռնալով պնակը՝ կէս մը լեցուած արդէն, որոշեց երթալ փնտռել: Խարխափելով թափառեցաւ, իջաւ անդաստակին ներքեւը, ուր տղաք կը խաղային:

— Տեսա՞ք շունս, տղաք:

— Ահաւասիկ հատ մը, ըսին տղաք խոշոր շուն մը բերելով:

Կենդանին ապուշ ապուշ կեցաւ իր

առջև, անձայն, անշարժ: — «Այս իմ շունս չէ՞» մտռաց, ու հեռացաւ, շարունակեց իր փնտռողքը, շոշափելով ամէն կողմ իր ստեղծովն ու ձեռքերովը, թափառելով, մոլորելով անդաստակին տակը, մինչև մեծ պանդոկի մեծ պատին անկիւնը, ուր, մութ խորշի մը մէջ՝ ոտքը զարնուեցաւ զանգուածի մը...»

Զաքարիա դողաց ամբողջ մարմնովը: Վարանոտ ձեռքերը շոշափեցին խոչնդոտը... Սոսկո՛ւմ: Ճանչցաւ իսկոյն գանգրաւոր մուշտակը... որ պաղած էր արդէն:

Յուսաբեկ, վշտահար, խեղճ կոյրը սահեցաւ: Երկնցաւ ամբողջ մարմնովը դիակին քովն ի վար: Մնաց հոն պահ մը, ընկճուած, շարունակելով չփել, տաքցնել զայն իր շունչովը... մինչև խիստ ու խապոտ ձայն մը սթափեցուց զինք: Պանդոկապետն էր, ծառայիմ հետ,—

— Պէտք է թաղենք այն սատակը... Զաքարիա՛, ի՞նչ կ'ընես դուն հոս, տեղդ գնա՛...»

Ու քաշկռտելով տարին դիակը, որ արդէն սկսած էր հոտիլ:

Այս անգամ, ո՛հ, այս անգամ ճանչցաւ ահաւոր, քստմնեցողիչ առանձնութիւնը: Ամայութիւն մը իր շուրջը — կը դատէր — ստեղծուած մարդոց բըրտութեամբ, միանալով ճակատագրին խստութեան: Այդ ոչինչ մնացած էր որ լեցնէր իր էութեան պարապութիւնը: Ոչինչ, բայց մութ գիշերը, լերկ ճամբու մը վրայ, կողոպտուած ամէն բանէ: Ճակատագիրը շուն մ'իսկ շատ տեսած էր իրեն. կ'անիծէր իր ծնած օրը, կը մըռմըռար,—

«Աստուած կը լքէ զիս, կը լքէ ի ըսպառ...»

Ամբողջ օրը մնաց պանդոկին գաւթի դրան առջև, անեղօրէն խստամբեր դէմքով, ուրկէ անցնողներ երեսներն կը

դարձնէին: Դժուար թշուառութիւնը սոսկում կ'ազդէ, կը վռնէ մարդիկը: Պէտք է արտասուել գիտնալ գութ շարժելու համար:

Եւ ի լրումն դժբախտութեան, փողոցին ստահակները պարպեր էին առտուան պնակին ամբողջ պարունակութիւնը, երբ իրիկուն եղաւ, Ջաքարիա պատառ մը չունէր բերանը դնելու: Աշխարհ իր չլրայ ինկած էր: Քաջութիւն չունեցաւ իր խշտակը դառնալու: Ի՞նչ պիտի ընէր այդ զնգանին մէջ: Ամէն տեղ նոյն էր իրեն համար: Գիշերը մնաց գաւթի թին տակ, կծկծուած իր ցնցոտիներուն մէջ:

Կոթնած այդ նկուղի մէկ պատին, որուն ետեւը կը գտնուէր օթեւանին ախոռը, ընկղմելով խո՛րը իր վշտին, խոր, աւելի՛ խոր, չնշմարեց թէ գիշերը արդէն կիսուած էր: Քաղաքին աղմուկը դադրած, մեռելութիւն մը փողոցներուն մէջ, ու պանդուկին մեծ դրան կանթեղնալ մարած էր: Օթեւանը ամբողջ թաղուած էր քունի մէջ: Ջաքարիա միայն կը հսկէր:

Ի՞նչ հսկում: Ոչ ոք տեղիակ էր արհաւիրքէն... մինչ համատարած լուռ մթութեան մէջ, նարնջենիներուն բոյրը աւելի թափանցող կը դառնար, նիրհող պատուհաններէն ներս, և այնքան աւնուշ, ինչպէս գգուանքը թմբազգիցիկ թաւեայ ձեռքերու...:

Ջաքարիա սարսուռաց յանկարծ: Ետեէն այն պատին, որուն կոթնած էր իր յոգնարեկ մարմինը, կը լսուէր ճիչն ու լացը նորածինի մը...:

«Խեղճ փոքրիկ, մոմաշից կոյրը, արդէն իսկ կը ճանչնայ արցունքը, կը տառապի... ինծի պէս: Գութի պէս բան մը մարմանց իր մէջ: Ոսկրոտ, սեւցած, չորցած ձեռքերը միացուց, իբրեւ օրհնութիւն հայցելու ձեռով, այդ նորածիլ կեանքին համար...»

Այդ գիրքին մէջ էր Ջաքարիա, երբ

երեւցաւ Աստղը, հրաշալոյս, իբրեւ ծաղիկ մը բոցեղէն, որ լուսաւորեց բովանդակ երկնակամարը: Բեթլէհէմի Աստղն էր, որուն շեշտուած ճառագայթներուն կը հետեւէին Արեւելքի իմաստունները, ու դաշտին պարզ հովիւները:

Տիրական, հրաշափառ, ճառագայթող լոյսը այդ աստղին, անցնելով ննջող դաշտերու ու քաղաքին լուռ տանիքներուն վրայէն, եկաւ հասաւ ու կեցաւ Օթեւանին վրայ, և անոր ճառագայթը թափանցեց մինչեւ նկուղը, և համբուրեց կոյրին մեռած կոպերը: Յոնքերը շարժեցան իսկոյն, թարթեանները վերցան, լայնցան, բիբերը սարսուռացին կեանքով...:

«Կը տեսնե՞մ... թոթովեց Ջաքարիա ինքիրմէ ելած: — Յն՞՞ք մըն էր: Անդրադարձաւ ինքիր վրայ: — Ո՛չ: Լոյսը չէր խաբեր: Ջաքարիա տեսաւ ինքզինը: Տեսաւ:

«Վարձքս էր արդեօք — եղաւ առաջին խորհուրդը — և ա՛յսքան շուտ: Որովհետեւ նորածինի մը համար աղօթեցի: Եւ ահա կը տեսնեմ...»

Ու ձեռքերը կրկին միացան: Այս անգամ խոր գիտակցութեամբ, պաղատանքով, երախտագիտութեամբ: Եւ աչքերը — բոպէ մը առաջ անկենդան, մշտախաւար — վերամբարձ կ'ողջուէին՝ նկուղին լուսամուտներէն՝ տիեզերքի գեղեցկութիւնը, յուզումով և յափշտակութեամբ, մինչ շրթունքները դողդղազին կը թոթովէին մարգարէական պատգամը, հինաւո՞րց խոստումը, զոր մայրը ստէպ կրկնած էր գիշերուայ պահերուն:—

... «Եւ ամոնիս որ խաւարի ու մահուայ ստեղծիկն մէջ նստած հին տեսնեմ յոյսը»

Ու դաշտէն փութացող հովիւներուն հետ, Ջաքարիա մտաւ ախոռը, ողջունելու մանուկը:

Լոզան

ԽՕՍՆԱԿ

ԱՐԴԻԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻ ՄԸ ԴԱԻԱՆԱՆՔԸ

Վեր. Կ. Ասանաչանի Արդիականի եւ հիմնապաշտի վճիռն մասին մեզի դրկած երկար յօդուածաշարին վերջին յօդուածն է, զոր կարգ մը կրճատումներով կը հրատարակենք: Անշուշտ անոր մէջ յայտնուած զաղափարները կը պատկանին միայն անոնց հեղինակին, Շերվուս էֆի: Ուրախալի է ինչպէս թէ հիւնդիսիստներու մէջ այս վեճը շատ բան կորսնցուցած է իր ուժգնութեան:

Մ. ԽՄԻ.

Տը. Շերվուս էֆի հանրածանօթ կարող միտքներ քաղաքի մըն է: Իր անձնական հաւատամքին մէկ կարճ ամփոփումը կուտայ իր FACING THE CRISIS գիրքին մէջ, որմէ կը հասկնանք թէ ինչ է արդիականութիւնը: Իր գրութիւնը կը ցուցնէ թէ ինքը ծայրահեղ մը չէ:

«ԱՐԴԻԱԿԱՆ (Մօտըրն) ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻ ԲԱՌԸ հոս գործածուած է ցուցնելու մէկը՝ որ կը փնտռէ ճշմարտութիւնը դոյնել քան թէ աւանդութիւնը պաշտպանել, մէկը՝ որ կ'ընդունի թէ Աստուծոյ բնութեան մէջ գործելուն մեթոտը բարեշրջում է, և որ կ'ընդունի պատմական քննդատութեան սկզբունքը: Մէկը՝ որ կ'ապրի հոգւոյն ապատութեան մէջ ու ոչ թէ արտաքին ճնշումներու գերութեան տակ, և ան կը գտնէ ճշմարտութեան փորձաքարը, հեղինակութեան վերջին կայանը ոչ թէ արտաքին կազմակերպութեան և արձանագրութեան մէջ՝ այլ Աստուծոյ մէջ՝ այնպէս ինչպէս որ Բրիտանոսով յայտնուած ճանչցուած է իր անձնական փորձառութեան մէջ:

«ԱՐԴԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻ ՄԸ ԴԱԻԱՆԱՆՔԸ՝ ոչ պարտադրեալ հաւատալիք է, և ոչ՝ ուրիշներէ գործածուած և ապա իրեն ծախուած աւանդութիւն մը, զոր որեւէ մէկը կրնայ կրկնել, և ոչ ալ երկար ժամանակ արգելադրան մ'է ուրիշ անդին

մէկը անցնելու չէ: Դաւանանքը կը կը կազմուի համարձակ և աստիճանաբար աճող փորձառութեամբ:

ԿԸ ՀԱՒԱՏԱՄ ԱՍՏՈՒԾՈՅ

Կը հաւատամ թէ Աստուած կայ:

Բանդի իմ բնութեանս պահանջն է, և տիեզերքը կը պահանջէ որ պատճառ մը ունենայ: Բանդի այն Աստուածը՝ զոր իմ բնութիւնս կը պահանջէ, Յիսուսի մէջ յայտնուած կը գտնեմ: Բանդի այն Աստուածը՝ զոր իմ բնութիւնս կը պահանջէ, և որ Յիսուսի Բրիտանոսի մէջ յայտնուած է՝ իմ փորձառութեանս մէջ աստուգուած և իրականացած կը գտնեմ:

Կը հաւատամ թէ Աստուած քարի է, Աստուած սէր է, ամենակարող է, անհուն անձնական հոգի է:

ԿԸ ՀԱՒԱՏԱՄ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ

Ա. Կը հաւատամ թէ նա եղական է:

Ս. Դրքի մէջ անզուգական է իբր շին կտակարանի կառարելագործումը: Կրօնի մէջ եղակի է իբր կատարելագործումը՝ բոլոր մարդկութեան բաղձանքին (aspiration) յայտնութեան: Բոլոր փորձառութեան մէջ անզուգական է իբր գոհացումը կեանքին խորունկ ըզմանքին:

Բ—Եղական է իբր ինչ որ երեւի:

Իր նկարագրին մէջ եղակի է, իր գոյութեան, սիրոյն, իմաստութեան, մաքրութեան մէջ, իր հաւատարմակութեան և բարոյական կատարելութեան մէջ, տիրական ներշնչման մէջ: Աննման էր իր ժամանակակիցներուն մէջ, ու հաւատարմաբար բոլոր դարերուն մէջ:

Կը հաւատամ Անոր յարուցեալ կեանքին, ներկայութեան, կարողութեան:

Գ—Եզական է իր ըրածին մէջ:

Ան կը բերէ Աստուածը մարդուն. Այն է՝ մեր մէկ Աստուծոյն գերագոյն յայտնութիւնը: Նա կը բերէ Աստուածը մարդուն իր նկարագրին մէջ՝ իբր մարդկային կեանքի մէջ յայտնուած Աստուածը, իր ռասուցումներուն մէջ՝ իբր կենդանի ճշմարտութիւն, ու մեր անձնական փորձառութեան մէջ, որուն մէջ Աստուած մեզի կ'ըլլայ մեծ իրականութիւն մը: Այսպէս գտայ Յիսուսի մէջ օԱնտեսանելի Աստուծոյ նմանութիւնը, Հօր յայտնութիւնը:

Ան կը բերէ մարդը Աստուծոյ, իր օրինակով՝ երբ կը յայտնէ Աստուծոյ ճամբան, իր ռասուցումով՝ երբ կը բացատրէ կեանքի նպատակը, իր Աստուծոյ հետ մեզ մասնակից ընկելով՝ իբր մէկ եղբայրութեան անդրանիկը:

Վերջապէս նա մարդը Աստուծոյ կը բերէ խաչի վրայ իր մահովը: Կը հաւատամ թէ Քրիստոսի խաչը ժամանակին եղած յայտնութիւն է, անսահման յաւիտենական կամաւոր ինքնագոհողութիւն՝ որ Աստուածութեան իբր Սէր էական բնութիւնն է: Կը հաւատամ թէ՝ Աստուած Քրիստոսի հետ էր աշխարհը իրեն հետ հաշտեցնելով. անոր խաչին մէջ կը տեսնենք Աստուծոյ իրապէս չարչարող Սիրճը: Կը հաւատամ թէ մարդուն մեղքին համար իր մահուն մէջ Աստուծոյ սուրբ սիրոյն մէկ յայտնութիւնը կայ: Բարոյական ազդեցութիւն մը՝ կը հաշտեցնէ սիրաւ և մարդը կը շարժէ դէպի ապաշխարութիւն:

Գ—ԵԶԱԿԱՆ Է ԻԲՐ ԿԵԱՆՔԻ

ԿԵԴՐՈՆԸ

Կը հաւատամ թէ Յիսուսի կեանքը յայտնութիւնն է Մարդ-Աստուծային, և Աստուած—մարդկային կեանքի: Ան էր ճշմարտապէս, օրինապէս և կատարելապէս մարդկային և իբր այդ մեզի կատարեալ օրինակ: Կը հաւատամ ու կը

գտնեմ անոր մէջ ճշմարիտ մարդ ու ճշմարիտ Աստուած, Իմ Փրկիչս, Տէրս ու կեանքս:

Կը հաւատամ թէ՝ Յիսուս բոլոր մարդկային փորձառութեան, փիլիսոփայութեան, գիտութեան, գեղարուեստի, ու բարոյական և կրօնական կեանքի շէնքին միակ կամարակապ քարն է:

Կը հաւատամ աղօթքի

Իբր հոգեւոր կեանքի իրական շէնքառութիւնը. իբր գործի մէջ կրօնք, մարդկային հոգւոյն էն բարձր գործունէութիւնը:

Կը հաւատամ աղօթքի իբր իրական ու անմիջական մեր Հօր Աստուծոյն հետ հոգեւոր հաղորդակցութիւնը:

Յ—Կը հաւատամ Մատայոսեան, զոհողութեան եւ ճառապանքի:

Մատայոսեան ու մարդոց չարչարուելը Աստուծոյ կարգադրութիւնն է իբր երկնայի՞մ միջոց՝ իրարու կեանքին մասնակցելու եւ զայն զարգացնելու: Ինքնագոհողութիւն եւ տառապանքը մեծ դաստիարակիչ և կեանքի մաքրողականն են: Կան չարչարանքներ փրկարար ու փոխանորդական. անմեղը կը տառապի ոճրագործի համար զայն փրկելու նպատակաւ:

Անշուշտ դաւանական հարցերու մէջ թեր ու գէ՛մ այլ և այլ չափաւոր ու ծայրայեղ գաղափարներ չատկան. անոնց մէջէն ճշմարտութիւնը պիտի գտնուի ու զատուի ամէն մէկ անհատի անձնական ըմբռնումին համեմատ: Թող ամէն մարդ ինքնիրեն դատաւորը ըլլայ՝ ուղեցոյցը ունենալով միայն Սբ. Դիրքը:

Մենք այլոց գաղափարներով չսարսբերուինք՝ իբր հովեմ շարժեալ: Ինչ բանի որ հաւատացած ենք չկառուածինք անոնց, և ինչ բաներու որ կառուած ենք անոնք, չհաւատանք անոնց:

Ամէն բան քննեցէք ու բարին ա-

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

9.

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

Ծօթներորդ դարու ամենէն աչքա-
ռու դէմքերէն և մեր եկեղեցւոյ պատ-
մութեան ամենէն կարկառուն տնձնա-
ւորութիւններէն մին է Անանիա Շիրա-
կացի, նկատի ունենալով անոր մեր
առջեւ բացած նոր աշխարհի մը գոնեւորը,
որոնք ցարդ՝ գրեթէ գոց մնացեր էին
հայ գրողի և ընթերցողի առջև:

Մինչեւ դարս՝ մեր նախնիքները
գրեթէ ամբողջութեամբ պաշտօնով
կրօնական, բարոյական, փիլիսոփա-
յական և մանաւանդ պատմաբանական
գրականութեամբ: Անոնց մէջ չէինք
տեսած տակաւին որեւէ մէկը որ՝ ինք-
զինքը նուիրած ըլլար զուտ գիտական
ճիւղերու, թուաբանութեան, երկրա-
չափութեան, աստղագիտութեան, աշ-
խարհագրութեան և այլն: Արդեօք
այդ ճիւղերը ցարդ տեսակ մը շուայու-
թիւն, կամ աւելորդ յոգնութիւն կը
նկատուէին Հայոցս համար, արժանի
մշակման՝ միայն աւելի բախտաւոր տ-
րեւներու տակ ապրող ազգերու հա-
մար: Հայը հաշիւն ինչ ընէր, երբ միշտ
իր թիւը կը պահէր և՛ իր հարստութիւ-
նը կը կոտորակուէր...

Սակայն՝ չյուսահատինք, և դառ-
նանք Ա. Շիրակացի:

Այս պատուական կղերը, որ Անիցի
ալ կը կոչուի, կը համարուի ծնած ըլ-

մուր բռնեցէք», կը պատուիրէ Աւետա-
րանը: Պօղոսինման կարենանք ըսել
«Գիտեմ թէ որու եմ հաւատացեր»:

«Թիսուս Բրիտոս աշխարհ եկաւ մե-
ղաւորները փրկելու, և ես անոնց մե-
ծագոյնն եմ» ըլլալ մեր կենաց իտէալը:
Եւսեփոս Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

լալ Անիի շրջակայքը կամ Շիրակի
դաշտի գիւղերէն մէկուն մէջ: Երկար
ատեն յաճախած է Պոլսոյ և մանաւանդ
Տքապիղոնի բարձրագոյն վարժարաննե-
րը և չեղում մը կատարելով իր նախ-
նիքներու ճամբէն, հետեւած է զուտ
ուսողական (Mathematics) աշխարհա-
գրական և աստղագիտական ճիւղե-
րու: Ութը տարի աշակերտած է Տրա-
պիզոնի մէջ, աշխարհահռչակ յօյն թը-
ուաբանագէտ-աստղագէտին, Տիֆիկոսի,
որուն ամենէն փայլուն աշակերտներէն
մին դարձած է, իր մտացիութեամբ,
անմար խանդով և ուսումնասէրի տա-
ղանդով:

Շիրակացի միայն իբրեւ ընթերցող մը
և ուսումնասէր մը չի ներկայանար հայ
պատմութեան առջև, և եթէ այդ ըլլար
իր միակ յատկանիշը, արդէն շատոնց
մոռացութեան պիտի տրուէր անոր ա-
նունը և տասնեակներով դարեր վերջ
հայը պիտի չհետաքրքրուէր անով:

Շիրակացի ըլլալով դիտող, գննող և
ուսանող, արեւորդ մըն ալ էր: Հմայ-
ուած էր այն մեծ գաղափարէն թէ՛ ազ-
գին ծառայելու կոչումն ունի ինքը,
թէ՛ անոր առջեւ գիտութեան անկախ
չեմերը պիտի բանայ, թէ՛ անուսու-
թիւնը և խաւարը հետզհետէ պիտի չքա-
նան, շնորհիւ նոր լոյսերու և նոր քա-
ղաքակրթութեան մը:

Ահաւասիկ՝ ա՛յս տեսլիքով էր որ
ուղի ինկաւ Անանիա, գրականութեան
անդառտանին մէջ և դարձաւ մին այն
պատկառելի դէմքերէն, որոնք դարա-
գլուխներ կը կերտեն և անկիւնադար-
ձեր կը հիմնեն:

Այսքան ճոխ պաշարով մը բեռնա-

ւորութիւն, Հայաստան կը դառնայ Շիրակացի, հօթնհրապարակէ՝ բաղդատաբար մօթ շրջանի մը մէջ և կը լըծուի լուսաւորութեան գործին, իբր դատարարակ՝ ուսուցանելով շատ մը հետաքրքիր աշակերտներու այն բոլորը, որոնց տիրացած էր ինքը:

Իր գլխաւոր ծառայութիւններու շարքին պարտաւոր ենք նախ և առաջ յիշել այն պատուական երկասիրութիւնները, որոնք անգին բարիքներ զարգացնող համար, տալով ազգին ծանօթութիւններ երկրագունդիս, զայն շրջապատող տարրերու, և զայն կառավարող օրէնքներու մասին, ծանօթութիւններ, որոնցմէ ժամանք, տակաւին մինչեւ այսօր կ'ապրին իբրեւ գիտական անյիշելի ճշմարտութիւններ: Իր գլխաւոր երկն է Ասեղաքաշխութիւնը, որ մեծ պատիւ կը բերէ հեղինակին, ուր կը ճառէ աստղերու, լուսնի, արեւի և երկրի մասին, կը յիշէ եթերը, օր կը լեցնէ բովանդակ միջոցը. կը ջրէ այն գաղափարը թէ՛ ծովն է երկրագունդիս սահմանը, այլ՝ կը հաստատէ թէ, ծովը երկրի մէկ մասը կը կազմէ: Կը յիշէ ջուրի եռացման և շոգիացման մասին գրեթէ արդիական գաղափարներ. կը հաստատէ որ՝ ծիր կաթինը Վահագնի գողցած յարգերուն թափթափութիւնները չեն, այլ՝ հեռաւոր աստղերու հոյեբ միայն:

Այս յայտարարութեան գործէն զատ Անանիա դրած է նաեւ ժամանակի, օրերու, ժամերու, վայրկեաններու և այլնի բաժանմանց մասին շատ հետաքրքրական և առողջ ըմբռնումներով լի գիրք մը: Հեղինակած է, առկէ զատ, Ս. Դրոց չափերուն և կշիռներուն շուրջ հմտալից երկ մը: Այս բոլորով ալ չէ գոհացած և գրի առած է թուաբանական և երկրաչափական գրքոյկներ, օրոնք մեծամեծ օրհնութիւններ եղած են իր ժամանակին Հայ իրականու-

թեան համար, այդքան թանձր ագիտութիւնով մշտնջուած դարու մը մէջ:

Ահա՛ մարդը, որ չի բաւականանար բացում ճամբաներէն և հեղուակներու վրայէն ընթանալով, այլ կը բանայ նոթանոր արահետներ, մացառներու և դերբուկներու մէջ քրտինք ցանցնելով: Ահա՛ մտքի թռիչքով և աշխատանքի խանդով օժտուած մարդը որ իր միակ միտքաբանութիւնը կը գտնէ տեսնելով նորաւոր ուսանողներ, որոնք իր ձեռքովն իսկ և առաջին անգամ բացուած գիտութեան լուսաւոր ճամբէն քաշել կը սկսին և մինչև այսօր կը շարունակեն այդ շաւղին վրայէն ընթանալ:

Ա. Շիրակացի անխառնախառն, կտրուկ և զուսպ նկարագիր մը կը պարզէ իր բոլոր գրութեանց մէջ, որ ուղիղ կը համեմատի և ճշգրտագին կը յարմարի գիտական մարգերու մէջ դիպերող անձի մը, քանի որ՝ ոչ թուագիտութիւնը և ոչ ալ ուրիշ գիտութիւններ, չեն կրնայ չափարար, այլաբանութիւններով և պատկերներով շլացուիլ: Գիտական մտքի տիրանալու և անոր շնորհքներով զարդարուելու մտահոգութիւնը ունեցող ամէն մեկուն, դաս մը առնելու է Շիրակացիէն, թէ՛ յստակ, անօթութեամբ, պարզ և ճշգրիտ կրնան ըլլալ գիտական մտքի մը արտայայտութիւնները, թէ խօսքի և թէ գրչի տակ:

Հայեայ

ՌՇՏՈՒՆԻ

Հոգին իրեն կը քաշէ ինչ որ ինք դադանորէն կը անուցանէ, ինչ որ ինք կը սիրէ և ինչ բան որմէ կը վախճայ. ան կը հասնի իր գուրգուրանքին ենթարկած բաղձանքներուն բարձրութեան, և կ'իջնէ իր անզուսպ կիրքերուն մակարդակին: Պարագանքներ միայն միջոցներ են, որոնցմով հոգին իրենը, իր նմանը կ'ընդունի:

ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԻՆՉ ԿԸ ՍՈՐՎԻՆ

«Ինչ պէտք է սորվեցնենք» Այսպէս կը հարցընեն միշտ ուսուցիչներ, ծնողներ, և ուրիշ գործիչներ՝ որոնք նոր սերունդի հետ գործ ունին։ Սակայն արդիական կրթութեան համար ասկէ շատ աւելի կարեւոր հարցումը սա է թէ՛ մանուկը ի՞նչ կը սորվի։

Ենթադրէ որ ծնող մը կը տեսնէ թէ իր զաւակը իր շատ օխալ նկատած մէկ բանը կ'ընէ։ Ան հաստատ որոշուած մը կուտայ շիտակը իր զաւակին սորվեցնելու համար։ Խիստ կերպով կը խօսի մանուկին և թերեւս զայն կը պատժէ։ Այս բոլորը մանուկին վրայ շատ անհաճոյ տպաւորութիւն կը թողուն, և թերեւս ալ ճիշդով կը վերջանան։ Ծնողքին մտադրութիւնը բարի էր։ Բայց, որչափ յաճախ մանուկը այնպիսի տրպաւորութիւն մը կ'ունենայ որուն մասին ծնողքը նոյնիսկ չէր խորհած։ Մանուկին սորվածը սա է. — 1) Հայրիկը գէշ խառնուածք մ'ունի։ 2) Հայրիկը կրնայ անհաճելի ըլլալ և շատ մը ցաւ պատճառել։ 3) Դարձեալ բռնուելու չեմ։ Այս անտարբեր գէպք մը չէ։

Դպրոցական ունէ հարց մ'առ։ Ուսուցիչը գասի մը տեղը կ'որոշէ։ Ուսուցիչը կ'ակնկալէ որ աշակերտը այդ որոշուած գասին մէջ ուրիշ շատ մը բաներու հետ միասին այս ինչ որոշ բաները ալ գիտնայ, թէպէտ մանուկին չի ցուցնել թէ զորոնք ինք կարենոր կը նկատէ։ Դասին մէջ շատ բաներուն վրայ կը խօսուի. և ամէնէն շատ խօսուողը ուսուցիչը ինքը կ'ըլլայ։ Ան կը մոռնայ որ աշակերտը ընելով կը սորվի։ Ան կը կարծէ թէ Պրավիլի խահուէի ճարտարարուեստին, իրլանտայի քթանի

ճարտարարուեստին և Եգիպտոսի բամպակի ճարտարարուեստին մասին կը սորվեցնէ։ Բայց իրական արդիւնքը սա կ'ըլլայ. — խօսելու մէջ ուսուցիչը շատ կը վարժուի, իսկ մանուկները քիչ, թէպէտ վերջիններն են որ աւելի պէտք ունին արտայայտուիլ սորվելու։ Մանուկներու կը սորվեցուի երեք տարբեր երկիրներու մէջ երեք ճարտարարուեստներու մասին, բայց իրականին մէջ երեք երկիրներէն յիշուած ունէ մէկուն համեմատ միայն խահուէ, բամպակ կամ քթան ըսել կը սորվին։

Մենք բոլորս շատ դիւրութեամբ կը խօսինք մեր սորվեցուցածին մասին։ Բայց գոնաւորութեամբ կրնանք խօսիլ մանուկներուն սորվածին մասին։

«Ինչ պէտք է սորվեցնենք», ասոր պատասխանը ուրիշի մը կողմէ կրնայ պատրաստուիլ։ «Մանուկները ի՞նչ կը սորվին»։ այս հարցումին լաւ պատասխանը մենք միայն կրնանք տալ։ Եւ ճիշդ այս երկրորդ հարցումին պատասխանն է որ որոշած է և կ'որոշէ յառաջգիտութիւնը կրթութեան ունէ գծին վրայ։ Ուսուցումի մեծութիւնը կը գրտնւի գիտնալու մէջ թէ մանուկներու ի՞նչ եւ ի՞նչպէս պէտք է սորվեցնել։ քանզի այսօրուան մանուկներուն սորվածը պիտի որոշէ թէ վաղուան մարդը ի՞նչ պիտի ըլլայ։

Բ. Ֆ. ՄԱՐԳՐԻՄ

Ծ. ԽՃՄ. Մր. Մարքըմ Մանչերու Բարձրագոյն Վարժարանին փոխ տնօրէնն է։ Որ մեր խնդիրքին վրայ բարեհաճած է վերի գրութիւնը անգլիէնէն լեզուով գրի առնել։

ՄԵՐ ԽԱՂԵՐՆ ՈՒ ԶԲՕՍԱՆՔՆԵՐԸ

Ուաղալ, զբօսնուլ եւ զուարճանալ կեանքի բնական պէտքերէն մէկը կը կազմեն։ Ուրախութիւնը հոգիին բնական մէկ վիճակն է, իսկ տխրութիւնը պակասութեան մը արդիւնքն է։ Մեր մարմինը խաղի եւ զուարճութեան այնքան պէտք կը զգայ որքան հացի եւ ջուրի։ Գիւղացիներն ու երկրագործները ամէն օր մարմնամարզանք կ'ընեն իրենց զբաղումին բերումով։ Բայց քաղաքացիները միջոցներու պէտք ունին այս պէտքը գոհացնելու համար։ Այսօր քաղաքակիրթ աշխարհը, մանաւանդ մեծ քաղաքներու բնակչութիւնը, խաղի եւ զբօսանքի միջոցներու համար մեծ ճիգ եւ դրամ կը վատնէ, իսկ մամուլը սքօրի համար քաղաքական եւ վարչական խնդիրներէն աւելի էջեր կը յատկացնէ։ Մենք ալ պէտք ենք ուսումնասիրել այս կարեւոր հարցը։ Ուրախալի միեւնոյն ատեն լրջօրէն ուսումնասիրելի մէկ պարագանս ա է, թէ Սուրբոյ Հայ երիտասարդութեան մէջ ալ խաղի եւ մարմնակրթանքի հանդէպ մեծ փափագ մը արթնցած է, եւ թէ ամէն քաղաքի մէջ նոր խաղի ընկերակցութիւններ կազմուած են։

Ինչպէս որ պիտենք թէ մեր մարմնին պէտք եղած սնունդը ինչ կերպով պէտք է ստանալ եւ ինչ կերպով զայն պէտք է գործածել, նմանապէս անհրաժեշտ չէ՞ որ մեր զբօսանքի միջոցներու գործածութիւնն ալ սորվինք։ Մեր ուսուցիչն ու խմելիքը որչափ որ սխալ կերպով գործածուած են՝ մեր խաղի եւ զբօսանքի միջոցները ասոնցմէ աւելի սխալ գործածութեան մէջ չեն միթէ։ Այսօր բոլոր աշխարհը, ընտանիքներ եւ անհատներ ասոնց սխալ գործածութեան պատճառաւ ինչ մեծ վիշտի եւ տառապանքի ենթարկուած են։ Քանի ներկայ մտայնութիւնը

նը կ'ընդունի լուսենք, խմենք, զբօսնուք ու պարենքի սկզբունքը եւ կը նկատէ թէ կեանքի նպատակը մարմնական փափագներու գոհացումն է, կրնանք հիմնականէ երեւակայել թէ ապագային ինչ մեծ դժուարութիւններու պիտի հանդիպինք։ Մարդիկ և մանաւանդ երիտասարդներ պէտք է լաւ գիտնան թէ կեանքի նշանակէտը ինչ է։ Ուաղերն ու զբօսանքները վերջնական նպատակ չեն, այլ միայն միջոցն են՝ փորձապէս, մտաւորապէս եւ բարոյապէս կատարեալ անձնաւորութիւն մը շինելու համար։

Կեանքի մէջ կարեւոր հարցերէն մէկն ալ մեր կեանքին համար պէտք եղած բաներուն յարմար ժամանակը եւ չափը որոշելու կարողութիւնն է։ Մեր ընտրութիւնը եւ նշանակէտը որոշելու մէջ մեր ուղեցոյցը մեր մարմնական զգացումներ ըլլալու չեն, այլ պէտք է կատարելութիւն ըլլայ։ Մեր ամէն մէկ արարքը պէտք է մեզ քայլ մը վեր բարձրացնէ։

Մեր խաղի եւ զբօսանքի միջոցները կրնանք հետեւեալ մասերու բաժնել մեր կեանքին համար իրենց ունեցած ծառայութեանց համեմատ։—

1. Ուաղեր եւ զբօսանքներ որոնք ֆիզիքական կեանքի եւ ոյժերու զարգացման կը ծառային։ Ասոնք բազմաթիւ են եւ իրենց ծառայութեանց համեմատ՝ բազմատեսակ։ Ասոնցմէ ոմանք օրէնքի եւ հակահիշի ենթարկուած են, իսկ ուրիշներ խաղացողին փափագին եւ կամքին թողուած են։ Մի քանի օրինակներ տանք։—Շուեստական մարզանք, կիյգբոնդ, թէնիս, վազել, ցատկիկ, լողալ, որսալ, ձի հեծնել եւ նման խաղերը, թէպէտ քիչ թէ չափ ուղիմութիւն

կը պահանջեն, առաւելապէս կը ծառային մարմնի զանազան գործարանները զօրացնելու եւ միտքը հանգստացնելու։ Այս տեսակ խաղերն ընդհանրապէս պէտք են մանուկներու, ուսանողներու եւ մտային գործերով զբաղող մարդերու համար։ Բանւորական եւ գիւղացիական դասակարգերու համար այս տեսակ խաղեր շատ օգուտ չունին։ Ասոնք պէտք է կատարուին տեականօրէն, կանոնաւորապէս եւ որոշ մեթոտի մը համեմատ, որպէսզի մարմնի օգտակար կարենան ըլլալ։ Ամէն մէկ մանուկի մարմնակըրթանքի չափը պէտք է կանխիկ որոշուի մասնագէտներու կողմէ։

2. Խաղեր՝ որոնք առաւելապէս մտային կարողութեան գործածութիւնը կը պահանջեն։ Ասոնք ալ երկուքի կը բաժնուին, որոնցմէ առաջինը կը կազմեն այն խաղերն որոնք միայն յոգնած միտքի հանգիստ կուտան, մարմնական եւ մտային հանգիստի եւ զբաղումներու մէջ զանազանութիւն դնելու համար պէտք են։ Յաճախ պատրաստեալ մարմինն ու միտքը խաղալու մեծ պէտքը կը զգան։ Ասոնք ընդհանրապէս շանսի նարտի քուէի, զուարճալիքի յատուկ խաղեր են։ Դժբախտաբար ամէնէն շատ սխալ գործածուած խաղերը ասոնք են։ Հեռեւաբար, փոխանակ հանգիստի՝ յոգնութիւն, փոխանակ ուրախութեան եւ զբօսանքի շիղերու շարեալ վիճակ եւ տխրութիւն յառաջ կուգան։ Բախտախաղը այս տեսակ խաղերու յոռի գործածութեան արդիւնքն է։

Այս տեսակ խաղերու երկրորդ խումբին մէջ մեր մտային կարողութիւններուն մի քանի հատը կ'օգտագործենք։ Ասոնցմէ ոմանք մեր յիշողութիւնը կը սրին, ուրիշներ մեր երեւակայութիւնը կ'ընդարձակեն։ Ոմանք արագ եւ շիտակ տեսնելու եւ անոր համեմատ շարժելու կը վարժեցնեն։ Ճատրակի նման խաղեր հաշուելու կարողութիւնը կը մարզեն։

Այս խաղերէն ուրիշներ կամքը կը կրթեն։ Այս տեսակ խաղեր տեսակ մը գործնական կրթութիւն են եւ մարդու համար՝ շատ օգտակար։ Դպրոցականներն ու մարմնական շարժում պահանջող զբաղումներու տէր մարդեր ամէնէն աւելի այս տեսակ խաղերու պէտք ունին։ Հաշուակալներու, առեւտրականներու, մրտային ծանր աշխատանք ունեցողներու համար այս խաղերը անօգուտ են։

3. Խաղի եւ զբօսանքի մեր միջոցներուն մէջ ուրիշ կարեւոր կէտ մ'ալ բարոյականութեան բարձրացումը եւ զօրացումն է։ Յաւալի է դիտել որ խաղերու մէջ խարդախութիւն եւ խարէութիւն շատերու կողմէ յանցանք չի նկատուիր։ Մինչդեռ մաքուր եւ ուղղամիտ կերպով խաղալ զբօսանքի եւ ուրախութեան պայմանն է։ Կռիւլ յաճախ ասկէ կը ծագի։ Խաղի մը մէջ կարեւոր մէկ նպատակ է նաեւ երիտասարդը մտային եւ մարմնական գործունէութեամբ զբաղեցնել, եւ այս կերպով ստորին կիրքերը զրգռող զգացումներու առիթ չտալ։ Մրիտասարդները պէտք ենք այլեայլ եւ շիտակ կերպերով զբաղեցնել, հակառակ պարագային չարը զայն պիտի հրապուրէ։ Եթէ նպատակը մաքուր բարոյական մը եւ նւկարագիր մը արտադրել է, ուրեմն տղափանքը զրգռող բոլոր խաղերով զբօսնուլ յանցանք է։

Խաղերու մէջ ընդհանրապէս երկու կողմեր կ'ըլլան, որոնցմէ մէկը կը շահի իսկ միւսը կը կորսնցնէ։ Մենք պէտք է սորվինք չհպարտանալ երբ կը յաղթենք կամ կը շահինք, իսկ չյուսահատիլ եւ համբերել երբ կը պարտուինք կամ կը կորսնցնենք։ Կեանքը ելեւէջներու շարք մըն է։ Պէտք է նկատի առնել նաեւ թէ խաղալու եւ զբօսնելու ատեն իրենց ոյժովը, զգացումովը եւ կազմովը մեզմէ տարբեր մարդիկ կը գտնուին։ Մենք պէտք է սորվինք ուրիշները յարգել եւ անոնց հանդուրժել։

Ցաւով կը յայտնենք թէ իրականութիւնը ասկէ կը տարբերի: Խաղի և զբօսանքի վայրերէն շատերու տէրերն ու վարիչները անբարոյիկ, գինեմոլ, խաղամոլ և չահաժող մարդիկ են: Նպատակին հակառակ տաճն բան կայ: Շարժապատկերը, ձիարշաւը մեծապէս կ'օգնեն բախտախաղի և անբարոյութեան աւելնալուն: Մարդոց մեծ զանգուածներ խումբերով ասոնց կը հետեւին:

Ո՛վ քրիստոնեայ եկեղեցիներ, զպրօցի տնօրէններ, դաստիարակներ և առաջնորդներ, ձեր պարտականութիւնը ձեռք չիկը և Վհատի՞լ է այս մեծ վտանգին

առջեւ: Դուք պէտք չէ՞ որ ձեր հակազուլթեան և հակակշիռն ենթարկէք այս խաղի և զբօսանքի վայրերը, որոնք այնքան պէտք են կեանքի համար: Ո՛վ պիտի կառուցանէ օրինակելի խաղավայրը այս կարօտ աշխարհիս վրայ: Ո՛վ պիտի առաջնորդէ երիտասարդութեան և բոլոր մարդոց այս փափազները ուղիղ ճամբաներու, օգտակար մարզերու մէջ: Ո՛վ հայ ծնողներ, զիտէ՞ք թէ ձեր սրտի հատորները այսօր, այս գիշեր ո՞ւր, որո՞նց հետ և ինչպիսի՞ գրօսանքներով իրենց ժամանակը կ'անցնեն:

ՏՈՔԹ. Ֆ. ՅՈՎԼԱՆԵԱՆ

ՕՐ. Ա. ԵՌՀԱՆՍԸՆԻ ԵՐԵՄՅԱՄԵԱԿԸ

Անձնուիրաբար գործող վաստակաւորի մը արդիւնաճոխ գործունէութիւնը վերջիչել, յարգանքի երախտագիտական պարտք մը հատուցանել է ազգի մը համար, թէպէտեւ բարեգործ, ազնիւ և առաքինի մշակ մը չի սպասեր գովեստի արտայայտութիւն մը:

Ասոնցմէ մէկն է Շուհտայի Օր. Ա. Եօհանսըն, որ մեր ազգին մէջ ունեցած է 30 տարուան օգտակար գործունէութիւն մը, որուն համար իրեն և իր պատկանած Կանանց Միսիոնարական Ընկերակցութեան կը պարտինք ջերմ երախտագիտութիւն:

Շուէտի մէջ, 40 տարիներ առաջ կազմակերպուած է Կանանց Միսիոնարական Ընկերակցութիւնը, որուն կը պատկանի և զոր կը ներկայացնէ Հայոց մէջ 30 տարիներ անխոնջ կերպով աշխատող Օր. Եօհանսըն:

Շուէտի վեց միլիոն բնակչութեան մէջ զանազան յարանուանական եկեղեցիներ կան:

Կանանց այս Ընկերակցութիւնը վազ-

մակերպուած է լայն գետնի վրայ և անդամահինի արձանագրած է բոլոր եկեղեցիներէն, այս օր ունի հինգ հազարէ աւելի գործօն անդամուհիներ:

Անոնք դաշտի ունին Զինաստան, Հնդկաստան և Ափրիկէ: Ներկայացուցիչները յիշեալ դաշտերու մէջ կ'աշխատին կրթական, բարոյակոն, և առաւելապէս կրօնական և հոգեւոր մարզերու մէջ:

Շուէտի Կանանց Միսիոնարական Ընկերակցութիւնը 1895ի ջարդէն ապաստուած Հայերու մէջ աշխատելու մտք, կուգէ նաեւ ներկայացուցիչ մը զրկել թրքահայաստան:

Դործին և դաշտին այս գժուարութիւնները նկատի ունենալով հանգերձ երիտասարդուհիի մը սրտին մէջ այլասիրութեան ոգին կը պոռթկայ, ու ան առպարէզ գալով համարձակութեամբ և պաշտօնապէս կը հաղորդէ կեդրոնին, թէ ինք պատրաստ է այս գործը ստանձնելու:

Օր. Ա. Եօհանսըն էր այդ օրիորդը:

որ կը զրկուի Արեւելք, Հայերու մէջ աշխատեցու նպատակաւ: Խարբեղի շրջակայքը 1902 Հոկտեմբերին գործի կը սկսի զոր տակաւին կը շարունակէ: Ան իր կարելին կ'ընէ ջարդէն վերապորոզ ազգին սպաւոր մնացորդները մխթարելու և անոնց անսահման պէտքերուն դոհացում տալու համար: Անոնց ցաւերու սփոփման մէջ կը գտնէ իր վարձատրութիւնն ու երջանկութիւնը: Նորակազմ գերմանական որբանոցի մը մէջ, ուր 800 երկսեռ որբեր հաւաքւած էին, Օր. Եոհանսըն կ'աշխատի, որպէս անոնց մխթարիչը: Հիւանդապահը, առաջնորդը և մայրիկը:

Իր Ս. Գիրքի ընթերցումովը շուտով կը սորվի մեր լեզուն: Նոյն տեղ բացուած երկու մանկապարտէզներուն վրայ կը հսկէ իբրեւ վերատեսուչ:

Իր կեդրոնին զրկած սրտաճմլիկ գրութեանց վրայ, Միութիւնը նոր թափով և լայնօրէն ի նպաստ հայերուն հանդանակութիւն կը կատարէ թէ Շըւէտի և թէ Դանիայ մէջ:

1909ին կը փոխադրուի Մուշ և հոն կը շարունակէ Միութեան գործը: Հասեալ որբանոցի մէջ կը կատարէ երկնային հրեշտակի դերը:

Դժուարութիւններ կը կանգնին իր տաշիւ և սակայն անոր հոգիին թախքը և խանդին ոյժը երբեք չեն թուանար:

1916ին նախ մարմնական տկարութեան և յետոյ Թուրքիոյ մէջ մնալու և գործելու համար տիրող արկելքներու պատճառաւ կը ստիպուի վերադառնալ իր հայրենիքը:

Կազդուրուելէն անմիջապէս հայը մեղուաջան աշխատանք կը թափէ միծ գումարներ հանգանակելու համար: Մասնաւոր բանախօսութիւններ կ'ընէ զանազան կեդրոններու մէջ, ուր ժողովուրդը կը մասնակցի առատաձեռնութեամբ:

Թիւրքիա վերադառնալ իրեն համար կարելի չըլլալով, հոն գտնուող Գերմանացիներուն միջոցաւ կը յաջողի հանգանակուած գումարները գործածել:

1920ին Կ. Պոլիս կը հասնի, Խարբեղը երթալու համար: Կառավարական անցագրով, մինչև Սասուն կը ճամբորդէ. ապա՝ անկէ անդին չի թոյլատրուիր երթալ: Թուրքերը հալածում են զինքը ըսելով իրեն. «Մենք Պոլսոյ հրահանգը չենք ճանչնար»: Ժառհառ, կը վերադառնայ Պոլիս և կ'աշխատի գաղթականաց մէջ: Երկու տարի ետքը դարձեալ հիւանդանալով կը դառնայ հայրենիքը:

Դարձանումէ և կարճ հանգիստէ հետքը 1923ին Սեւանիկ կը հասնի, ուր հազարաւոր հայ գաղթականներ լեցուած էին:

Օր. Եոհանսըն, երբ կ'այցելէ գաղթականները, չափազանց ազդուած կը վերադառնայ բնակարանը և ծնրադիր կ'աղօթէ, ու կը նուիրուի հայրենագոյրկ հայերու ծառայութեան:

Օր. Եոհանսըն Սեւանիկի մէջ իր տասնամեայ բեղուն գործունէութեան միջոցին այլևայլ կերպերով հայիւն օղնած է:

Ան խեղճուկ խրճիթները այցելելով մխթարած է յուսաբեկ և անօգնական ժողովուրդը:

Աղքատ հիւանդներու դարձանումին համար մասնաւոր կարգադրութիւններ բրած է: Մինչև Գիւմարի միջին հաշուով ամսական 2000 տրախմի ծախսած է միայն դեղերու համար:

Իր ընկերութեան կողմէ ղրկուած հանդերձները բաշխած է ժողովուրդին: Միայն հայերու համար տարեկան 20 հազար հազարակէն բերել տուած է:

Ձեռագործի ճիւղը մը բռնալով գործ հայթայթած է շատերուն: Առաջին տարիներուն շուրջ 200 կիներ և օրիորդներ օգտուած են ասկէ: Ներկայիս ա-

սոնց թիւը 50 է :

Օր. Եռնանսըն ունեցած է նաև մեծ չափով աւետարանչական գործունէութիւն : Զանազան արուարձաններու մէջ վարած է կրօնական ժողովներ :

Տեղւոյս Հայ Աւետարանական Եկեղեցիին մէջ վերջին տարիներս գործօն դեր ունեցած է, զոր հռանդով կը շարունակէ : Եկեղեցիին հրգեհոնահարն է եւ հրգչախումբին՝ առաջնորդուհին : Բանիցս առաջնորդած է Կանանց Օժանդակ Ընկերակցութեան ազօթ ժողովներէն : Ասոր հետ այժմ կը պատրաստէ տօնավաճառ մը ի նպատակ եկեղեցիին : Օր. Եռնանսըն Հայ մանուկներու նախնական կրթութեան մէջ ալ գործօն դեր ունեցած է :

Անկախիկի Ազգային իշխանութեանց հետ համախորհուրդ, 4—5 տարբեր վայրերու մէջ քայքայուած է զպրոցներ : Ներկայիս ամսական 12 հազար տրախմիով կ'օգնէ ընդհանուր կրթական պիւտճէին : Աշակերտաց մերթ ընդ մերթ ըրած է զանազան նուէրներ : 1927 էն իվիր մինչեւ հիմա 566 հազար տրախմի ծախսած է կրթական գործի համար :

Ըսուած է թէ ռեկանքի իմաստը ուրիշի համար ապրելու մէջն է : Եւ Օր. Եռնանսըն ապրելով հայերուն համար կեանքի թաքուն իմաստին թափանչեք է :

Օր. Եռնանսըն ինքզինքը հայու հետ նոյնացուցած է մասնակցելով սնոր տառապանքին, լալով հայու պէս մեր Ազգային մեծ և փոքր աղէտներուն վրայ :

Համեստ, հեղահամբոյր, ասկիւ, մաքուր և անկեղծ քրիստոնեւ մըն է : Բրիտոստանման հաւատացեալ մը և Անոր հեռուող անձնուէր մշակ մը : Ան Սեւանիկի Հայ Գաղթականաց օրհնութիւնն է :

29 Հոկտ. 932

Կ. Ս. ՖԱՐԱՃԱՆ

Սեբանիկ

ՋԱՆԻՑԻ ԷՋԸ

ՄԱՂԹԱՆԻՍ

Այս նոր տարուան առթիւ կը մաղթեմ՝ որ ամէն մէկ անգամ արթննայ իր խոր քունէն, ուշի ուշով կարգայ իր ուխտը, խոնարհարար խոստովանի իր զանցառութիւնը, անկեղծօրէն որոշէ վերանուիրում մը, հաստատարար վճռէ յարատեւութիւնը, լիովին յանձնուի Յիսուս Բրիտոստի, մշտարժարժ պահէ իր ազօթքի և հաւատքի կրակը ու սիրով լծուի ծառայութեան քաղցր լուծին :

Կը մաղթեմ որ Զանիցի վարչութիւնները և յանձնախումբերը խորապէս զիտակցին իրենց ծանր պարտականութեանց և վեհ կոչումին, գնահատեն իրենց սուրբ առանձնաշնորհումը և զիմադրաւեն իրենց լուրջ պատասխանատուութիւնը :

Կը մաղթեմ որ նոր տարին ամէն ընկերութեան քերէ նոր տեսիլներ ձանկարելին աւետարանելու, և աւետարանչական եռանդ՝ խոսքի զաշտերը մշակելու, կեդրոններէ հեռու եղող երիտասարդներու և ոչ-քրիստոնեայ պատանիներու մասին խորհելու, ազօթելու և գործելու, ինկած նկարագիրներ վերանորոգելու, և կորսուած կեանքի փրկելու՝ առաջնորդելով զանոնք Փրկիչ Յիսուսին :

Կը մաղթեմ որ անոնք միջոց ըլլան տարբեր եկեղեցիներու, յարսնուանութիւններու և ազգութիւններու միջեւ Բրիտոստայանի յարաբերութիւններու հաստատուելուն :

Հաղպ

Յ. ՉԱԳՄԱԳՃԵՍՆ

Ովկիանոսներու յատակէն, տեղ տեղ, թաքմ և անոյշ ջուրի աղբիւրներ բխելով կ'անաշջեն իրենց ջուրը զտնուող աղի և լիւղի ջուրերը և շատ մը նաւերու համար խմելու ջուր կը հայթայթեն : Դո՛ւն ալ, ընթերցո՛ղ, աշխարհ կոչուած այս լիւղի ովկիանոսին մէջ կրնաս քաղցր ջուրի աղբիւր մ'ըլլալ, եթէ կենաց ջուրի ակին հետ կապուած ըլլաս :

ԽՈԿՈՒՄՆԵՐ

Նոր Տարի է՝ Խոկալու միտում մը կը զգամ հոգւոյս մէջ։ Բըսքինի հարցումները կը գրաւեն միտքս. «Ինչո՞ւ եմ հոս, ո՞ւր կ'երթամ, ի՞նչ է կեանքը?»

Գիտութիւնը ինծի կ'ըսէ. «Կեանքը միջավայրին հետ ներդաշնակում, կամ թէ ներքին եւ արտաքին յարաբերութիւններու յարմարում է։» Ես յարաբերութիւն ունիմ ընկերիս հետ, անձիս հետ, եւ գոյութեանս ազդիւրին հետ, որոնք կը կազմեն իմ միջավայրս, սակայն ես ներդաշնակ յարաբերութեան մէջ եմ անոնց հետ։ Ահա հարցը։

Երբ աչքս դարձնեմ դէպի իմ կեանքը՝ կըստիպուիմ բացազանչելու. «Ահ, ի՞նչ խղճալի մարդ եմ ես, ո՛չ թէ բոլրին զոր կուզեմ՝ կ'ընեմ, հապա չարը զոր չեմ ուզեր՝ զայն կ'ընեմ»։ Երբ դառնամ ընկերներու հանդէպ իմ պարտականութեանս կը ստիպուիմ ազազանչելու. «Ի՞նչ անձնատէր մարդ եմ ես, իսկ երբ Աստուծոյ դառնամ՝ իմ իսկ դատաւճիռս կ'արձակեմ՝ ըսելով. «Ի՛նչ մեղաւոր մարդ եմ ես»։ Ո՛հ, արդեօք անկարելի է այդ պաղափարական ներդաշնակ կեանքը ապրիլ։

Բայց ո՛չ, եղաւ Մակը Եր իրականացուց զազափարականը, լիովին ապրեցաւ կատարեալ կեանքը եւ մինչեւ իսկ կրցաւ ըսել. «Ես ու Հայրը մէկ ենք»։ Այդ Անձին հպման տակ փոփոխամիտ Սիմոն եղաւ Պետրոս, զօրութեան վէմ, Խաչին վրայի տապալկը եղաւ Անոր հետ հանդերձեալ կեանքը մտնող առաջին անձը, Օգոստինոս հրամարեցաւ առաւակութենէ եւ եղաւ Եպիսկոպոս, ուսումնական եւ մատենագիր, Պրանչիսկոս Ասիզեցին թողուց կեանքի խրախճանութիւնները եւ շրջիցաւ ազգաստակայն ուրախ եւ զուարթ, Ճոն Պընեան՝ արբեցող թիթեղագործը՝ զրեց Քրիստիանոսի ծամբորդութիւնը։ Ես

ալ, ուրեմն, փոխանակ ինքզինքս չըտեմ աշխատելու «Ելլեմ երթամ իմ Հօր» տունը», քանզի այս է կեանքը։

Հայկա

ԼԻՏԻՍ. ՓՈՂԱՏԵԱՆ

ԾՆՈՒՆԴԻ ՅՈՅՍԵՐ

Քնարս յոյսիս տակ մեղմօրէն կը թըրթռայ, Ու ես կ'երգեմ դարագլուխ մը վաղուան, Զախարի օրերն զիականցած ճամբուս վրայ կ'անհետանան ցաւերուս հետ նոյն մահուան։

Կեանքի խոցերն, ցաւի բոցերն կը մարին՝ Քրիստոսի Ծնունդին մէջ աննւման։

Ծնունդըն այս՝ նոր յոյսերու նո՛ր տարին է, ուր յոյսի հոյլեր կան ինձ աննւման...։

Հալէպ

ՅԵՍՍԷ ԴԱԻԹԻԱՆ

ՆՈՒՅՐ ՄՕՐՍ՝

Մա՛յր իմ անոյշ, ես՝ հէք որդիդ տարագիր՝ քեզ կը զրկեմ այս առողբը զերթ նըւէր։ Սրտէս բղիւսած ըզգացումներ անբասիր, կը ճամբեմ քեզ որպէս մասո՛ւնք, որպէս սէ՛ր...։

Մենութեան մէջ երբ կը նստիմ առանձին, Դաւ մայրական դէմքըդ անոյշ կը յիշեմ։ Ու կարօտի տենչանքներովս անձկագին շեղահամրոյր նայուածքըդ ես կ'երազեմ։ Պիտի դառնամ օր մը սակայն ես քեզի, Ու փաթթելիմ պիտի վիզիդ ջերմապէս։ Եւ հանգչեցնեմ պիտի գլուխս պանդուխտի, Ծունկիդ վըրայ, որ ճակատս դուն շոյես։ Հարստութեան եւ ոսկիի սեղ քեզի Բեկուած սիրտը պիտի բերեմ զերթ նըւէր։ Պիտի բերեմ, ինչ որ տըւիր դուն ինծի, Սի՛րտ մը, մա՛յր իմ, սի՛րտ մը, համակ տենչա՛նք, սէ՛ր...։

Նիւ Եորք,

Զ. ՀԱՃԵԱՆ

ՄԵՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ

Տիկ. Ե. Սարգիսեան, երբ անցեալ տարի իր ամուսնոյն հետ Միացեալ Նահանգները այցելեց, չմոռցաւ մեր սիրելի Զանիցը, որուն կապուած կը մնար ամբողջ հոգիովը։ Հոն՝ իր բարեկամներէն կրցած էր նուէրներ հաւաքել դաշնակի մը համար եւ այսպէսով կ'իրականանար մեր տարիներու երազը։

Նոյ. 25ին ունեցանք մեր առաջին երաժշտական երեկոյթը։ Ժամը 7.30ին

էմանուէլ եկեղեցւոյ վարի քրահը արգէն լեցուած էր երկսեռ բազմութեամբ մը՝ մեծ մասով երիտասարդներէ բաղկացեալ: Հանդէսը բացուեցաւ Վեր. Ս. Աղպապեանի կողմէն «Աստուած իմ երբ հոգիս նայիս հոգեւոր երգով և ազօթքով մը: Ապա բեմ հրաւիրուեցաւ Տիկ. Ե. Սարգիսեան որ խօսեցաւ «Իտէալ Երիտասարդը և Անոր Կոչումը» նիւթին շուրջ, քաջալերական խօսքեր ուղղեց ա՛յն երիտասարդներուն որոնք իրենց ուժը Եկեղեցւոյ և Գրիգորի համար կ'ուզեն գործածել. գովեց ջանասէրներուն ընդգրկած ուղին և աւելի յաջողութիւն մաղթեց անոնց: Մեկի համար ամէնէն հաճելի բանն էր մանաւանդ լսել իր բերնէն թէ ինք Զանիցի մայրիկէն կրնայ նկատուիլ՝ անօր անդամակրուած ըլլալով նոյն իսկ ընկերակցութեան սկզբնական տարիներուն և թէ մինչեւ հիմա, հակառակ իր յառաջացեալ տարիքին, զաղրած չէ հոգիով և գործքով Զանիցի անդամ մ'ըլլալէ:

Ապա յաջորդաբար բեմ գալով դաշնակի վրայ նուագեցին՝ Տիկ. Ա. Փռլատեան՝ սօլօ, Տիկ. Լ. Յովնանեան՝ սօլօ, Օրք. Է. Դանիէլեան և Ա. Սարգիսեան՝ տուէթ, Պ. Պապիկեան սօլօ, Է. Սուր Օղլանեան և Ա. Գարամանուկեան տուէթ, Պր. Պ. Գալֆաեան սօլօ, Պր. Ս. Չամիչեան նուագեց ջութակի վրայ, որուն կ'ընկերանար Պր. Պ. Դալֆաեան դաշնակի վրայ և Պր. Ջ. Րուպեան նուագեց ջութակի վրայ, որուն կ'ընկերանար Օր. Պ. Պապիկեան դաշնակի վրայ:

Հանդէսի վերջաւորութեան՝ Տիկ. Փռլատեան ընկերակցութեան կողմէ շնորհակալութիւն յայտնեց Տէր և Տիկ. Սարգիսեանին իրենց թափած անխնայ ջանքերուն նամար և բոլոր այն բարեկամներուն՝ որոնք իրենց նուէրներով յաջողութեամբ էին այս ձեռնարկը:

Եւ այս առթիւ իրեն նուիրուեցաւ ժապաւէնի մը ծայրը կցուած ԶԱՆԻՑԻ մենատառը:

Հայեպ

Վ. ՄՍՐԼԵԱՆ

Հոկ. 30, Կիրակի օրը Էմանուէլ Եկեղեցւոյ Աղջկանց Զանիցին համար չառուարխալի օր մը եղաւ: Տասն և վեց օրիորդներ կրտսերներու Բաժնէն անցան մեծերու բաժինը: Անոնք եղանակով մը ներս առաջնորդուելով նստան իրենց յատկացուած տեղը, ապա Տիկ. Ա. Փռլատեանի կողմէն Զանիցի մասին հարցումներ ուղղուեցան իրենց, և յետոյ անունները արձանագրուելով ընդունուեցան անդամակցութեան: Այս առթիւ իրենց նուիրուեցան մէկ մէկ ժապաւէն որոնց վրայ գրուած էր՝ «Ինձմէ բարձր վէմին առաջնորդէ զիս»: Նոր անդամները նոր եռանդ բերին իրենց հետ:

— Էմանուէլ Եկեղեցւոյ անդամակցութեան ընդունուեցան Զանիցին 12 երիտասարդներ: Զանոնք շնորհաւորելով հանդերձ կ'ուզենք ուրիշ ընկերակցութիւններու և ջանասէրներու ալ ուշադրութեան յանձնել այս կէտը: Արդեօք պէտք չէ՞ որ ամէն մէկս լըջօրէն խորհինք մեր եկեղեցիներուն անդամակցելու մասին:

— Տեղ. Միութեան թելադրութիւնով Հալէպի Զանիցիները որոշեցին մասնաւոր իրիկուն մը (Չորեքշաբթի) յատկացնել, մեր ընկերակցութիւններու և անդամներու մասին խորհելու և աղօթելու: Կը խորհինք թէ ամէն անգամ և Զանիցը սիրող բարեկամներ պիտի յիշեն այդ իրիկունը:

— Հալէպի Զանից ընկերակցութիւնները, թելադրութեամբ Տեղ. Միութեան, իրենց մէջ հագստեղէն և գրեկական պիտոյք հաւաքելով փութացին Գալաթուրանի աղքատ մանուկներուն և մասամբ ալ ընտանիքներուն օգնելու: Մասնակցեցան նաև անդամ չեղողներ:

ՇԱՀԵԿԱՆ ՆՈԹԵՐ

ՎԵՐՋԵՐՍ նորատեսակ լաժբար մը շինուհեցաւ Ամերիկայի մէջ որ բոլորին ուշադրութիւնը գրաւեց: Հոսքերի, բաժակներու, մատիտներու և մինչև իսկ սիկարի մոխրին համար, մասնաւոր գնիլիք տեղիւր ճաշակաւոր կերպով պատրաստուած են անոր վրան և բոլոր տիջը:

ԱԶԲԸ լոյս հաւկթասէրներուն: «Եւ իկտարական աչքերն, անունով մեքենայ մը հնարուեցաւ, որուն միջոցաւ կարելի պիտի ըլլայ հաւկթիին գէշը աղէկէն դատել:

ՖՐԱՆՍԱԿԱՆ հրեշտակածուկը (angel fish) որ արուեստական փոքր աւազաններու մէջ կը պահուի, վերջերս հասկցուեցաւ որ միայն ամիս մը կրնայ ապրիլ:

ՎԵՐՋԵՐՍ փաստուհեցաւ թէ Ամերիկայի մէջ սառնակոյտի գոյութիւնը չստիւն է: Սթիթսոնիլն կոչուած գիտական հաստատութիւնը անոնց հնութիւնը 15000-30000 տարիներու կը հասցնէ և անոր անմիջակէն հետեւեալքը ըլլալով կը յայտարարէ թէ Ամերիկայի մէջ մարդկային կեանքը 15000 տարի առաջ գոյութիւն ունեցած ըլլալու է:

ԱՇԽԱՐՀԻՍ ամենախոշտենկ տեղը Փիլիպինս կղզիներու մօտ կը գտնուի, որ 35100 ոտք է: Երկրորդ ամենախոշտենկը Նոր Զելանտայի հիւսիսային կողմը կը գտնուի որ 30930 ոտք է: Աղլանգիտանի ամէնէն խորունկ տեղը հազիւ 27,972 ոտքի կը հասնի:

ՉԱՐՄԱՆԱԼԻ ժամացոյց մը հնարուեցաւ վերջերս: Ատիկա ո՛չ սլաք ունի ո՛չ ալ շրջանակ. սակայն թիւերը ինքնաբերաբար կ'երեւան որոշ տեղ մը, որոշ ժամանակի մը մէջ: Փոքրիկ միակ գիւրաւ կրնայ կարգաւ այս թիւերը և տեղեկանալ ժամանակին փոփոխութեանց:

ԴԱՆԻԱՑԻ Տօթ. Քոխ Կրինլէնտի իր հետազոտութեանց միջոցին, չորքոտանի բրածոներ գտաւ: Ասոնք Մաշկոտնեայ են մաշկապուխ (stegoccephalian) և նաեւ երկակնեցազ, Ձուկերու յար և նման են: Ասոնց տիրուէր արգէն վազուց անհետացած է:

ԲԱԶՄԱԶԻԱՂ դերձակներու և տանտիկիներու աչքին լոյս: Նորատեսակ մատնոց մը գործածուիլ սկսաւ Պիլիինի մէջ: Այս մատնոցը փոքր ասեղնոց մը ունի ուր ասեղը հաստատուած է եւ րուն ծակէն դերձանը շուտով կրնայ անցուիլ:

ԵԹԷ ովկիանոսներու ազը հաւաքելու ըլլայինք, կարող պիտի ըլլայինք Միայ. Նահանգները մէկ ու կէս մղոն թանձրութիւն ունեցող խաւով մը ծածկել:

ԻՏԱԼԱԿԱՆ բանակի երկու պաշտօնեաներ վերջերս (silencer) «լռեցնող» մը հնարեցին. որով կարելի պիտի ըլլայ հրազեններու ձայնը անլսելի հեմուլը անտեսանելի դարձնել:

ՓՈՐԲԱՄԱԽԱԼ վառարաններ հնարուեցաւ Ամերիկայի մէջ. զայն կարելի է գրպաններու մէջ պաշտպանել: 24 ժամ շարունակ կրնայ տաքցնել: 120 աստիճան տաքութիւն կ'արաւարդէ այս ծխատուփի մը մեծութեամբ գործիքը որ նոր յայտնութիւն մըն է մսկոտնեներուն համար:

ՈՍԿԻԷ, նիքէլէ, արծաթէ և արծյրէ ապսները փայլեցնելու համար նոր քիմիական բաղադրութիւն մը պատրաստուած է, քարիւղը՝ քթմաներկի (երկաթի թթուատ) մանրահատ փոշիին հետ խառնելով:

ՎԵՐՋԵՐՍ, Ֆրանսա նաւ մը չենեց, որուն նմանը ելքիք տեսնուած չէ սկէ սովկիանոսի որայ: Աշխարհիս մեծագոյն նաւն է այս, որ Նորմանտիա (Normandie) անունով կը ճանջցուի, որ ու-

նի 300 մէթր երկայնութիւն, 30 մէթր լայնութիւն, 30 մէթր բարձրութիւն, և 30 միլիոն քիլօ ծանրութիւն։

ԱՐԴԻ գիտութիւնը շատ բարեփոխուեցեր կատարած է հին եգիպտացիներու զմասեղու արուեստին վրայ։ Զմասեղու արզի եղանակը մոմանիւթը կ'օգտագործէ, որով մոմիան թէ ձեւի և թէ գոյնի տեսակէտով բնական կը դառնայ։ Այնպէս որ 3000 տարի վերջ մեր սերունդները մեր մոմիաները քննելով մեզ պիտի ճանչնան այնպէս ինչպէս որ էինք։

ՄԵՐՍԻԿԱՅԷՆ կրիայի իւզ կ'արտածեն արտասահման։ Մեքսիկացիներ այս իւզը կը գործածեն արտի գանազան հիւանդութեանց համար և Մեկսիկոսհիներ երեսի մորթին գեղեցկութիւն տալու համար։

ՃԱՄԲՈՐԴՆԵՐ, որոնք օդանաւով ինքնաշարժի եզերքը կը ճամբորդեն, յաճախ կը տեսնեն մէկ ժամուան մէջ երեք վերջալոյսներ։ Ասոր պատճառը նէվատա Լեռնաշղթաներու երեք յոռնակատարներն են որոնց իւրաքանչիւրին գագաթէն կը տեսնուի նոյն վերջալոյսը։

ԱՆԴԼԻՍՏԻ գիտնական մը վերջերս այն գաղափարը յայտնեց թէ մարդուն տարիքը կարելի է գիտնալ յօնքիրու տեղաւորումէն։ Ան կը յայտարարէ թէ քանի տարիքը յառաջանայ յօնքը այնքան ցածնալով աչքին կը մօտենայ։

ԱՇԽԱՐՀԻ ամհնամեծ արօրը կը գրանւի Գալիֆօրնիոյ Օրէյնէ գաւառին մէջ։ Արօրը 4 օտք բարձրութիւն և 20 օտք երկայնութիւն ունի։ Կը կշռէ մէկ թօն և կ'արժէ 2000 տոլար։ Այս ահագին արօրը կը քաշուի երեք ծանր քարշիչ մեքենաներով (tractors) և կ'արող է հերկել օրական հինգ արտավար հող, այսինքն, 217,600 քառօտք։

ԵՐԿԻՐՍ՝ որ բնաւ հանդիստ չունի,

անդադար բերքեր կ'արտադրէ։ Յունվարին՝ Աւստրալիա, Ռարուկուէյ, Չիլի և Արժանթին գործի լծուած են։ Փետրուարին՝ Եգիպտոս և Հարաւային Հնդկաստան։ Մարտին՝ զարձակ եգիպտոս յետոյ Ափրիկէ և Հնդկաստան։ Ապրիլին Պաղեստին, Պարսկաստան և Մեկսիկա։ Մայիս, Յունիս, Յուլիս, Օգոստոս և Սեպտեմբեր ամիսներուն Միայ։ Նահանգները, Գանատա, Ռուսիա և Սկանտինաւեան երկրներ, ինչպէս նաև Սիպերիա հոռնաքի վրայ են։ Հոկտեմբեր՝ բազմազարդ ամիս մըն է Շուէտի, Ֆինլանտայի, Նորվեկիոյ, Աւստրալի, Հիւս. Գանատայի և Հիւս. Ռուսիոյ գեղացիներուն համար։ Ինչպէս նաև Նոյեմբեր ամիսը Բերուսի և Ափրիկէի բնակիչներուն համար։ Վելաչպէս Դեկտեմբերը առատ հոռնաք կը բերէ Պարսկայի և Արժանթինի ընդարձակ դաշտերուն, աշխատանքի հրաւիրելով հնձուորները։ Օրհնեալ ըլլան երկրին ու անոր հնձուորները։

ԱՇԽԱՐՀԻՍ բնակչութեան գրեթէ մէկ երրորդը մալարիայէ կը տառապի։ Տարեկան 2 միլիոն զոհեր կը տանի այս մալարիա կոչուած հիւանդութիւնը։

ՆՈՐԱՏԵՍՍԿ ինքնաշարժ մը հնարուեցաւ վերջերս օրնաւակի մրձենունի։ Կրնայ սուրալ թէ ջուրի և թէ ցամաքի վրայ միեւնոյն արագութեամբ։

ՄԻՍՏ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ մէջ տարօրինակ օձ մը կայ որուն գլխուն հետեւը զարմանալի նմանութեամբ կնոջ մը գիմանկարը կը տեսնուի։ Ասիկա բնութեան վրձինէն ելած զարմանալի և հագուագիւտ գործ մըն է։

ԱՅՍ ՏԱՐՈՒԱՅ Ողիմպիական խաղերուն մէջ, Անգլիա ինքնաշարժի, օդանաւի, շոգեկառքի և շոգեմակոյկի արագութեան մրցանակները խից իր մրցորդ ազգերէն։ Կ'երեւի երբեք թոյլ չպիտի տայ օտարականի մը որ գետնին, օդին և ջուրին վրայ իշխէ։

ՎԵՐՋԵՐՍ ԵՍԵՅԱՄՈՒԼԹԻՆԸ այն-
քան ընդհանրացաւ որ քրօնիկ հիւան-
դութիւն մը դաւձաւ ոչ միայն Սուրբոյ
այլ ամբողջ աշխարհին մէջ: Կ'երեւի
տակաւին մարդկութիւնը չէ հասկցած
ժամանակին յարգը որ այսպիսի պարագայ
խաղերով կը գրադի, փոխանակ աւելի
օգտակար բաներով զրադելու:

ԱՄԵՐԻԿԱՅԻ մէջ ալ խոշոր նաւ մը
կառուցանելու վրայ են, որ իր տեսա-
կին մէջ միակը պիտի ըլլայ: Պիտի
ունենայ 300 մէթր երկայնութիւն:
Մէջի աշխատանքներուն թիւը պիտի
ըլլայ 2000 և ճամբորդներունը 5000:
Ինչ որ սերմանաւորան Ֆրանսացիներ
ունեն հզաւ, նոյնը պիտի ըլլայ այս նա-
ւը Ամերիկացիներուն:

ՄԻԱՏԵՍԻՆ ՆԱՀԱՆԴԱՑ Քլիֆօրնա
քաղաքին մէջ նորօրինակ տուն մը
կառուցուեցաւ: Յախճապակի - պող-
պատէ շինուած է այս տունը, որ ոնէ
մնակավայրէ մը աւելի գեղեցիկ, ճաշ-
կաւոր, մաքուր, հաստատուն և աժան
է: Միայն 1500 տոլար ծախս եղած է
այս տան համար: Այնպէս կը կարծուի
թէ այս տեսակ տուններ պիտի ընդհան-
րանան ո'չ միայն Միաց. Նահանգաց'
այլ ամբողջ աշխարհի մէջ իր ունեցած
յարմարութիւններուն համար:

ՄԻԱՅՆ ԴԵՂԵՐՈՒ Կամար Ամերի-
կայի տարեկան ծախսը եղած է 715 մի-
լիոն տոլար կամ իւրաքանչիւր անհա-
տի համար վեց տոլար: Այս թիւը
ցոյց կ'ուտայ բժշկութեան անհախըն-
թաց յառաջդիմութիւնը և հիւանդաւ-
թեանց աճումը:

Հաւաքեց Յ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈԹԵՐ

Հստ Ամերիկեան Ֆեֆերը Րիզըրվ
Պոնթի, Աշխարհիս դրամատուներու

ոսկիի պահեստը Սեպտեմբերին հասած
է 11,760 միլիոն տոլարի: Պատճա-
ռը ոսկեհանքերէ և Հնդկաստանէն
ոսկիի ներխուժումն է դէպի Եւրոպա-
կան ոստանները: Վերոյիշեալ Ամերիկ
եան դրամատուն ոսկիի պահեստը Հոկ-
տեմբերին հասած է 2,992,923,000 ի:

ՆԻԻ ԵՈՐԲ ՀԷՐԱՆՏԻ տուած տեղե-
կութեան համեմատ այս տարի բաւ-
պակի, թէյի և հացահատիկի գիները
ինկած են Միաց. Նահանգաց մէջ, ուր
նոյն բերքերը այս տարի անցեալ տար-
ուէնէ շատ աւելի եղած են:

Ուրախալի լուր մըն է թէ Ֆրանսա-
յի և Միացեալ Նահանգաց անգործնե-
րու թիւը նուազած է:

ԱՅՍ ՏԱՐԻ, օտար թերթեր տնտե-
սական աշխարհը վերականգնումի ճամ-
բուն վրայ ցոյց կուտան: Անցեալ
տարուան անկարգութեանց հապիւ հին-
գէն երեքը պատահած են: Դրամա-
տուներու անանկութեան մասին այլ-
ևս չենք լսիր կամ չենք կարգար:
Դարձեալ անձնասպաններու թիւը պակ-
սած է: Վերջապէս տնտեսական հորի-
զոնի վրայ մութ ամպերու փարատիլը
արեւոտ օրուան մը նախանշանն է:

ԳԵՐՄԱՆ Մետաղի գործաւորներու
Միութիւնը ունի 826,000 անդամներ:
Միութեան կողմէ հրատարակուած տե-
ղակագրի մը համաձայն 1929ի մէջ 13
միլիոն 400 հազար թոն երկաթ, և 16
միլիոն 200 հազար թոն պողպատ ար-
տադրուած են, իսկ 1931ի միջոցին՝
միայն 6 միլիոն 100 հազար թոն երկաթ
և 8 միլիոն 300 հազար թոն պողպատ:
Անդամներուն հարիւրէն 33.4ը երբեք
չէ աշխատած, հարիւրին 37.3ը լման
աշխատած և հարիւրէն 29.3 մասամբ
աշխատած: Միութիւնը իր կարօտ ան-
դամներուն 7 միլիոն 625 տոլար ծախ-
սած է:

ՆԻԻ ԵՈՐԲԻ մէջ կարգ մը բժիշկներ
անգործութեան պատճառաւ օթոյի

վարիչ եղած են, իսկ կարգ մը ուրիշներ ալ ապահովագրութեան գործակալներ:

Հիթլէրի անձնական տարեկան եկամուտն է 114,260 տուար, զոր կը ըստանայ սա կերպով. — Նազի հրատարակութեան հասոյթ՝ 60,000 տուար, իր հաւաքոյթներուն համար մուտքի տուրք, 50,000 տուար, իբր իր կուսակցութեան պէտ իր թոշակը, 8000 տուար, իբր Պրուստիքի պատուիրակութեան քարտուղար 1260 տուար: Ասոնցմէ վատ Զուիցերիոյ մէջ 760,000 տուար պահեստի գումար ունի:

ԲՐԻՏԱՆԻՈՅ մէջ 1913ին 46,133 մարդիկ դիմած են զինուորագրուելու և 12277ը մերժուած են: 1931ին, դիմած են 82682 և մերժուած են 42000 են աւելին: անօթութիւնը երիտասարդութեան մարմինը կործանած է:

ՖՐԱՆՍԱՅԻ մէջ ռազմամթերքի մեծագոյն գործարանի տէրէրը, Շնայտըր—Քրէօգօ ծառնէն մեծ ազգայնաբ մը ընդունելով 50000 նոր գործաւորներ աւելցուցած են:

ԱՆԳՈՐԾՆԵՐՈՒ ԹԻՒՐ ՍԵՎԻ մէջ. —

	1932	1931
Գերմանիա	3,281,000	4,214,765
Մեծն Բրիտանիա	2,946,808	2,818,163
Իտալիա	964,509	663,352
Ճաբոն	483,109	401,415
Չէխո-Սլովաքիա	459,406	215,040
Պելճիգա	341,826	167,289
Ֆրանսա	269,479	54,569
Հոլանտա	161,029	70,479

ԹՈՐՈՆԹՕ քաղաքին մէջ Գանատայի մէջ ելեկտրական լոյսի բաշխման բոլոր օրօթէ մը քաղաքին կը պատկանի, ելեկտրական հոսանքը Օնթարիոյէն ծախու կ'առնէ և իր քաղաքացիներուն կը ծախէ ինքաքանչիւր քիլովատ ժամը երկու քաւէս զրչ տուրիի նման շատ ցած գինով մը: Եւ սակայն իր ծախքերը ընելէ հոգը չաճած է 233720 տուար: Մ. Նահանգաց մէջ իւրաքանչիւր քի-

լովատի գինը միջին հաշուով 7 օէնթ կամ 9 զրոչ տուրի է, Հալէպի մէջ տարեալատիկն է:

ՄԻՍՏԵՍԼ Նահանգներու մէջ 40 միլիոն մարդիկ առողջապահական պայմաններու և գործելու կարող վիճակի համար պէտք եղած նուազագոյն մակարդակէն վար կ'ապրին:

ԱՅՈՎԱՅԻ մէջ (Մ. Նահանգներ) երկրպագործնի գինը այնչափ ինկած է Այովայի պետական գօլէճի ճարտարագէտներուն հաշիւին համեմատ ապարակապանները իբր վառելիք կրնան երկրպագործնը գործածել: քանզի ան հանքածուխի չափ արժան է:

ԱԼԷԻՍՈՒՆԻԹԻ կառավարութիւնը որոշած է ելեկտրական լոյսով լուսաւորել Նաթկիլիք, Սօգուգ-օլուգ, Աթըզ, Պէյլան ու Գըրըզլան աւանները: Ալէքսանդրէթի Ընկերութիւնը պիտի հայթայթէ պէտք եղած ելեկտրական ոյժը՝ կը գրէ Լը գուրիէ Սիրի թերթը:

ԼԸ ԳՈՒՐԻԷ տը ՍԻՐԻ տեղեկանալ կը կարծէ թէ Սուրիոյ եւ Լիբանանի երկաթուղիի ֆրանսական ընկերութիւնը Պալատտի գիծը չահագործելու համար պիտի կազմէ ֆրանսական եւ ֆրանգօ—թրքական ընկերութիւնները: Այդ պարագային կը մտադրուի Հալէպի մէջ միայն մէկ կայայարան պահել եւ Դամասկոսի կայարանը գոցել:

ՍՈՒՐԻՈՅ եւ մանաւանդ հիւսիսային մասին մէջ տնտեսական տագնապը սոստիկ հանգամանք մը կը ստանայ տիրող տնտեսութեան երաշտութեան համար, հոռնձքը եւ արջառը մանաւանդ ոչխարներն ու այծերը փճանալու եւ բնակչութեան ստուար մէկ մասին տնտեսական կեանքն ալ փճացնելու վրայ է: Քաղաքներէն զուրս գիւղացիներու և խաշնարած Պէտէվիներու կեանքին մասին սրտաճմլիկ լուրիք կը հասնին: Այս կացութիւնը իր ահաւոր աղքատութիւնը պէսած է ցուցնել քաղքենիներու վրայ:

ՍԵԼԱՆԻԿԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Սելանիկի Հայ գաղութը, բարձրորէն գնահատելով, Շուէտական Կանանց մի-սիոնարական ընկերակցութեան ներկա-յացուցիչ Օր. Ա. Եոհանսընի երեսուն տարին երէ իվեր մեր ազգին մատուցած թանկագին ծառայութիւնն երբ, իր ան-կեղծ յարգանքը եւ խոր երախտագի-տութիւնը յայտնելու համար հաճելի պատեհութիւն մը նկատեց իր ծննդեան տարեդարձի ամիսը:

Հոգաբարձութեանց բարի նախաձեռ-նութեամբ արժանաւայել կերպով տօն-ուհեաւ անոր երեսնամեայ անգիւն ծա-ռայութեան Յորեկանը, տեղւոյս Ամե-րիկեան Աղջկանց Գոլէճին մէջ, խուռն բազմութեան մը մասնակցութեամբ:

Բացման խօսքէ վերջ եղան աւուր պատշաճի ուղեբձնեմ, նուազ եւ մե-նեբզ, դաշնակի ընկերակցութեամբ: Օր. Եոհանսընի երեսնամեայ բեղուն գործունէութեան ամփոփ վերլուծումը ըրաւ սորազրորը:

Այս աթիւ օրերորդին նուիրուեցաւ որպէս միայուն յիշատակ Ազգային հո-գաբարձութեանց կողմէ գողտրիկ քր-ծաթեայ չըջանակ մը, իսկ Աւետարա-նական եկեղեցւոյ կողմէ վեց հատ ըն-տիր արծաթեայ դգալներ, որոնքն ալ մէյ-մէկ ծաղկեփռնջերով միաւեղ:

Վերջերս, Վեր. Պրուսթըր ալցելած է Մակեդոնիոյ եկեղեցիները եւ քարո-զած զանազան տեղեր: Մեր եկեղեցի-ին մէջ սպասարկեց հաղորդութեան Սր. Սեղանին, ժողովուրդին սրտաբուշխ եւ գործնական պատգամ մը տալէ վերջ:

Մր. Կէչըլ եւ Տոթ. Կօլտշթայն քա-րոզած են, ու քաջալերելով շնորհաւո-րած են եկեղեցին իր ներկայ գործօն Կեանքին համար եւ թիւյզբաժն են թէ եկեղեցիին կոչումն է Սելանիկի մէջ ըլլալ ազաւ լոյս:

Տեղւոյս Հայ-Աւետարանական հա-

մայնքը, որ Թուրքիոյ 34 տարբեր վայ-րերէն հաւաքուած է, շուրջ հարիւրըն-տանիքէ կը բաղկանայ: Ասոնք տարի-ներէ իվեր փափաքած են ձեռնարկել եկեղեցւոյ մը կառուցման:

Եկեղեցիիս բարեկամ պաշտօնական անձերու եւ մարմիններու սիրայօժար աջակցութեամբ կապուած շէնքի յանձնախումբը արդէն իսկ յաջող գոր-ծունէութիւն մը ունեցած է:

Շէնքի յանձնախումբը յետ քննու-թեան եզրակացուցած է թէ, յարմար ազօթատեղի մը գնելու համար նուա-զագոյն 3500 տոլար պէտք է:

Այս գումարին որոնու հազարը խօս-տացուած եւ ապահովուած է, որ մեզի պիտի վճարուի այն տտին երբ եկեղե-ցին մնացեալ հազար հինգ հարիւր տո-լարը հանգանակէ:

Սելանիկի Հայ Աւետարանական գաղթական համայնքը, ի պին մեծ գո-հողութիւններու, յանձնախումբին յանձնեց մինչեւ հիմա 45 հազար տը-րախմի:

Այս ձեռնարկը յաջողցնելու համար, սակայն պէտք կայ նիւթական օգնու-թեան:

Ուստի մեր եղբայրական եւ սրտազին կոչով կը դիմենք Աստուծոյ Թագաւո-րութեան լայնօրէն տարածման եւ նոր սերունդի դաստիարակութեան յառա-ջացման համար փափաքող բոլոր Գրիս-տոսասէր անձնաւորութեանց որ բարե-հաճին մեզի օժանդակել իրենց ազօթ-ներովն ու նիւթական նպաստներով:

Կը խնդրինք բոլոր նուիրատուներէն որ հաճին իրենց նուէրները զրկել հե-տեալ հասցէներէն մէկուն—

Mr. D. K. Getchel, Anatolia College
Gharilaos, - Salonica Greece

կամ

Rev. G. S. Faradjian P. O. Box. 34
Salonica Greece

Սելանիկ

Կ. Ս. ՖԱՐԱԺԻԱՆ

ՏԻԿԻՆ ԵՍԹԵՐ ՀԱՅՏՈՍԹԵԱՆ

Տիկ. Եսթեր Հայաստանի իշխանական հանգիստը մտաւ հոկտ. 19 Զարեքշաբթի, սուգի մէջ թողնով իր սիրելիներն ու բարեկամները: Անոր մահով՝ Հալէպի Հայ Աւետ. եկեղեցիները և մասնաւորապէս Բեթէլ եկեղեցին կը կորսնցնէ Բրիտանի հաւատարմ և օգտակար ծառայ մը:

Հինգշաբթի օր, յաղարկաւորութեան արտոգութեանը կատարուեցաւ Բեթէլ եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան ազակիր բարեկամներու խումբ մը: Այս ախոյր անթիւ խօսեցան Վեր. Կ. Բէթլէնճեան, Վեր. Ս. Ալպապիան և այս տողերը գրողը. իսկ գերեզմանատան մէջ խօսեցան Վեր. Ս. Մանուկեան և Օր. Պիւլ:

Ողբացեալ Տիկ. Եսթեր վիրաբուժական գործողութեան մը ենթարկուած էր 7 տարի առաջ, և հրաշալիօրէն ազատուած ստոյգ մահուան ճիւղաներէն: Յորմէհեան, իր մարմինը տոնն տաին կը տանջուէր տնտանիկի ցաւերէն, արգիւնք այն գործողութեան: Դժբախտաբար մենք Տիկ. Եսթերը ճանչցանք զառն պայմաններու տակ, երբ նա գերմարդկային ոյժերով հերոսաբար կը կռուէր անգութ գալարումներուն դէմ: Անհանգուրժիկի ցաւեր՝ որոնք փորձաքարերն են ներքին մալգուն, ի յայտ բերին Տիկ. Եսթերի ինքնութիւնը: Տակաւին անոր հոգեւոր կեանքի պատմութիւնը լսելու պատենութիւնը չունեցած, դիւրաւ հասկցանք թէ անկա իսլաքէն ծնած ու անոր պորութիւնով սնած հաւատարմ զինուոր մըն է: Ուրովհետեւ, ան ոգոք հիւանդութեան պատճառաւ, կմախքի դարձած տկար մարմինի մը տեղ որոշ կը նշմարուէր անոր հաւատքի վորութիւնը, հոգեւոր աշխուրդութիւնը եւ իր քրիստոնէական նշխարներին մաքրութիւնը: Անիկա յա-

ճախ իր ցաւերը մոռցած՝ կը հետաքրքրուէր եկեղեցիի իրական հոգեւոր շահերով: Եկեղեցին՝ իր «աչքին բիրն» էր: Այս հղաւ անոր մեզի ներշնչած համառօտ պատգամը. «Թէպէտ մեռաւ բայց տակաւին կը խօսի»: «Երանելի են այն մեռելները որոնք Տէրովմով կը ննջեն... ու իրենց գործերը իրենց հոնէն կ'երթան»:

Աստուածային մխիթարութիւն կը մաղթենք իր սիրելիներուն:

Ն. Ս. ՍԱՐԵԱՆ

ՀԵՏԵՒԵԱԼ Նոյ. 5 թուակիր բաց նաւակը Լոս Անկէլէսէն ղրկուած է մեզի հրատարակուելու համար:—

Տէր Խմբագիր,

Այնթապի Ամերիկեան Աղջկանց Սէմինարիի Հալէպ գտնուող Ուսումնաւարտից Միութեան փափագին համաձայն, 1930 ի դաբունը, Լոս Անկէլէս, Փետրուար, Վէն Նայդ բնակող յիշեալ դպրոցին ուսումնաւարտուհիներն ու կիսաւարտ շակերտուհիները Տիկ. Եսթեր Ալճեանի ատենապետութեամբ մասնաճիւղ մը կազմեցին: Այդ օրէն իմիւր Հալէպ դռնունդ վարչութեան հետ թղթակցութիւնը շարունակած է: 1930 ի Օգոստոսին գանձապան Տիկ. Էլիզա Այնթապի ի միջոցաւ 25 տալարնոց փոխգիր մը վարչութեան ղրկուած է: 1931 ի Հոկտեմբերին 17 տալարնոց փոխգիր մը ղրկուած է քնդունակ բայց կարօտ աղջկան մը Սէմինարիի մէջ դպրոցական ծախքը հոգալու համար: Ապա Տիկ. Եսթեր Սարգիսեանի Լոս Անկէլէսի այցելութեան առթիւ իրեն յանձնուած է չորս տալարնոց նուէր մը Ուսումնաւարտից Միութեան հիմնադրամին վրայ բարգոյնելու համար, իբրոյ անուանական տալարնալի պատճառաւ գրամ ղրկել զժողովրդաց, այսուհետեւ դերձ 10 տալար պատրաստ գումար մ'ունինք, զոր ղրկելու համար Հալէպէն նախկին կը օգտուենք որպէսզի

անոնց որոշումին համեմատ երիտասարդունի մը գպրոցական ծախքին օգնենք՝ կը մնամ յարգանքներով

Աստուծոյ գրուհի
ՄԱՐԻԱՄ ԹՈՓԱԼԵԱՆ

ՎԵՐ. Կ. ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ, հիւսիսային Սուրիոյ ընդհանուր աւետարանիչը, երկու աւետարանչական պտոյտներ կատարած է։ Առաջինը Հոկ. 5-31ի միջոցին, Քէսապի և Սուէյտիէի գիւղերը և Ճառագլուս, երկրորդը Նոյ. 8-Դեկ. 26ի միջոցին Ալեքսանդրէի շրջանին չորս եկեղեցիներուն մէջ։ Այս երկու պտոյտներուն առթիւ կատարած է 26 մանուկներու մկրտութիւնը, մէկ անդամ Ս. Հաղորդութեան արարողութիւնը, առաջնորդած է 24 աղօթածողութիւնը և քարոզած է 19 անգամ և այցելած է 113 տունները։

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԹԻ ԵԿԵՂԵՑԻՆ շինած է գպրոցի շէնք մը, կիներու համար սրահ մը, և սկսած է գեղեցիկ եկեղեցական շէնքի մը կառուցման, ընդամենը գիւղացիներ մը վրայ, եկեղեցիին շէնքը գնանէն մէկուկէս մէկը վեր բարձրացած է արդէն։

ՄԵԶԻ ԵԿԱՄ Գրութենէ մը կը հասկնանք թէ՛ Վեր. Ս. Ս. Մանուկեան և Պատ. Ա. Հատիտեան այցելած են Ճառագլուս, Արար-Փռնար և Ասլանթաշ։

Ներկայիս Արար-Փռնար կան շուրջ երեք հարիւր տուն հայութիւն մը, որոնց մօտաւորապէս երեսուն տունը քրդերէն կը խօսին։ Հոգ նորահասաւտ եկեղեցւոյ մէջ կ'աշխատի Տէր Ստեփան քահանայն։ 180 երկսեռ աշակերտութիւն մը կայ գպրոցին մէջ. տնօրէնն է Տիար Շաւարշ, իսկ թւսուցիչներ՝ Տիար Յակոբ Բէնտիրճեան (Հալէպ Ամերիկեան Գոլէճէն շրջանաւարտ) և երկու Օրիորդներ։ Օժանդակ Կարմիր Քաշէն տարեկան շօշափելի գումար մը յատկացուած է գպրոցին։ Շուրջ տասը տուն

Հայ Աւետարանականներ կան։ Տուն մը հաւաքուած բազմութեան Վեր. Ս. Մանուկեան և Տէր Ստեփան քահանայն խօսած են։

Ճառագլուսի մէջ Տէր Արսէն Վարդապետին ջանքերովը երեք հարիւր հընչուն Օսմ. ոսկիի արժողութեամբ շինուած Աստուածածին եկեղեցւոյ օծումին առթիւ Գեր. Արտաւազգ Եպիսկոպոս Սիրմէեան և Վեր. Ս. Ս. Մանուկեան խօսած են։

ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ Նոյ. 22-Դեկ. 16 ի միջոցին նաեւ աւետարանչական պտոյտ մը կատարած է Սէլիմիէ, Ջահլէ, Բայաք, Շամապա Տրուկիներու երկրին մէջ Տրապիզոն, Էրզրա, Սուէյտա և ապա Պաալպէքի ճամբով եկած Հալէպ։

Տ. ԲԱՐԳԷՆ Ս. Կաթողիկոս Ծպիպտոս մեկնած է Տիար Կարապետ Մելքոնեանի յայտնելու հրախտադրական զգացումներ անոր ազգին մատուցած նիւթական աղնիւ օժանդակութեանց համար։

ԼՈՆՏՈՆ գոհաբանական հանդէս մը եղած է, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան առթիւ, ներկայութեամբ քրիստոնեայ յարանուանութեանց ներկայացուցիչներու։

ՍԼԻՎԷԷՆ Տիար Ս. Տ. Ունճեան 5000 լէվա զրկած է Սօփիա, երկու ազգատ ընտանիքներու Հայաստան գաղթման առթիւ, բարեկամի մը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ներկայ բամպակի ցանքային տարածութիւնն է 30,000 հէքեր։ 1982ին հոն աշակերտութեան թիւը 216,700 հոգի եղած է։

ՏՈՒՐԻԱ ԼՈՐԻՍ ՄԱՀԷՐ՝ հայազգի Սուրիայի նշանաւոր բժշկուհին Հօկտ. 19ին Դամասկոսի Կանանց Ժողովին մէջ խօսած է ռիսկոյն կիները յետամնացութենէ փրկելու նիւթին շուրջ նշանակալից ճառ մը։

ԹԱՅՏՆԻ նկարիչ Յովսէփ Փռնմանի վերջերս նիւ Երթ ցուցադրած 16 նը-

կարները, նկարահաւաքներու կողմէ գնուած են:

ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅԵՐ 12000 լէվա նուիրած են ի նպաստ ներգաղթի ֆոնտին:

ՏԻԱՐ ՅՈՎԱԿԻՓ Մատաթ՝ Հնդկահայ մը 10,000 բուպի տրամադրած է նոր Զուղայի երիտասարդութեան՝ մարզագալտի մը գնման համար:

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ կը շինուի «Պապայթ» ի գործարանը ուր մօտ ատենէն յառաջ պիտի բերէ սոսկալի տաքութեան գիւմացող անօթներ և շէնքերու արտաքին

երևոյթին յարգարման ծառայող թափանցիկ ճինապակիներ և քարեր:

ԹԱՅՏՆԻ Հայ գրագէտ—պատմաբան Լէոյի մահը՝ Հայաստանի մէջ համագալին սուգի հանգամանքը առած է, եւ թաղման հանդէսը համաժողովրդային և կառավարական պատիւներով կատարուած է:

ՄՈՍԿՈՒԱՅԻ գրական կազմակերպութիւնները Հայ գրագիտուհի Մ. Շահինեանի 25 ամեայ յորեկինական հանգէսը կատարած են:

ԱՊՄԵՆԻՐԱԻԿԱԵՆ՝ԱԷՆ Պատրաստուէ Զմեռուան Դէմ

Հոգ տար դուն քեզի եւ ընտանիքիդ, կարելի եղածին չափ առողջ եւ տկուն պահէ մարմինդ.

Զմեռուան յանկարծակի հիւանդութեանց կարենալ դիմադրելու համար զօրացուր մարմնոյդ մէկն մի դուրսիւնը՝

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԶՈՒՏ ԵՒ ԹԱՐՄ ԶԿԱՆ ԻՒՂՈՎ

որ հիշես նոր ժամանած է Նէյյալ փողոց՝

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՂԱՐԱՆԸ

Ուր կրնան նաւ բոլոր դեղագիրքերդ պատասել խղմսօրէն եւ կատարելապէս բժշկիդ յանձնարարութեանց համաձայն:

ՄԱՔՈՒՐ ԵՒ ԹԱՐՄ ԶԿԱՆ ԻՒՂ ՍՏԱՆԱԼՈՒ
ԵՒ

ԱՌԱՋԻՆ ԴԵՂԱԴԻՐԴ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՏԱԼՈՒ՝

ՄԻ ՎԱՐԱՆԻՐ, ՄԵՋԻ ԴԻՄԷ

ԴԵՂԱԳՈՐԾ Լ. ՀԷՔԻՄԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

ՆԷՅՅԱԼ ՓՈՂՈՑ, ՇԱԼԷՊ

صاحب الابتزاز والمهمل المحتول القسر ق. حارون محمد

